





**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

# Նոր Տարին Կը Դիմաւորենք Սգաւոր Ու Վիրաւոր

2020 տարուայ սկզբնաւորութեան մեր բարեմաղթանքները ոչ միայն չիրականացան, ընդհակառակը մարդկութիւնը ապրեցաւ ահաւոր ծանր ու տագնապալի օրեր, իսկ Հայութիւնը բոլորեց դժբախտութիւններու ու կորուստներու տարի մը:

Տարին սկսաւ Չինաստանի Ուհան մահացի մէջ յայտնաբերուած ժահրի մը մասին լուրերով, որ սկզբնական շրջանին անտեսուեցաւ այլ երկիրներու կողմէ: Շատ չանցած համաճարակը պատեց ամբողջ աշխարհը՝ վարակելով 60 միլիոն երկրագունդի բնակիչներ ու խլելով մօտ երկու միլիոն մարդկային կեանքեր: Որպէս արդիւնք, աշխարհի տնտեսութիւնը հասաւ քայքայման եզրին ու մարդիկ մատնուեցան աղքատութեան: Գիտութիւնը գործի անցնելով կարողացաւ մրցանիշային ժամանակուայմէջ գտնել ժահրի դէմ պատուաստը, յոյսի նշոյլներ տալով, որ յառաջիկայ ամիսներուն կամաց-կամաց պիտի կարողանանք վերադառնալ մեր բնականոն կեանքին:

Համաճարակը չխնայեց նաեւ Հայաստանը ու մեր ժողովուրդը մատնուեցաւ առողջապահական, տնտեսական ու ընկերային բազում դժուարութիւններու, որոնք կը շարունակուին տակաւին:

Սփիւռքի տարածքին կանգ առաւ մեր ազգային կեանքը ու փակուեցան ու անգործութեան մատնուեցան կրթական, մշակութային, մարզական ու եկեղեցական հաստատութիւնները, կրելով նիւթական մեծ վնասներ:

Այս բոլոր դժուարութիւնները սկսած էինք ձեռով մը յաղթահարուիլ երբ Հայութեան պարտադրուեցաւ նոր պատերազմի մը արհաւիրքը: Ատրպէյճանի բանակը, մեր դարաւոր թշնամի՝ Թուրքիոյ օժանդակութեան լայնածաւալ յարձակում գործեց Արցախեան Հայրենիքի ուղղութեամբ: 44 օրուայ դաժան մարտերէն ետք, մեզի պարտադրուեցաւ ստորագրել զինադադարի համաձայնագիր մը, որ համազօր էր պարտութեան: Ձիջեցանք Արցախի հողերու մեծ մասը ու տասնեակ հազարաւոր մեր հայրենակիցներ դարձան գաղթական ու անտուն: Կորսնցուցինք երիտասարդ զինուորներու ամբողջ սերունդ մը, որոնք նահատակուեցան պաշտպանելով հայրենի հողը:

Պատերազմի աւարտին ալեկոծուեցաւ Հայաստանի ներքին կեանքը ու պառակտուեցաւ հասարակութիւնը: Քաւութեան նոխազ դարձաւ երկրի ղեկավարը, որուն հազցուեցաւ «դաւաճանի» պատմութեամբ: Հրաժարականի, իշխանափոխութեան ու բռնութիւններու կոչեր սկսան հնչել բոլոր անոնց կողմէ, որոնք քսան տարի անտեսած էին բանակաշինութեան գործը՝ վազելով սեփական հարստութիւն դիզելու ետեւէն: Հայաստանի քաղաքացիները գիտակցելով պատերազմի ընթացքին կրած պարտութեան մէջ իւրաքանչիւրի պատասխանատուութեան չափաբաժինը, ընթացք չտուաւ այդ կոչերուն, նախընտրելով սպասել պատեհ առիթի, երբ առիթ կ'ունենայ իրենց կամ արտահերթ ընտրութիւններու միջոցաւ կայացնելու իրենց որոշումը ու արտայայտելու՝ ազատ կամքը:

Միջին Արեւելքի մեր համայնքները ու յատկապէս լիբանանահայութիւնը ենթարկուեցաւ մեծ ցնցումներու: Երկրի դիմագրաւած ծանր տագնապներուն վրայ եկաւ աւելնալու ահաւոր պայթում մը, որ կործանեց մայրաքաղաք Պէյրութը, ներառեալ հայկական թաղամասերն ու հաստատութիւնները: Հայաստանամերձ մեր գաղութները, որոնք կը նկատուէին սփիւռքի բաբախող սիրտը, շարունակեցին նօսրանալ քանակով ու որակով ու սփիւռքի ծանրութեան կեդրոնը սկսաւ փոխադրուիլ աւելի հեռաւոր երկիրներ, ուր ձուլուին եւ ուժացման վտանգը շատ աւելի մեծ է:

Տագնապալի օրեր ապրեցաւ նաեւ Միացեալ Նահանգները, ուր ընկերային արդարութեան պահանջով միլիոնաւոր երիտասարդներ փողոց դուրս եկան աւելի արդար հասարակարգի մը պահանջով: Համապետական ընտրութիւններուն պարտութիւն կրելով, գործող նախագահը մերժեց ընդունիլ իր պարտութիւնը ու դիմեց հակաօրինական եւ հակասահմանադրական բոլոր տեսակի հնարքներու՝ շրջելու ժողովուրդի կամքը ու մնալու աթոռին: Ամերիկան կորսնցուց ազատութեան ու ժողովրդավարութեան ոստանի իր համբաւը:

Սիւնապիկ, այսպիսի պայմաններու տակ հրաժեշտ կու տանք անցնող տարուան, որ աղետաբեր եղաւ յատկապէս Հայութեան համար: Սուզը պատեց մեր Հայրենիքը ու ժողովուրդը մատնեց յուսախաբութեան: Սակայն, ինչպէս եղած է մեր ամբողջ պատմութեան ընթացքին անգամ մը եւս պարտաւոր ենք մեր վերքերը դարմանելու ու դարձեալ ոտքի ելլելու:

Թող Նոր Տարին ըլլայ սկիզբ՝ Հայաստանը եւ Արցախը վերականգնելու, սփիւռքը համախմբելու եւ նայելու դէպի աւելի լուսաւոր ու փայլուն ապագայ մը:

## ՍԴՅԿ Կեդրոնական Վարչութիւնեան Ամանորեայ Մաղթանքի Խօսքը

Կը փակենք 2020 թուականի էջը, որ համայն մարդկութեան ու յատկապէս Հայ ժողովուրդին համար եղաւ աղետաբեր տարի մը: Հայաստանն ու Արցախը կ'ապրին ծանր ու դժուարին օրեր, իսկ Սփիւռքի մէջ հայութիւնը կը դիմագրաւէ նորանոր մարտահրաւերներ:

Համաճարակին դէմ պայքարը չաւարտած, Արցախը դարձաւ թիրախը՝ Ատրպէյճանա-թրքական յարձակման ու 44 օրեայ լայնածաւալ պատերազմի ընթացքին, հակառակ հայ զինուորի հերոսական դիմադրութեան, կրեցինք մեր պատմութեան վերջին հարիւրամեակի ամենէն ծանր պարտութիւնը, այդ ընթացքին տալով հազարաւոր զոհեր ու վիրաւորներ:

Այժմ կը գտնուինք մեր վերքերը ամոքելու, ժողովուրդի ու բանակի բարոյականը վերականգնելու եւ հայրենիքի կայունութիւնը ապահովելու հրամայականին առջեւ, իսկ այդ կը կարօտի ներքին համերաշխութեան ու համախմբուածութեան, որոնք դժբախտաբար կը բացակային այս օրերուն:

Մինչ Սուրիահայութիւնը տակաւին կը կրէ չաւարտած քաղաքացիական պատերազմի հետեւանքները, Լիբանանահայութիւնը ենթարկուեցաւ յաջորդական հարուածներու: Երկրի դիմագրաւած տնտեսական ծանր տագնապներուն վրայ եկաւ աւելնալու մայրաքաղաք Պէյրութի նաւահանգիստէն ներս պատահած հսկայ պայթումը, որ պատճառ դարձաւ մարդկային ու նիւթական ծանր կորուստներու: Մեծ վնասներ կրեցին մեր ազգային ու կրթական հաստատութիւնները, որոնք վերականգնումը կը կարօտի երկարամեայ աշխատանքի ու նիւթական միջոցներու:

Այսպիսի տագնապալի պայմաններու տակ է, որ կը դիմաւորենք նոր տարին, սակայն կը հաւատանք, որ մենք մեր մէջ ուժն ու վճռականութիւնը պիտի գտնենք յաղթահարելու մեր առջեւ ծառայած բազում մարտահրաւերները ու վերականգնելու մեր վիրաւոր արժանապատուութիւնը:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, ինչպէս իր 134-ամեայ հարուստ պատմութեան ընթացքին, կը շարունակէ մնալ Հայաստանի պետականութեան եւ ժողովուրդի կողքին ու պատրաստ է իր մասնակցութիւնը բերելու վերագարթնումի ու ազգային համերաշխութեան մթնոլորտ ստեղծելուն միտուած բոլոր նախաձեռնութիւններուն:

Տօնական այս օրերուն, անգամ մը եւս կը խոնարհինք մեր նահատակ զինուորներու յիշատակին առջեւ, կը մաղթենք մեր զերիներուն եւ անյետ կորածներուն շուտափոյթ վերադարձ եւ անոնց հարազատներուն՝ համբերութիւն, ուժ եւ կողով:

Նոր Տարուայ եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով կը շնորհաւորենք մեր բոլոր հայրենակիցներուն եւ կը յուսանք, որ 2021 թուականը կ'ըլլայ խաղաղութեան, առողջութեան եւ բարեբերութեան տարի մը:

ՍԴՅԿ Կեդրոնական Վարչութիւն  
01/01/2021

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

### MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party  
of Western USA

1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

# Վարչապետ Նիկոլ Փաշինյանի Շնորհաւորական Ուղերձը Ամանորի Եւ Սուրբ Ծննդեան Տօներուն Առթիւ

Մի րեւի ժողովուրդ, սիրելի հայերենակիցներ՝ Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում:

Նոյնիսկ դժուար է հաւատալ, որ ընդամենը ընթացիկ են մնացել 2020 թուականի աւարտին: Աւարտուած է մի տարի, որի դառնութիւնը դեռ երկար կ'ուղեկցի մեզ: Ծանր հետեւանքներով պատերազմ, կորոնավիրուսի համավարակ՝ այս հանգրուաններով կը յիշուի 2020 թուականը մեր ժողովրդի պատմութեան մէջ:

Ամանորեայ երեկոյին մեր սրտերն ու մտքերը մեր նահատակների՝ պատերազմի ընթացքում, պատերազմի հետեւանքով զոհուած մեր եղբայրների եւ քոյրերի ընտանիքների հետ են: Նրանց երեխաների, մայրերի, հայրերի, կանանց, ամուսինների, եղբայրների եւ քոյրերի:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը մեր անհետ կորած զինուորների, ընտանիքների հետ են՝ նրանց երեխաների, մայրերի, հայրերի, կանանց, եղբայրների եւ քոյրերի:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը մեր գերեզմարուած հայրենակիցների ընտանիքների հետ են՝ նրանց երեխաների, մայրերի, հայրերի, կանանց, եղբայրների եւ քոյրերի:

Այս ընթացքում նրանցից շատերի հետ հանդիպելու, շփուելու առիթ եմ ունեցել ու պիտի ասեմ՝ սա այն դէպքն է, երբ վիշտը մարդկանց դարձնում է մօտիկ ու հարազատ: 2020 թուականի աւարտին մենք, ցաօք, դեռեւս չենք հասցրել պարզել մեր բոլոր անհետ կորածների ճակատագիրը, չենք կարողացել վերադարձնել մեր բոլոր գերիներին, եւ ուզում եմ բոլորի ընտանիքներից ներողութիւն խնդրել այս իրավիճակի համար, առանց խօսելու պատճառների մասին, որովհետեւ ամանորեայ ուղերձը գործնական մանրամասների քննարկման պատեհ հարթակ չէ:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը մարտական հերթապահութեան մէջ գտնուող մեր զինուորների, սպաների, գեներալների՝ մեր բանակի, մեր սահմանապահների հետ են, ովքեր հերոսական ջանքեր են գործադրում ետպատերազմական իրավիճակը կայունացնելու եւ անվտանգութեան զգացողութիւնը վերականգնելու համար:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը ոստիկանութեան ու անվտանգութեան մարմինների աշխատողների հետ են, ովքեր օրնիբուն ապահովում են անվտանգութիւնն ու հասարակական կարգը Հայաստանի Հանրապետութիւնում:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը մեր բժիշկների, բուժաշխատողների հետ են, ովքեր հերոսական պայքար էին մղում եւ շարունակում են մղել կորոնավիրուսի համավարակի դէմ, եւ պատերազմի ալիքը պայքարի երկրորդ ճակատ բացեց նրանց համար եւ նոյնքան հերոսական աշխատանքի շնորհիւ մեր բժիշկները մեր վիրաւորների հազարաւոր կեանքեր փրկեցին:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը պատերազմի ընթացքում հաշմանդամութիւն ձեռք բերած մեր զինծառայողների, քաղաքացիական անձանց հետ են, եւ ուզում եմ յատկապէս նրանց ասել՝ կեանքը չի աւարտուել, եւ դուք դեռ ձեր անձնական աւանդը կը բերէք Հայաստանի հզօրացման գործին:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը պատերազմից վերադարձած մեր եղբայրների ու քոյրերի հետ են, ովքեր մտքով հաստատապէս դեռ մարտի դաշտում են, նորովի են վերապրում առաջնագծում իրենց անցկացրած ամէն ընթացքն ու վայրկեանը:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը մեր այն հայրենակիցների հետ են, ովքեր պատերազմի բերումով գրկուել են օթեւանից, տնից: Կրկին նոյն պատճառով չեմ ուզում պատմել, թէ կառավարութիւնն ինչ միջոցներ է ձեռնարկել, ձեռնարկում եւ կը ձեռնարկի՝ նրանց խնդիրներին լուծում տալու համար: Ամէն անհրաժեշտը, ի հարկէ, կարուի:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը Արցախի մեր հայրենակիցների հետ են: Մեր սիրասուն Արցախը ապրում է հափազանց դժուար օրեր: Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ ուժերի ներկայութիւնն, ի հարկէ, անվտանգութեան հական երաշխիքներ է ստեղծում Արցախի մեր հայրենակիցների համար: Նաեւ՝ Արցախի կարգավիճակը մեզ համար շարունակում է մնալ բացարձակ առաջնահերթութիւն, եւ այս ուղղութեամբ քաղաքական, դիւանագիտական ջանքեր պիտի գործադրուեն շարունակաբար:

Ամանորեայ այս երեկոյին մեր սրտերն ու մտքերը Սփիւռքի մեր հայրենակիցների հետ են: Ձեր սէրն ու ամենօրեայ գորովանքը Արցախի ու Հայաստանի նկատմամբ զգալի է նոյնիսկ հազարաւոր կիլոմետրերից, եւ մեր ամբողջութիւնը որեւէ ձեւով չի կարող խաթարուել: Մենք բոլորս դա գիտենք:

Ամանորեայ այս երեկոյին, սակայն, մեր սրտերն ու մտքերը առաւելապէս մեր երեխաների հետ են, որոնք այս տարի գրկուեցին ամանորեայ հեքիաթից: Մեր ազգային մտածողութեան եւ մտածելակերպի մէջ երեխաներն ու նրանց ապագան ամենակարեւոր շարժառիթն են, եւ ես մտածում եմ, թէ, ի վերջոյ, ինչ պէտք է անենք մենք մեր երեխաների համար այս դժուարին իրավիճակում:

Նոյեմբերի 9-ի յայտարարութեամբ ռազմական լայնածաւալ գործողութիւնները դադարել են, բայց պատերազմն ունի ետցնումներ: Այդ ետցնումներն ունեն երբեմն մարտական, երբեմն բարոյական, երբեմն հոգեբանական, երբեմն քաղաքական բնոյթ, եւ մեր մեծագոյն խնդիրն այդ ետցնումներին դիմակայելն է, Հայաստանում, Արցախում, Հայաստանի եւ Արցախի շուրջ կայունութիւնն ապահովելը, այդ կայունութեան



ապահովման համար որոշումներ կայացնելը:

Այսօրուայ ընթացիկ խնդիրները կարգաւորելը եւ ըստ էության ապագայի կառուցման գործին լիարժէք տրուելը մեր մեծագոյն պարտքն է՝ մեր երեխաների, մեր հայրենիքի, մեր ժողովրդի առաջ: Ինչ ապագայ ենք մենք տեսնում մեր երկրի, մեր երեխաների, մեր ժողովրդի համար. սրանք հարցեր են, որոնք կարեւոր են ոչ միայն վաղուայ, այլեւ այսօրուայ խնդիրները լուծելու համար:

Մենք պէտք է Հայաստանը կառուցենք նորովի, մենք պէտք է Արցախը կառուցենք նորովի, մենք պէտք է մեր լաւատեսութիւնը կառուցենք նորովի, եւ ուզում եմ, որ 2021 թուականը սկսենք հէնց այսպիսի տրամադրութեամբ: Արցախի շուրջ, Հայաստանի շուրջ միջավայրը փոխուել է: Մեր կուրսն ու պայքարը նրա համար էր, որ միջավայրի նման փոփոխութիւն տեղի չունենայ:

Բայց այսօր կան իրողութիւններ, եւ մենք պիտի առերեսուենք այդ իրողութիւնների հետ, որովհետեւ իրավիճակը կառավարելու անհրաժեշտ նախապայման է սա: Քառուսի, խուճապի, վախի տրամաբանութիւնը պէտք է յաղթահարուի ըստ էության, ըստ էության պէտք է յաղթահարուեն բոլոր այն գործոնները, որոնք նպաստում են այսպիսի իրողութիւնների ծաւալմանը: 2021 թուականի առաջին իսկ ընթացքը պէտք է դառնան այն գրօական կէտը, որից մենք սկսում ենք մեր ազգային նոր վերելքը: Ինչ է հարկաւոր սրա համար:

Նախեւառաջ՝ անվտանգութեան նոր միջավայրի կահաւորում, որի կարեւորագոյն բաղադրիչ է բանակի բարեփոխումների մեկնարկը եւ մեր անվտանգային հիմնական գործընկերոջ՝ Ռուսաստանի հետ յարաբերութիւնների ամրապնդումը եւ այս համատեքստում անվտանգային նոր երաշխիքների ստեղծումը:

Յաջող կարեւորագոյն խնդիրը վստահելի դատական համակարգի հաստատումն է, որի բացակայութիւնը շարունակում է մեր երկրի առաջնային խնդիրներից մէկը մնալ եւ ուժգնացող մարտահրաւէր, այդ թւում՝ անվտանգութեան ոլորտում:

Կրթութեան ժամանակակից հայեցակարգերի ներդրումը եւ իւրաքանչիւր անհատի մրցունակութիւնը համաշխարհային ստանդարտներին համապատասխանեցնելը մեր յաջող մեծագոյն խնդիրն է, որը, ի վերջոյ, յանգեցնում է մեր հանրութեան մրցունակութեան հական մեծացմանը:

Եւ, ի վերջոյ, ժողովրդի իշխանութիւնը, այսինքն՝ ազատ կամարտայայտմամբ իշխանութիւն ձեւաւորելու ժողովրդի լիազօրութիւնը պէտք է ամէն օրուայ ու ժամուայ հետ աւելի ու աւելի ամրանայ, ու սա պիտի լինի անառարկելի եւ անսակարկելի իրողութիւն՝ բոլոր ժամանակների համար:

Մի րեւի հայրենակիցներ, սիրելի ժողովուրդ՝ Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում:

2021 թուականը մեզ համար պիտի դառնայ աշխատանքի տարի, ոչ թէ սովորական աշխատանքի, այլ ճգնաժամ տարի, որտեղ ստեղծելը, ստեղծագործելը, արդիւնք արարելը լինի մեզնից իւրաքանչիւրի անհատական, ապա նաեւ ազգային ու պետական խնդիրը: «Աշխատանք-կրթութիւն-աշխատանք» բանաձեւի վրայ է հիմնուելու մեր ազգային վերածնունդը, աշխատանքի, կրթութեան մէջ է վերստեղծուելու մեր լաւատեսութիւնը, աշխատանքի, կրթութեան ֆօսին է կառուցուելու մեր ազգային երջանկութիւնը:

Վշտի, անհանգստութեան այս դժուարին պահին, այո, մենք չպէտք է մոռանանք երջանկութեան մասին, մեր երեխաների, մեր սերունդների երջանկութեան մասին, որովհետեւ որեւէ ուրիշ նպատակ մեզ ապրելու այնքան ուժ չի տալիս, որքան մեր երեխաների երջանկութեան նպատակը: Եւ որպէսզի աւելի ու աւելի ուժեղ լինենք, մենք պիտի աւելի ու աւելի շատ երեխաներ ունենանք, բազմազաւակ ընտանիքը, որտեղ 4-5 երեխայ կայ, մեզանում պիտի դառնայ կանոն: Մայրութիւնը իսթանբուլ նորանոր պետական ծրագրեր պիտի իրագործենք 2021 թուականից, որովհետեւ հէնց ծնունդն ու մայրութիւնն են մեր կենսունակութեան ու հզօրութեան անհերքելի սիմուլը:

Եւ 2021 թուականի այս օրը Հայաստանում եւ Արցախում վառ կը լինեն բոլոր լոյսերը, կը փայլեն ու կը պսպղան տօնածառները, որը կը լինի մեր յարգանքի մեծագոյն տուրքը մեր բոլոր ժամանակների բոլոր նահատակներին, որը կը լինի մեր մեծագոյն ծառայութիւնը մեր մանուկների պայծառ ապագան կառուցելու մեր յանձնառութեանը:

Բարով ես գալիս 2021 թուական, եւ Սուրբ Ծննդեանը ընդառաջ՝ ուզում եմ քեզ դիմաւորել Նոր կտակարանի՝ Լեւոն քարոզի հետեւեալ խօսքերով.

- Երանի սգաւորներին, որովհետեւ նրանք պիտի մխիթարուեն:
  - Երանի նրանց, որ քաղցն ու ծարաւն ունեն արդարութեան, որովհետեւ նրանք պիտի յազնան:
  - Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն:
  - Երանի խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչուեն:
  - Երանի նրանց, որ հալածուած են արդարութեան համար, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը:
- Բարով եկար 2021 թուական: Մեր նոր դարաշրջանի մեկնարկի տարի: Մեր ազգային, պետական վերածննդի տարի: Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:



# Վերաքաղ՝ 2020 Թուականի Հայկական Տարին

Ատրպէյճանի Կողմէ Արցախի Դէմ Յարձակումը Ու Հայկական Կորուստները



Կիրակի, Սեպտեմբեր 27-ի առաւօտեան Ազերի-թրքական զինուած ուժերը լայնածաւալ յարձակում շղթայագերծեցին Արցախի Հանրապետութեան ամբողջ երկայնքով՝ բախուելով Հայկական բանակի ուժեղ դիմադրութեան:

Թշնամին իր գործողութիւնները սկսաւ ուժակոծելով Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը ու այլ բնակավայրեր, ուր արձանագրուեցան բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ:

Պատերազմի առաջին երեք օրերու ընթացքին թշնամիի բոլորը փորձերը՝ զինուորական արագ յաջողութիւններու հասնելու նպատակով մատնուեցան ձախողութեան եւ Հայոց բանակի զինուորներու մարտունակութեան շնորհիւ Ատրպէյճանի բանակը կրեց ծանր կորուստներ՝ մարդկային եւ զինատեսակներու առումով:

Պատերազմի առաջին ժամերէն սկսեալ Հայաստանի մէջ հաստատուեցաւ արտակարգ դրութիւն եւ զօրահաւաք: Իսկ տասնեակ հազար երիտասարդներ ու պատերազմի վեթերաններ սկսան արձանագրուել որպէս կամաւոր՝ Արցախ մեկնելու եւ Հայրենի հողը պաշտպանելու համար:

Աշխարհի բազմաթիւ երկիրներ ու միջազգային կառույցներ հանդէս եկան զինադադար հաստատելու յայտարարութիւններով, ի բացառեալ Թուրքիայէն, որուն ղեկավարները շարունակեցին խօսիլ ամէն ձեւով Ատրպէյճանին օգնութեան հասնելու պատրաստակամութեան մասին:

Զինադադարի երեք միջնորդութիւններ կատարուեցան՝ Ռուսաստանի, ապա Ֆրանսայի եւ վերջապէս Միացեալ Նահանգներու նախագահներուն կողմէ: Այդ փորձերը ձախողութեան մատնուեցան, երբ ատրպէյճանական կողմէ մերժեց յարգել գոյացած համաձայնութիւնները:

Երբ պատերազմը թեւակոխեց երկրորդ ամիսը, Ատրպէյճանի առաւելութիւնը աւելի ու աւելի զգալի դարձաւ, յատկապէս թուրք բարձրաստիճան զինուորականներու անմիջական մասնակցութեան շնորհիւ: Սուրիացի վարձկաններու մասնակցութեամբ թշնամին սկսաւ յառաջանալ՝ գրաւելով Արցախի շուրջ որոշ տարածքներ՝ հիւսիսային ու հարաւային կողմերէն:

Պատերազմի արդիւնքին վրայ վճռորոշ դեր ունեցան Ատրպէյճանի կողմէ իսրայէլական ու թրքական արտադրութեան ռազմական թուչող սարքերու արատ օգտագործումը:

Նոյեմբեր 9-ին, Ազերի զինեալներ անտառներու մէջէն մուտք գործեցին Շուշի՝ մօտենալով Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտին:

Նոյն օրը երեկոյեան, Սոչիի մէջ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները ստորագրեցին զինադադարի համաձայնագիր՝ Հայկական կողմին պարտադրելով մեծ զիջումներ:

Պատերազմական գօտի մուտք գործեցին Ռուս խաղաղապահներ, իսկ Արցախի շուրջ եօթը շրջանները անցան Ատրպէյճանի հսկողութեան տակ:

## Վարչապետ Փաշինեանի Հրաժարականը Պահանջող Շարժումը



Նոյեմբեր 9-ի յայտարարութենէն անմիջապէս ետք, Երեւանի մէջ ամբողջ ներխուժեց կառավարութեան եւ Ազգային ժողովի շէնքեր՝ հասցնելով նիւթական մեծ վնասներ: Ցուցարարներէն խումբ մը Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանին իր ինքնաշարժէն դուրս բերելով ծեծի ենթարկեցին: Ան ծանր վիճակի մէջ տեղափոխուեցաւ հիւանդանոց:

Յաջորդող օրերուն 17 ընդդիմադիր կուսակցութիւններու համախմբումը սկսաւ կազմակերպել վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականի պահանջով հանրահաւաքներ եւ ցույցեր:

Մեծ մասամբ նախկին իշխանաւորները ներկայացնող այդ ուժերու պահանջին միացան նաեւ Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ. եւ ուրիշներ:

Վարչապետի հրաժարականի պահանջը լայն արձագանք չգտաւ հասարակութեան մօտ եւ ընդդիմադիրներու բողոքի ցույցերը մնացին Հայաստանեան չափանիշերով՝ սակաւաթիւ: Այն տպաւորութիւնը ստեղծուեցաւ, որ Փաշինեանի կողմնակիցները աւելի շատ էին, քան անոր հրաժարականին կողմ եղողները:

Որոշ ժամանակ ետք, ընդդիմադրութեան կողմէ յայտարարուեցաւ «Ազգային ֆրկութեան Շարժումի» մը ստեղծումը եւ վարչապետի որպէս միասնական թեկնածու Վազգէն Մանուկեանի առաջադրումը:

Այս շարժումի բոլոր գործողութիւնները մնացին ապարդիւն: Զիրականացան ամբողջ Հայաստանով անհնազանդութիւն ծաւալելու եւ կամ ընդհանուր գործադուլ յայտարարելու կոչերը, որոնք անտեսուեցան ժողովուրդի կողմէ:

Փաշինեան մերժելով իր հրաժարականը պահանջողներու ներկայացուցած պայմանաժամերը յայտարարեց, որ Հայաստանը



**ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ.**  
**ՀԱՄԲԻԿ ԵՒ ՆԱԻՐԱ ՍԱՐԱՅԵԱՆ**




# Վերաքաղ՝ 2020 Թուականի Հայկական Տարին

տանի յաջորդ վարչապետը պիտի որոշուի բացառաբար ժողովուրդին կողմէ եւ հրաւիրեց քաղաքական բոլոր ուժերը՝ խորհրդակցութիւններ սկսելու արտահերթ ընտրութիւններ կայացնելու շուրջ:

## Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Յայտարարութիւնը Հայաստանի Սէջ Տիրող Իրավիճակներուն Շուրջ

Դեկտեմբեր 11-ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան հանդէս եկաւ հերթական յայտարարութեամբ՝ Կուսակցութեան մտահոգութիւնները յայտնելով պատերազմէն ետք Հայաստանի մէջ տիրող իրավիճակին կապակցութեամբ:



ՄԴՀԿ յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած էր.

«Հայաստանին ու Արցախին պարտադրուած զինադադարի նուաստացուցիչ պայմանագիրը յառաջացուցած է համայն հայութեան արդարացի ցասումն ու խոր ընդվզումը: Ամբողջ 43 օրեր, հայ քաջարի զինուորն ու կամաւորը, գերագոյն զոհողութեան գնով, արիաբար ու բազում սիրանքներ գործելով պաշտպանեց հայրենիքի ամէն մէկ թիզ հողը, սակայն դժբախտաբար չկարողացաւ յաղթահարել՝ իրմէ սպառազինութեամբ ու քանակով տասնապատիկ գերակայութիւն ունեցող թշնամիներու՝ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ առաւելութիւնը: Մենք կը խոնարհինք մեր նահատակուած հերոսներու յիշատակին առջեւ ու մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք անոնց հարգատներուն եւ համայն հայ ժողովուրդին:

Միւս կողմէ, դատելով Հայաստանի եւ Արցախի քաղաքական ու ռազմական ղեկավարութեան պաշտօնական յայտարարութիւններէն եւ ներկայացուցած փաստարկներէն, յստակ կը դառնայ, որ այս զինադադարին այլընտրանք ոչ միայն ամբողջ Արցախի անմիջական կորուստն էր, այլ մեր սահմանները տակաւին պաշտպանող հազարաւոր հայ զինուորներու պաշարման ու ջարդի ենթարկուելու իրական վտանգը:

Միանշանակ է, որ դէպքերու այս աղէտալի ընթացքի ու զարգացումներու ամբողջական պատասխանատուութիւնը կը կրէ ներկայ կառավարութիւնը, որ երբ պահը գայ հաշուետու կը դառնայ ժողովուրդի կամքին: Սակայն, որքան ալ դառն ըլլայ հայ քաջարի զինուորի ու ազատամարտիկի արեան գնով ազատագրուած տարածքներու կորուստը, ստեղծուած իրավիճակը կը պարտադրէ մեզ ըլլալ խոհեմ, կշռադատուած եւ իրապաշտ:

Հասկնալի է ժողովուրդին վրդովմունքը եւ յուսախաբութիւնը ի տես այս անսպասելի շրջադարձին, սակայն անընդունելի եւ դատապարտելի է ստեղծուած ծանր իրավիճակի շահարկումը՝ յանուն քաղաքական յետին նպատակներու, որ ոչ միայն կ'ապակայունացնէ երկիրը, այլ ալ աւելի կը թուլացնէ մեր պետականութիւնը: Վերջ ի վերջոյ, պիտի գիտակցինք, որ պատերազմը դեռ աւարտին հասած չէ եւ իրաւունքը չունինք թշնամիին հետ բանակցային սեղան նստելու ջլատուած ու պառակտուած:

Միւս կողմէ, մեր առջեւ ծառայած են բազում ծանր մարտահրաւէրներ, սկսեալ պատերազմի պատճառած մարդկային եւ նիւթական հսկայական վնասներու դարմանումի աշխատանքներէն մինչեւ նոր գաղթականական ճգնաժամի յաղթահա-

րումը: Իսկ այս բոլորը պիտի կարօտին երկարամեայ հետեւողական եւ տիտանական աշխատանքի, որ անհնար պիտի ըլլայ իրականացնել առանց միասնականութեան եւ հաւաքական կարողականութեան գերլարումի:

Ի տես այս բոլորին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կոչ կ'ուղղէ մեր հայրենակիցներուն հեռու մնալու իրավիճակը սրող ծայրայեղ քայլերէ:

Կոչ կ'ուղղենք նաեւ իշխանութիւններուն ցուցաբերելու առաւելագոյն զսպուածութիւն եւ հանդուրժողականութիւն՝ իրենց խօսքի ազատութեան իրաւունքէն օգտուող քաղաքացիներու նկատմամբ, գործելու բացառապէս ժողովրդավարական սկզբունքներու համաձայն եւ միջոցներ ձեռք առնելու մեղմելու համար առկայ շիկացած մթնոլորտը:

Պահը օրհասական է ու Հայաստանի եւ Արցախի ապագան կը պարտադրէ բոլորիս ըլլալ զգօն, որպէսզի նուազագոյն ցնցումներով դուրս գանք ներկայ վտանգաւոր իրավիճակէն ու ազգովին լծուինք մեր ցաւերը ամոքելու եւ Հայրենիքը վերականգնելու երկարաշունչ աշխատանքին»:

## «Քորոնա» Ժահրի Պատճառաւ Հայաստանի Տարածքին Յայտարարուեցաւ Արտակարգ Դրութիւն



Մարտի սկիզբին «Քորոնա» ժահրը հասաւ Հայաստան, երբ իրանէն ժամանած Հայ ճամբորդի մը մօտ յայտնաբերուեցաւ վարակի առաջին ախտանշանը: Յաջորդող օրերուն դէպքերու թիւը սկսաւ աճիլ եւ Մարտ 16-ին Կառավարութիւնը որոշում կայացուց, երկրի ամբողջ տարածքին միամսեայ արտակարգ դրութիւն հաստատելու կապակցութեամբ՝ վարակի տարածումը կանխելու նպատակով:

Գործադրութեան սկսան դրուիլ բնակչութեան տեղաշարժը սահմանափակող որոշումներ, իսկ հետագային դիմակ կրելը դարձաւ պարտադիր ու ոստիկանութիւնը սկսաւ տուգանքներ արձանագրել հանրային վայրերու մէջ դիմակ կրելու որոշումը անտեսողներուն եւ վաճառատուներու մէջ առողջապահութեան կանոնները խախտողներուն նկատմամբ:

Հակառակ բոլոր միջոցառումներուն վարակը արագօրէն սկսաւ տարածուիլ ամբողջ երկրի տարածքին:

Երկրի տնտեսութեան հասցուած վնասներուն առջեւ, Ապրիլ 14-ին որոշուեցաւ վերաբանալ շուկաներն ու վաճառատուներ: Այս որոշումէն ետք վարակը աւելի մեծ թափով սկսաւ տարածուիլ ու հիւանդանոցներուն մէջ գրեթէ տեղ չմնաց վարակակիրները թարմանալու համար:

Պատերազմը սկսելէն ետք անտեսուեցան առողջապահական բոլոր կանոնները ու սկսաւ յայտնաբերուիլ օրական

»»»

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԷՕՐՈՂԼԵԱՆ**

Մեր Զինուորը ԶԷ ՊԱՆՏՈՒԱՅ




# Վերաքաղ՝ 2020 Թուականի Հայկական Տարին

1000-է աւելի դէպքեր, որոնց գուգահեռ աւելցան նաեւ մահացողներու թիւը: Տարեվերջին Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրի» պատճառաւ մահացողներու թիւը մօտեցաւ 3 հազարի, իսկ ընդհանուր վարակուածներու թիւը հասա՝ 160 հազարի:

Այս ընթացքին Հայաստանի կառավարութեան որդեգրեց աջակցութեան երկու տասնեակ ծրագիրներ, փորձելով խթանել ու ոտքի պահել տուժող տնտեսութիւնը:

Հիմնադրամի Յայտարարած Դրամահաւաքի Ընթացքին Հաւաքուեցաւ 170 Միլիոն Տոլար



#ArtsakhStrong  
#GlobalArmeniansUnite  
**WE ARE OUR BORDERS.  
ALL FOR ARTSAKH.**  
Donate Now

**TO DONATE VISIT  
WWW.ARMENTIAFUND.ORG/DONATE**

Պատերազմը սկսելէն անմիջապէս ետք յայտարարուեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի՝ «Մենք ենք մեր Մահմանները. Բոլորս Արցախի Համար» նշանաբանին տակ դրամահաւաք:

Հայաստանէն ու սփիւռքէն տասնեակ հազարաւոր անհատներ ու կազմակերպութիւններ փութացին արձագանքելու Արցախի օգնութեան հասնելու կոչին:

Երկու ամսուայ ընթացքին հանքանակուեցաւ աննախընթաց մեծ գումար՝ որ հասաւ 170 միլիոն տոլարի:

Այս գումարէն 50 միլիոն տոլար փոխանցուեցաւ Հայաստանի պետութեան, պատերազմի հետեւանքները մեղմելու համար: Մնացեալ գումարները կ'օգտագործուին Արցախցիներու կարիքները հոգայուլ, քանդուած բնակարանները վերականգնելու եւ Հայաստան տեղափոխուած գաղթականներուն օգնելու նպատակով:

Հիմնադրամը խոստացաւ կարճ ժամանակու ընթացքին իրականացնել միջազգային ընկերութեան մը կողմէ հաշուեքննութիւն, որ պիտի ներկայացուի ժողովուրդին:

Ֆրանսայի Ազգային Ժողովը Եւ Ծերակոյտը Ճանչցան Արցախի Անկախութիւնը

Պատերազմական գործողութիւններու աւարտէն ետք նոր թափ ստացաւ Արցախի անկախութեան ճանաչման գործընթացը: Առաջինը արձագանքեցին Ֆրանսայի օրէնսդիր մարմինները: Նոյեմբերին, նախ Ազգային Ժողովը եւ ապա Ծերակոյտը գրեթէ միաձայնութեամբ ընդունեցին բանաձեւեր, որոնք կը պահանջէին կառավարութեանէն ճանչնալ Արցախի Հանրապետութիւնը:

Խորհրդատուական բնուէթ ունեցող այս փաստաթուղթերուն մէջ, օրէնսդիրները կը պնդէին, որ Ատրպէյճան անցեալ տասնամեակներուն, ինչպէս նաեւ վերջին պատերազմի ընթացքին ապացուցած է, որ չի կրնար երաշխաւորել հայ բնակչութեան անվտանգութիւնն ու ազատութիւնը, ուստի խնդրի միակ ու տեւական լուծումը կարող է ըլլալ Ղարաբաղի ճանաչումը:



Այդուհանդերձ, Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարութիւնը յայտարարեց որ, որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ՝ իրենց պարտաւորութիւնն է աշխատիլ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան բանակցուած լուծում գտնելու ուղղութեամբ, յատկապէս՝ կարգավիճակի հարցով:

Պէյրուքի Նաւահանգիստին Մէջ Ահաւոր Պայթումը Մեծ Վնասներ Հասցուց Հայութեան



Օգոստոս 4-ի երեկոյեան Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած ահաւոր պայթումը մը քանդեց Լիբանանի մայրաքաղաքի մեծ մասը, ներառեալ հայկական թաղամասերը, որոնք կը գտնուէին պայթումի վայրին շատ մօտ: Պայթումը իլեց հարիւրաւոր զոհեր, որոնց մէջ կային մէկ տասնեակէ աւելի հայեր:

Հարիւր հազարաւոր լիբանանցիներ դարձան անտուն ու կարիքաւոր:

Հսկայ վնասներ կրեցին նաեւ Նոր Հաճընի եւ Պուրճ Համուտի Հայկական կեդրոնները, հաստատութիւններն ու բնակելի տունները:

Հայաստանի իշխանութիւնները մնայուն կապի հաստատելով Լիբանանի պետական եւ Հայկական շրջանակներուն հետ, անմիջական օգնութիւն սկսան հասցնել աղէտալներուն: Վարչապետ Նիկոլ ֓աշինեան Օգոստոս 6-ի կառավարութեան նիստի ընթացքին յայտարարեց, որ Հայաստան իր կարելիութեան սահմաններուն մէջ օգտակար պիտի ըլլայ Լիբանանի կառավարութեան եւ տեղույն հայ համայնքին: Դեղորայք, սնունդ եւ այլ պարագաներ փոխադրող օդանաւեր Երեւանէն ժամանեցին Պէյրութ:

▶▶▶



**Մեր Զինուորը Զե Դարձուած**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ**



# Վերաքաղ՝ 2020 Թուականի Հայկական Տարին

Աղէտին յաջորդող օրերուն, որոշ թիւով Լիբանանահայեր տեղափոխուեցան Հայրենիք, իսկ սփիւռքի տարածքին սկսան հանգանակային արշաւներ՝ օգնելու համար տեղւոյն Հայ ժողովուրդին եւ Հայկական հաստատութիւններուն:

Արայիկ Յարութիւնեան Ընտրուեցաւ Արցախի Նախագահ



Մարտ 31-ին կայացան Արցախի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններու առաջին փուլը: Նկատի առնելով որ, թեկնածուներէն ոչ մէկը կարողացած էր հաւաքել ձայներու 50 տոկոսէն աւելին, նախկին վարչապետ Արայիկ Յարութիւնեան եւ արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեան իրաւունք ստացան մասնակցելու ընտրութիւններու երկրորդ փուլին:

Ապրիլ 14-ին տեղի ունեցած քուէարկութենէն առաջ Մայիլեան յայտարարեց որ պիտի չմասնակցի ընտրութիւններուն ու Արայիկ Յարութիւնեան ստանալով ձայներու մեծամասնութիւնը՝ ընտրուեցան Արցախի նախագահ ու եկաւ փոխարինելու Բակօ Սահակեանին:

## Սահմանադրութեան Փոփոխութիւններու Հանրաքուէ Նշանակուեցաւ Ապրիլ 5-ին

Հայաստանի Սահմանադրական Դատարանի շուրջ ստեղծուած ճգնաժամը լուծելու նպատակով սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէ նշանակուեցաւ Ապրիլ 5-ին:

Ընտրարշաւը սկսելէն կարճ ժամանակ ետք «Քորոնա» ժահրը հասաւ Հայաստան, ստիպելով որ հանրաքուէն յետաձգուի:

Սկսաւ քննարկուիլ Սահմանադրական Դատարանի հարցը Խորհրդարանին կողմէ լուծելու տարբերակը: Յունիս 22-ին Ազգային ժողովը ընդունեց որոշում, ըստ որուն դադրեցաւ Հրայր Թովմասեանի պաշտօնավարումը, որպէս Սահմանադրական Դատարանի նախագահ: ՄԴ-ի անդամներ՝ Հրանդ Նազարեանի, Ֆելիքս Թոխեանի, եւ Ալվինա Կիւլումեանի պաշտօնավարումը նկատուեցաւ անարտած ու Հետազգային անոնք փոխարինուեցան երեք նոր դատաւորներով:

## Ռազմական Գործողութիւններ Հայաստան-Ատրայեյճան Սահմանին

Ատրայեյճանեան ուժերը Յուլիս 12-ին, Տաւուշի կողմէն հայկական սահմանը խախտելու փորձ կատարեցին ու հանդիպելով դիմադրութեան ետ շարտուեցան: Յաջորդ օրը, հակառակորդը դարձեալ կրակ բանալով Տաւուշի մարզի հայկական սահմանապահ դիրքերուն ուղղութեամբ փորձ կատարեց ներթափանցում իրականացնելու: Սակայն, կորուստներ կրելով ետ քաշուեցաւ:



Ջինուժ մամուլը հրապարակեց ատրայեյճանական զօրքերու՝ իսրայէլական արտադրութեան «Elbit Hermes 900» թռչող սարքի խոցման տեսանիւթը, որ նկատուեցաւ իր տեսակին մէջ «Hermes 900» ի առաջին խոցումն էր:

Պատերազմը սկսելէն վեց օր ետք ռազմական գործողութիւնները դադրեցան: Երկու կողմերը ունեցան զոհեր:

## Համաճարակի Պատճառաւ Սփիւռքի Տարածքին Կանգ Առաւ Ազգային Կեանքը

Մարտի կէսերուն Ամերիկայի տարածքին խիստ քայլերու սկսան դիմել՝ «Քորոնա» ժահրի համաճարակին առաջը առնելու նպատակով:

Լոս Անճելըսի մէջ ժողովուրդին թելադրուեցաւ դուրս չգալ իրենց բնակարաններէն: Ստեղծուած այս արտակարգ վիճակէն մեկնելով փակուեցան Հայկական բոլոր վարժարաններն ու ազգային հաստատութիւնները, ինչպէս նաեւ ջնջուեցան հրապարակային բոլոր միջոցառումները: Եկեղեցիներու մէջ պատարագները սկսան մատուցուիլ առանց ժողովուրդի ներկայութեան:

Որոշ ժամանակ Հայկական թերթերը դադրեցան տպագիր լոյս տեսնելէ ու բաւարարուեցան համացանցի միջոցաւ տարածել իրենց լուրերը:

Յեղասպանութեան տարելիցի միջոցառումները տեղի ունեցան առցանց: Կազմակերպուեցաւ ժողովրդային հանգանակութիւն եւ ի յիշատակ Հայ նահատակներուն՝ ճաշ բաշխուեցաւ համավարակէն տուժած Ամերիկացի ժողովուրդին:

Սփիւռքի բոլոր համայնքներէն ներս տիրեց նոյն իրավիճակը ու Կանգ Առաւ Ազգային Կեանքը:

## ՍԴՀԿ Անդամ Սարօ Մարտիրեան Ընտրուեցաւ Ալֆորվիլի Փոխ-Քաղաքապետ

Կիրակի, Մայիս 24-ին տեղի ունեցան Փարիզի արուարձաններէն՝ հայաշատ Ալֆորվիլի նորընտիր քաղաքապետական խորհուրդի անդամներու պաշտօնի ստանձման արարողութիւնը:

Քաղաքապետ դարձաւ Լուք Քարվունաս, իսկ ՍԴՀԿ Ֆրանսայի շրջանի ատենապետ՝ Սարօ Մարտիրեան ընտրուեցաւ քաղաքապետի տեղակալ:

Այս առթիւ իր ունեցած ելոյթին մէջ Մարտիրեան յատկապէս ըսաւ. «41 տարիներ առաջ այս քաղաքը հիւրընկալեց մեր ընտանիքի անդամները եւ առիթը տուաւ դառնալու այն ինչ որ եմ այսօր: Այժմ եկած է հերթը ինծի՝ վերադարձնելու Արֆորվիլին եւ ծառայելու յանձնառութեամբ եւ անձնագոհութեամբ:


«Այս առթիւ շնորհակալ եմ իմ ծնողներուն, որոնք

»»»

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.

ԹԱԴԷՈՍ ԵՒ ՆՈՐԱ ՔԷՕՐՈՂԼԵԱՆ

Մեր ջինուրը չէ ՊԱՆՏՈՒՍ





# Վերաքաղ՝ 2020 Թուականի Հայկական Տարին



Թուրքիային եկան այստեղ, որպեսզի ես ունենամ աւելի լաւ ապագայ: Շնորհակալ են Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան իմ ընկերներուն, իրենց աջակցութեան համար: Ես հպարտ եմ կրելու այս եռագոյն ժապաւէնը: Ինչպէս շատ հայեր, մենք կրողներն ենք Փրանսայի արժէքներուն, պատմութեան եւ մշակոյթին, որ դարձուցած ենք մերը ու կը պահենք մեր Հայկական աւանդոյթներու կողքին»:

«100% Փրանսացի, 100% Հայ, ինչպէս կը սիրէր ըսել Շարլ Ազնաւուր», իր խօսքին մէջ շեշտեց Ընկեր Մարտինեան: Ալֆորվիլի մէջ կը գտնուի Փարիզի Հայոց Եկեղեցին եւ կան փողոցներ Կոմիտասի եւ Միսաք Մանուշեանի անուններով: Ալֆորվիլ քոյր քաղաք է Աշտարակի հետ՝ 1993 թուականին ի վեր, իսկ Օշականի հետ՝ 2001-էն ասդին:

### ՍԴՀԿ Անգարայի Մէջ Մասնակցեցաւ HDP-ի Համագումարին



Թուրքիոյ Ժողովուրդներու Ժողովրդավարական Կուսակցութեան (HDP) հերթական չորրորդ համագումարը տեղի ունեցաւ Փետրուար 2020-ին, Անգարայի մէջ, 20 հազար հոգիներու ներկայութեան:

Համագումարին իրենց մասնակցութիւնը բերին բազմաթիւ հիւրեր՝ Թուրքիային եւ արտերկրէն: Արտասահմանցի հիւրերը եկած էին 28 տարբեր երկիրներէ, որոնց շարքին էր նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ՝ Կեղրոնական Վարչութեան անդամ ընկեր Ալեքսան Քէօշկէրեան:

Համագումարի ղեկանի չորս հոգինոց կազմին մաս մէջ էր հայագրի երեսփոխան Կարօ Փայլանը: Հիւր պատուիրակներու համար կազմակերպուած ընթրի-

քի ընթացքին ելոյթ ունենալով ընկեր Քէօշկէրեան յայտարարեց. «Ես Փարամազի կուսակիցն եմ, ՍԴՀԿ Կեղրոնական Վարչութիւնը կը ներկայացնեմ, եւ եկած եմ Լիբանանէն, կողքս նստող միւս հայ ներկայացուցիչը եկած է ԱՄՆ-էն:

«Իսկ մեր շուրջի եւրոպացի մասնակիցները չհասկցան, որ ինչպէս մենք այս տարածքներու հին եւ բնիկ ժողովուրդն ենք եւ եկած ենք հայութիւնը կամ Հայաստան ներկայացնելու: Անոնք չէին գիտեր, որ այն տարածքը, որ քիչ առաջ Քիւրտիստան անուանեցիք, Արեւմտեան Հայաստանն է, որուն վրայ մենք այլեւս չկանք, քանի որ ցեղասպանութեան ենթարկուեցանք, այդ հողերը բոլորիս կը պատկանի, մեր ընդհանուր հայրենիքն է:

«Զեզմէ կ'ակնկալենք, որ մեր իրաւունքն ալ պաշտպանէք: Դուք այստեղ ներսը մեր ձայնը եղէք, մենք արդէն դուրսը Ձեր ձայնն ենք»:

### Ամերիկեան Հետախուզութեան Պարտականութիւնը Տրուեցաւ Ձեկոյց Պատրաստել Լեռնային Ղարաբաղի Մէջ Տիրող Կացութեան Շուրջ

Միացեալ Նահանգներու հետախուզական ծառայութիւնները յառաջիկայ երեք ամիսներուն պարտաւոր են Լեռնային Ղարաբաղի մէջ տիրող կացութեան վերաբերեալ յստակ պարզաբանումներ ներկայացնել Ամերիկեան Գոնկրէսին: Այս պահանջը տեղ գտաւ «2021 ֆինանսական տարուայ յատկացումներու մասին» օրինագծի մէջ, որ Գոնկրէսի երկու պալատներուն կողմէ վաւերացուեցաւ Դեկտեմբեր 21-ին:

Գոնկրէսական Ատամ Շիֆի առաջարկով ընդգրկուած փաստաթուղթի 615-րդ յօդուածը, որ կը կրէ «Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ առկայ լարուածութեան գնահատական» վերնագիրը, յստակ պահանջներ կը դնէ ամերիկեան յատուկ ծառայութիւններու առջեւ՝ պարտաւորեցնելով անոնց ղեկավարներուն համապարփակ տեղեկատուութիւն տրամադրելու հայ-ատրպէյճանական հակամարտութեան գօտիէն ներս տիրող կացութեան վերաբերեալ:

«Ոչ ուշ, քան 90 օրուայ ընթացքին այս օրինագիծի ուժի մէջ մտնելէն ետք, Ազգային հետախուզութեան տնօրէնը Գոնկրէսի հետախուզութեան հարցերով յանձնաժողովներուն պէտք է գրաւոր պարզաբանում ներկայացնէ Հայաստանի եւ Ատրպէյճանի կառավարութիւններուն միջեւ առկայ լարուածութեան, անոնց կարգին՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերեալ», - նշուած է օրինագծին մէջ:

Ամերիկացի գոնկրէսականները կը պնդեն որ, հետախուզական ծառայութիւնը այդ զեկոյցով պէտք է մանրամասնօրէն նկարագրեն վերջին շրջանին ղարաբաղեան հակամարտութեան գօտիէն ներս ծաւալուած ռազմական գործողութիւնները: «Հարկաւոր է նկարագրել Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի եւ անոր շրջակայքի, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին 2020 թուականի ընթացքին ուժի կիրառման բոլոր նշանակալի դէպքերը՝ ներառելով իւրաքանչիւր նման դէպքի առանձին նկարագրութիւնը եւ գնահատականը, թէ որ կողմն է առաջինը ուժի դիմած», - նշուած է փաստաթղթով:

Օրինագիծի՝ Ղարաբաղին վերաբերող յօդուածի երրորդ ենթակէտի համաձայն՝ հետախուզական ծառայութիւնը պէտք է գնահատէ, թէ ինչ ազդեցութիւն կը ձգէ Միացեալ Նահանգներու կողմէն Ատրպէյճանին եւ Հայաստանին յատկացուող ռազմական օգնութիւնը տարածաշրջանի ուժերու յարաբերակցութեան վրայ:

Ընդունուած օրինագծով Գոնկրէսը կը վերահաստատէ ԹԻԸ 907 յօդուածը, որ կ'արգիլէ Ատրպէյճանին տրուող օժանդակութիւնը: Այս յօդուածի կիրարկումը առկախուած էր Թրամփի վարչակազմին կողմէ:

Մեր Զինուորը 2Է ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

## ՏԻԿ. ՖԼՈՐԱ ՏՈՒՆԱՅԵԱՆՑ



# ԱՄՈՒՐ ԿԱՄՔՈՎ ԵՒ ՈՒԺԵՂ ՀԱՒԱՏՔՈՎ ԿԵՐՏԵՆՔ ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ



**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.  
ՎԻԳԻՆ ԵՒ ՍԱԼԲԻ ՄԱՆԿՐԵԱՆ**



# Նոր Մտածելակերպ, Նոր Հայաստան «Մուրճի Եւ Սալի» Կրկնուող Պատմութիւնը ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

«Թուրք-բոլշեւիկեան յարաբերութիւնը անհունօրէն ցաւոտ հարց է՝ ճակատագրական եւ աղէտալի մեր հայրենիքի եւ հայ ժողովրդի համար: Այսօր այլեւս գաղտնիք չէ, որ բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, ճգմուեց ու խորտակուեց Հայաստանը՝ անմեղ զոհը աշխարհակալ յեղափոխութեան: ...Թուրք-բոլշեւիկեան յարաբերութիւնը սոսկ անցեալի պատմութիւն չէ, այլեւ այսօրուայ եւ վաղուայ հրատապ հարց: Հայ ժողովուրդի ու Հայաստանի ճակատագրով հետաքրքրուող ամէն անհատ պէտք է գիտենայ այդ պատմութիւնը՝ հասկանալու համար այն ամէնը, որ եկաւ Հայաստանի եւ հայ ժողովրդի գլխին: Պէտք է գիտենայ՝ խուսափելու համար անճիշդ դատողութիւններէր, անհիմն պատրանքներէր եւ սխալ քայլերէր ապագայում»:  
Միմոն Վրացեան «Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ» 1953


Այս յօդուածը որոշեցինք գրել ընդարձակելու համար մեր նախորդ յօդուածի՝ «Ինչո՞ւ եւ արդեօ՞ք»-ի մէջ մեր արտայայտած հետեւեալ միտքը. «Ինչո՞ւ համար Ռուսիան Հայաստանի խեղճացման ճանապարհով իր ոտքը հաստատեց Ազգայնճանի մէջ: Արդեօ՞ք ...»: Այդ «արդեօ՞ք»-ը մեզ տարաւ վերընթեցելու Հայաստանի Ա. Հանրապետութեան վերջին վարչապետ՝ Միմոն Վրացեանի վերը նշուած գիրքը: Վերընթեցելու արցախեան վերջին պատերազմին մեր կրած պարտութեան լուսին տակ եւ գուգահեռներ գտնելու Վրացեանի նշած եւ այսօրուան իրողութեանց միջեւ: Այս յօդուածով, թէեւ մեր գլխաւոր նպատակն է քննարկել ռուս-թրքական յարաբերութիւններու ազդեցութիւնը Հայաստանի վրայ, բայց անհրաժեշտ կը նկատենք այդ ընել միեւնոյն ժամանակ անդրադառնալով գլխաւոր երկու այլ հարցերու, որոնք սերտօրէն կապուած են մեր նիւթին հետ՝ Հայաստանի անկախ պետականութիւնը եւ Ղարաբաղեան խնդիրը: Սկսինք անկախ պետականութեան հարցով:

## Հայաստանի անկախ պետականութիւն եւ ազգային արեւելում

Վրացեանը գրքի սկիզբը կը գրէ. «1920 թ. Դեկտեմբերին Հայաստանը ստիպուած եղաւ ընդունելու խորհրդային վարչաձեւը, ապա՝ հրաժարուելու անկախութիւնից: Ինչո՞ւ: Արդեօք հայ ժողովուրդը արժանի չէ՞ր անկախութեան: Արդեօք Հայաստանը անընդունա՞կ էր ինքնուրոյն պետական կեանքով ապրելու»: Վրացեան, դժբախտաբար ուղղակիօրէն չի պատասխաներ իր տուած հարցումներուն եւ չի բացայայտեր իր մտքերը սպառիչ եւ խոր վերլուծութիւններով, այլ կը պատասխանէ անուղղակիօրէն, անդրադառնալով անկախութեան անկման պատճառներուն: Ան կը շարունակէ. «Առարկայական փաստերի անաչառ ուսումնասիրութիւնը իրաւունք է տալիս պնդելու, որ Հայաստանի անկախութեան անկման պատճառները ներքին չէին, այլ գերազանցապէս արտաքին»:

Երբ կը թերթատենք Վրացեանի հեղինակած «Հայաստանի Հանրապետութիւն» հատորի 1958-ի Բ. տպագրութիւնը, հոն ալ չենք հանդիպիր մեր սպասած քննական ու առարկայական վերլուծութիւններուն, կապուած՝ անկախութեան արժանի կամ ոչ, եւ պետական կեանքի ընդունակ ըլլալու կամ չըլլալու մեր ժողովուրդի յատկութեան: Ներքին ճակատի վրայ, ան հայ բոլշեւիկները կը մեղադրէ մեր անկախութեան անկման մէջ, իսկ արտաքին ճակատի վրայ, գլխաւորաբար քեմալական Թուրքիան ու բոլշեւիկեան Ռուսիան, ապա նաեւ Անգլիան ու Ֆրանսան. «Հայ ժողովուրդն ի զուր սպասեց արդարագատութեան «մեծ դաշնակիցների» կողմից, որոնք մոռացել էին հայերի մատուցած ծառայութիւնները եւ հայերին տուած հանդիսաւոր խոստումները: Այժմ ամէն մէկը աշխատում էր իր շահը ապահովել հայերի անունը շահագործելով»: Մեր ուսանողական տարիներուն, կարդալով այս եւ նմանօրինակ միտքեր, բնականաբար գայրոյթով կը լեցուէինք օտարներուն դէմ, առանց անդրադառնալու, որ այդ գայրոյթը որեւէ ձեւով չէր նպաստեր իրականութիւնը ըմբռնելու եւ անկէ դաս մը քաղելով իմաստնանալու գործընթացին: Այդ դասը քաղելու համար պէտք էր կարդայինք մեր Ա. Հանրապետութեան Ա. վարչապետ՝ Յովհաննէս Քաջազունիի խօսքերը. «Մեր սեփական ցանկութիւնները դրել էինք ուրիշների մէջ ... Գերազանահատում էինք հայ ժողովուրդի կարողութեան չափը, քաղաքական ու ռազմական արժէքը, ռուսներին [ինչպէս նաեւ Արեւմուտքին] մատուցած մեր օժանդակութեան կարեւորութիւնը: Ու՛ր գերազանհետեւով մեր շատ համեստ արժանիքները՝ բնականօրէն չափազանցում էինք նաեւ մեր յոյսերն ու սպասելիքները»: Ու բնականաբար, անոր յաջորդող յուսախաբութիւնները:

ըր՝ բնականօրէն չափազանցում էինք նաեւ մեր յոյսերն ու սպասելիքները»: Ու բնականաբար, անոր յաջորդող յուսախաբութիւնները:



Յովհաննէս Քաջազունի

Հայաստանի Ա. Հանրապետութեան մեր վերջին վարչապետը ոչ մէկ խօսք կ'ըսէ դէպքերը կանխատեսելու մեր անկարողութեան եւ կամ մեր անհեռատեսութեան մասին: Պարտք կը զգանք անգամի մը համար եւս մէջբերել Քաջազունիի 1923-ին գրած խօսքերը. «Եթէ ճիշտ է, որ կառավարել՝ ասել է նախատեսել, ապա ուրեմն մենք միայնգամայն անպէտք կառավարիչներ ենք եղել, որովհետեւ հենց այդ նախատեսելու ընդունակութիւնն է որ չենք ունեցել բնաւ: Մենք շարունակ սխալուած ենք եղել մեր հաշիւների մէջ ու շարունակ անակնկալների հանդիպած, անակնկալների միայն մեզ համար, որովհետեւ չենք գիտեցել նախատեսել»: Ան կը շարունակէր գրել. «Գանգատուել դառնօրէն բախտից ու մեզանից դուրս որոնել մեր դժբախտութիւնների պատճառը, սա եւս մեր ազգային հոգեբանութեան բնորոշ գծերից մէկն է, որից ազատ չէ ի հարկէ եւ Դաշնակցութիւնը: Կարծես հոգեկան մի առանձին միութարանք էինք գտնում այն համոզմունքի մէջ, թէ ռուսները սրիկայօրէն են վարուել մեր հանդէպ (չետազային հերթը պիտի գար ֆրանսացիներին, ամերիկացիներին, անգլիացիներին, վրացիներին, բոլշեւիկներին - ամբողջ աշխարհին). կարծես մի մեծ առաքինութիւն էր ու մի մեծ քաջագործութիւն, որ ինքներս այնքան միամիտ ու անհեռատես ենք եղել, դրել ենք մեզ (կամ թոյլ ենք տուել դնելու) այնպիսի դրութեան մէջ, որ ամէն ցանկացող կարողանայ խաբել, լքել, դաւաճանել, կոտորել կամ կոտորել տալ մեզ»: Քաջազունիի կատարած խտտաճանաչումները, Վրացեան կը վերագրէր «տարիքը առած մի մարդ»-ու «հիւանդագին, անհասկնալի դեգերումների», կը մատնանշէր թէ ո՞ւր է «նրա ամբողջ սխալը» ու կը պատասխանէր. «Նա հաւատացած է, թէ բնագղաբար ըմբռնում է հայ ժողովուրդին ու հայ իրականութիւնը, մինչդեռ իրապէս նա իր ապրումներով ու բնագրներով շատ հեռու է հայ ժողովուրդից: Նա հայ մարդ չէ, պարզ մարդ է: Հայի համար տիպական ոչինչ չկայ իր մէջ»: Կը տեսնէ՞ք թէ ուր է սխալը: Կ'ըմբռնէ՞ք, թէ որքան շահաւոր կ'ըլլայինք ազգովին, եթէ անձնական վիրաւորանքներով ընդդիմադիրը վատաբանելու տեղ, վիճաբանած ըլլայինք անոր յայտնած գաղափարներուն թերութիւններուն կամ առաւելութեանց մասին: Ա՛յս պէտք էր ընէինք, Վրացեանի իսկ բնորոշմամբ՝ «խուսափելու համար անճիշդ դատողութիւններից, անհիմն պատրանքներից եւ սխալ քայլերից ապագայում»: Դժբախտաբար չըրինք ու չարաչար տուժեցինք:

1958-ին Վրացեան կը գրէր. «Քառասուն տարի է անցել Հայաստանի Հանրապետութեան ծնունդի օրից, բայց հայութեան գիտակցութեան մէջ դեռ եւս համագգային ընդհանուր ըմբռնում չէ դարձած անկախութեան գաղափարը: Ժամանակը վճռական գործօն է պատմական դէպքերի գնահատութեան համար եւ ժամանակի հետ նաեւ սերունդների փոփոխութիւնը: Սակայն քառասուն տարին բաւական չեղաւ, որպէսզի Հայաստանի Հանրապետութեան շուրջ հրահրուած կիրքերը մարէին, եւ անկախութեան գաղափարը իր արժանաւոր տեղը գրաւէր հայ ժողովրդի ընդհանուր գիտակցութեան մէջ»: Ինչո՞ւ: Որովհետեւ անկախութեան գաղափարը չարաշահուեցաւ կուսակցական շահեր հետապնդելու եւ պառակտումներ յառաջացնելու նպատակներով: Ազգային արեւելումի բացակայութեան, ունեցանք Հայաստան ու Վայաստան, հոգեւոր հայրենիք ու բոլշեւիկ հայրենիք, Դաշնակցական հայ ու հայ չհամարուող հայ (չիշեցէք Վրացեանի տուած բնութագրումը Քաջազունիին՝ «նա հայ մարդ չէ, պարզ մարդ է», որուն հիման վրայ եկաւ «ան որ Դաշնակցական չէ՝ հայ չէ» լրգունգը), ազգային եկեղեցի ու բոլշեւիկեան եկեղեցի, եւ այլն: Ու այս բոլորին մէջ ինչպէ՞ս ակնկալել, որ «անկախութեան գաղափարը

▶▶▶

Մեր 25-ամյուրը 25 ՊԱՐՏՈՒՄԸ

## ՏԻԱՐ ՅՈՎԱՆԷՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ



# «Մուրճի Եւ Սալի» Կրկնուող Պատմութիւնը

իր արժանաւոր տեղը գրաւէր հայ ժողովրդի ընդհանուր գիտակցութեան մէջ»: Իսկ այն հազուագիւտները, որոնք փորձեցին այդ ընել, ինչպէս օրինակ Սարգիս Տիրուհին, դժբախտաբար զոհ գացին եղբայրասպան գնդակի:

Պէտք էր սպասել մինչեւ 1980-ականներու շարժումը, երբ «Ղարաբաղ կոմիտէ»-ի տղաքը հանդէս եկան «Գնացքից թռչելու ժամանակը», «Երրորդ ուժի բացառման օրէնքը», «Որն է մեր ճանապարհը», եւ այլ նորովի մտածողութեան յօդուածներով, վերաշխուժացնելու քարացած ու կաղապարուած մտայնութիւնները: Երբ հայրենիքէն ներս հնչեցին անկախութեան կոչեր, Սփիւռքի գլխաւոր երեք կուսակցութիւնները, ՀՅԴ-ի դրոշմով, դէմ արտայայտուեցան: Շատ հաւանական է, որ ՄԴՀԿ եւ ՌԱԿ օրին կ'անգիտանային, որ Մարուխեանի ՀՅԴ-ն արդէն անցած էր ՔԿՊ-ի ծառայութեան տակ, որ հաշտ աչքով չէր դիտեր համաշխարհային անխուսափելի զարգացումները: Փլուզուեցաւ Խորհրդային Միութիւնը, եւ Հայաստանը, չմնալով անոր փլատակներուն տակ, կարողացաւ սահմանադրական ուղիով տիրանալ անկախութեան, ոչ թէ ՀՅԴ-ի ջանքերով, այլ Քաջագնդունիի նախատեսած «ուրիշ մարդիկ, ուրիշ անունով, ուրիշ հոգեբանութիւնով, ուրիշ անցեալով (կամ առանց անցեալի)»: Ու դժբախտաբար, Հայաստանի անկախութիւնը իր մենաշնորհը նկատող ՀՅԴ-ն, կուսակցամով մտայնութիւնը փոխադրեց Հայաստան ու պայքար բացաւ նորերուն դէմ: Ինչո՞ւ: Դարձեալ խօսքը տանք Քաջագնդունիին. «Չենք կարողացել տարբերել պետութիւնը կուսակցութիւնից ու կուսակցական մտայնութիւն ենք մտցրել պետական կեանքի մէջ: Պետական մարդիկ չէինք մենք»:



«Ղարաբաղ կոմիտէ»ի անդամները

Այս կուսակցամով մտայնութեան պատճառաւ խեղաթիւրուեցան իրականութիւնները, ստեղծուեցան «ապագային»-ի եւ «դաւաճան»-ի կերպարներ, Արցախը «ծախողներ», եւ այլն: Եւ հայրենասիրական լոզունգներու շղարշին տակ իրագործուեցան հրաժարումներ, Հոկտեմբեր 27, իշխանութեան գաւթում, կեղծուած ընտրութիւններ, Մարտ 1, թալան, եւ այլն: Ազգային արեւելումի եւ անկախ պետականութեան գաղափարները ստորադասուեցան օտարին գործիք դառնալով կուսակցական շահ հետապնդելու հիւանդագին մտածելակերպին դիմաց:

## Ղարաբաղեան հարցի ազդեցութիւնը Հայաստանի վրայ

Ինչպէս որ Հայաստան սահմանադրական ուղիով դուրս եկաւ փլուզուող Խորհրդային Միութիւնէն, այնպէս ալ վարուեցաւ Լեւոնային Ղարաբաղի ինքնավար Մարզը-ԼՂԻՄ, դուրս գալով Ազրպէյճանէն: Մերժելով այս գործընթացը, Ազրպէյճան դիմեց կոտորածներու եւ պատերազմի, որ աւարտեցաւ իր պարտութեամբ: Հայաստանի անկախ պետութիւնը, խուսափելու համար Ազրպէյճանի անկախ պետութեան դէմ նախաշարժակ ըլլալու ՄԱԿ-ի եւ միջազգային հանրութեան դատապարտումէն, պատերազմը ներկայացուց որպէս Ազրպէյճանի ներքին փոքրամասնութեան մը՝ ԼՂԻՄ-ի ինքնորոշման պայքարի: Իրաւական գետնի վրայ, պատերազմը Ազրպէյճանի եւ ԼՂԻՄ-ի միջեւ էր: Հայաստանը պարզապէս հանդէս կու գար որպէս ԼՂԻՄ-ի իրաւունքներուն պաշտպան եւ անվտանգութեան երաշխաւոր: Դժբախտաբար նոյնիսկ այս նուրբ հարցը շահագործուեցաւ կուսակցամով շրջանակներու կողմէ, որպէս թէ Արցախը ազատագրուեցաւ «ի հեճուելիս Լեւոն Տէր-Պետրոսեանի»:

Հայաստանի դիւանագիտութեան այս քայլին շնորհիւ էր, որ Արցախի Հանրապետութիւնը 1994-ի հրադադարը ստորագրող կողմերէն մին հանդիսացաւ:

Յետագայ տարիներու զարգացումներուն ծանօթ ենք բոլորս: Որոշ ներքին եւ արտաքին ուժեր, չմարսելով մեր ազգային այս բացառիկ

յաջողութիւնը, ճեղք բացին յաղթանակը կերտած գլխաւոր երկու դերակատարներուն՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ Վազգէն Սարգսեանի միջեւ: Դժբախտաբար ՀՅԴ-ն մեծ դերակատարութիւն ունեցաւ այս ճեղքի յառաջացման մէջ, Սարգսեանին վստահեցնելով, որ Սփիւռքէն տարեկան աւելի քան 500 միլիոն տոլարի ներդրումով թիկունք պիտի կանգնին իրեն: Այսպէս էր որ պահանջուեցաւ նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հրաժարականը եւ առաջարկուեցաւ Ռոբերտ Քոչարեանի թեկնածութիւնը ընդդէմ Կարէն Դէմիրճեանի: 1998-ի նախագահական ընտրութիւններուն, սահմանադրական խախտումով եւ ընտրական կեղծիքով նախագահ «ընտրուեցաւ» Քոչարեանը: Տարի մը շանցած, Սարգսեան անդրադարձաւ, որ գինք խաբած էին: Ուստի, 1999-ի խորհրդարանական ընտրութիւններուն դաշնակցեցաւ Կարէն Դէմիրճեանի հետ ու փայլուն յաղթանակ տարին, Քոչարեանին հասցնելով «Անգլիոյ թագուհի»-ի կարգավիճակին: Ճեղք բացող նոյն ուժերը, դարձեալ չմարսելով այս յաջողութիւնը, իրագործեցին Հոկտեմբեր 27: Գլխատուեցաւ մեր անկախ պետականութիւնը, Քոչարեան՝ Արցախը դուրս բերաւ բնակչութեանց գործընթացէն եւ ունեցանք 20 տարիներու վրայ երկարող թալան, որուն պատճառաւ հասանք ուր որ ենք այսօր:

Այս բոլորէն բացառապէս կը դառնայ, որ որոշ ներքին եւ արտաքին ուժեր Արցախի հարցը շեղեցուցին իր սկզբնական ազգային ազատագրական շարժումի նպատակներէն, ծառայեցնելու համար իրենց հատուածական շահին՝ տիրանալու Հայաստանի իշխանութեան:

Առ ի հետաքրքրութիւն մեր ընթերցողներուն փակագիծ մը բանանք, կատարելու համար գուգահեռ մը: Ազրպէյճանի խորհրդայնացման (28 Ապրիլ 1920) յաջորդ օրն իսկ սպառնական հեռագիր մը կը դրկուէր Երեւան, հայկական զօրքերը մաքրելու Ղարաբաղի եւ Զանգեզուրի տարածքէն: Վրացեան կը գրէ. «Պէտք է ասել, որ Հայաստանը «ուսուցական գործողութիւններ» չունէր Ազրբէյճանում: Այդ ժամանակ տեղի էին ունենում Ղարաբաղի դէպքերը: Ղարաբաղի բնակչութիւնը մերժում էր ճանաչել Ազրբէյճանի իշխանութիւնը եւ ուզում էր միանալ Հայաստանին: Մուսաւաթական կառավարութիւնը, Խալիլ փաշայի օգնութեամբ, իր ամբողջ բանակը ուղղել էր Ղարաբաղի դէմ եւ աշխատում էր բռնի ուժով հպատակեցնել զարաբաղցիներին, որոնց խնդրանքով՝ օգնութեան էր գնացել Դրոյզի զօրամասը: Ազրբէյճանի խորհրդայնացման վայրկեանին գրեթէ ամբողջ Ղարաբաղը հայերի ձեռքն էր»: Գիտենք, սիրելի ընթերցող, որ Սթալինի պատճառաւ Ղարաբաղը յայտնուեցաւ Ազրպէյճանի սահմաններուն մէջ: Բայց գիտէի՞ք, որ այդ որոշման յանգող հինգ հոգիները մարմինը, նախ երեքով երկուքի դէմ քուէարկած էր յօգուտ Հայաստանի ու ապա յաջորդ օրը, Սթալինի ճնշման տակ, շրջեց իր որոշումը յօգուտ Ազրպէյճանի: Իր դիրքը փոխողը եղաւ այդ հինգ հոգիները մարմնի միակ հայ անդամը:

## Ռուս-թրքական յարաբերութիւններու ազդեցութիւնը Հայաստանի վրայ

Վրացեան կը գրէ. «Հայաստանի Հանրապետութիւնը ընկաւ թուրքերի եւ բոլշեւիկների միացեալ հարուածների տակ: Եւ առաջին հերթին բոլշեւիկների, որովհետեւ եթէ խորհրդային Ռուսաստանը չքաջալերէր ու չօգնէր, քեմալական թուրքիան, ա՛յն ժամանակուայ պայմաններում, համարձակութիւն չէր ունենայ յարձակուելու Հայաստանի վրայ»:

Որպէսզի գուգահեռներ տեսնենք այսօրուան հետ, եկէք նշենք այդ ատենուան իրադրութիւնը:

1.- Առաջին Համաշխարհային պատերազմը աւարտած է: Ռուսական ու Օսմանեան կայսրութիւնները փլած են եւ խորհրդային Ռուսիան ու քեմալական թուրքիան կը յառնին այդ փլատակներէն:

2.- Արեւմուտքը, յանձինս գլխաւորաբար Անգլիոյ եւ Ֆրանսայի, տարանջատած է Օսմանեան կայսրութեան հողատարածքը եւ լծուած իր ազդեցութեան գօտիներու հաստատման: Երկուքն ալ մտահոգ են Ռուսիոյ մէջի «աշխատաւորական դասակարգ»-ի յեղափոխութեան բերելիք զարգացումներուն վրայ, որոնք կը սպառնան իրենց գաղութատիրական շահերուն:

3.- Պարտուած Իթիհատ-Թերաքքի կուսակցութեան ղեկավարները, Թալէաթ Փաշայի գլխաւորութեամբ, Գերմանիոյ մէջ հակա-անգլիական ծրագիրներ կը մշակեն, որոնց կարգին՝ Միջին Ասիոյ իսլամական երկիրներուն մէջ յեղափոխական շարժում ստեղծել: Իսկ էնվեր Փաշա Ռուսիոյ մէջ գործունէութիւն կը ծաւալէ, պատրաստուելով բոլշեւիկ





# «Մուրճի Եւ Սալի» Կրկնուող Պատմութիւնը

օգնութեամբ անցնիլ թուրքիա եւ տիրանալ իշխանութեան, Մուսթաֆա Քեմալի պարտութեան պարագային: Թալէաթ, էնվեր եւ Քեմալ մրցակցութեան մէջ են, դեկավարելու նոր կազմաւորուող թուրքիան:

4.- Անգլիացիներու օգնութեամբ թալէաթ կ'ահաբեկուի Պերլինի մէջ, Սողոմոն Թեւրիբեանի ձեռքով: Լենինի կողմէ Պուխարա գործուողուած էնվերը, երբ գաղտնաբար կը գործակցի հակառակորդի հետ, շնորհէ կ'իյնայ ու կ'ահաբեկուի Յակոբ Մելքունեանի ձեռքով: Իսկ Մուսթաֆա Քեմալ կը դառնայ բոլորի սիրաշահութեան թիրախը, երբ 1919-ի կէսերէն սկսեալ, գործակցելով Քեազիմ Քարապէշիւրի հետ, կ'արձանագրէ ռազմական յաջողութիւններ եւ 1920-ի Ապրիլին կը դառնայ թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի նախագահ: Ան լաւագոյնս կը շահագործէ



Լենին-Աթաթուրք

խորհրդային Ռուսաստանի եւ Արեւմուտքի մրցակցութիւնը ի շահ իր ազգային նպատակներուն՝ օգտուելով բոլորէն:

5.- Հայաստանի ատենի իշխանութիւնները կը վարեն անհեռատես քաղաքականութիւն, շրջած Արեւմուտքի «հայերին տուած հանդիսաւոր խոստումներ»-էն (Վրացեան) եւ «գերագնահատելով մեր շատ համեստ արժանիքները՝ բնականօրէն չափազանցուած էինք նաեւ մեր յոյսերն ու սպասելիքները» (Քաջագունի): Ազրպէյճան, ի տես խորհրդային բանակներու յառաջխաղացին, Ապրիլ 28, 1920-ին կը հռչակէ Ազրպէյճանի խորհրդայնացումը, միաժամանակ գործակցելով քեմալականներու հետ: Մենք կ'ապաւինինք Արեւմուտքին Սելրով (Օգոստոս 20, 1920) բերելիք ծովից-ծով Հայաստանի խոստումներուն, որ աւելիով մեր դէմ կը լարէ թուրքն ու Ռուսը:

6.- Հայաստանի իշխանութիւնները, սպառած ըլլալով իրենց ուժերը, մէկ կողմէ կը համաձայնին իշխանութիւնը փոխանցել Ռուսիոյ (Նոյեմբեր 29, 1920), իսկ միւս կողմէ կը ստորագրեն Ալեքսանդրապոլի (Դեկտեմբեր 2, 1920) նուաստացուցիչ դաշնագիրը թուրքիոյ հետ:

7.- Հայաստան, Վրաստան եւ Ազրպէյճան կ'անցնէին նոյն խառնաշփոթ վիճակէն: Վերջին երկուքը շահաւետ դուրս կու գան, իսկ մենք՝ վնասով: Ի՞նչ վիճակ պարզուեցաւ անցնող երեսնամեակին:

1.- Պերլինի պատին փլուզումով, ազդանշանը տրուեցաւ համաշխարհային նոր համակարգի մը կազմաւորման: Գերմանիաները միացան եւ Խորհրդային Միութիւնը փլուզուեցաւ:

2.- Երկբեւեռ աշխարհը Խորհրդային Միութեան փլուզումով անցաւ ԱՄՆ-ի միաբեւեռ վերահսկողութեան տակ, զարկ տալով վերաբաշխումներու մրցակցութեան, որու արդիւնքներէն եղան Խորհրդային Միութեան բաղկացուցիչ հանրապետութիւններու անկախացումը, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի բռնկումը: Անկախ Հայաստանը փորձեց վարել հայանպաստ ազգային քաղաքականութիւն: Ազատագրուեցաւ Արցախը, ինչպէս նաեւ հայկական ուժերու հսկողութեան տակ անցան անոր յարակից 7 շրջաններ:

3.- ԱՄՆ-ի միաբեւեռութիւնը երկար չտեսնեց եւ աշխարհ սկսաւ ընթանալ բազմաբեւեռ ուղղութեամբ, գլխաւորաբար Չինաստանի վերահզօրացումով: Սկզբնական շրջանի խարխափումներէ ետք, Ռուսիան անցաւ իր ազդեցութեան գոտիի վերահաստատման գործընթացին: Մեզի համար, ատոր արդիւնքներէն մին եղաւ Հոկտեմբեր 27-ն, որուն յաջորդեց Հայաստանի «գրպանումը» «գոյք պարտքի դիմաց» առեւտուրով եւ 20 տարիներու մենատիրութիւն իր գործակալներուն միջոցաւ: Ասոնք

շահագործեցին առիթը, լեցնելով իրենց գրպանները եւ անտարբեր գտնուելով երկրի պաշտպանութեան ամրակայման, հակառակ ականատես դառնալով թշնամիի միլիարդաւոր տոլարներու սպառազինութեան:

4.- Ռուսական ազդեցութեան «վերադարձ» ի դաշտերէն մին հանդիսացաւ նաեւ Սուրիան, ուր բախեցան թրքական շահերուն հետ: Եւրոպայի կողմէ պաղ վերաբերմունքի արժանացած էրտողանի թուրքիան, հայեացքները յարեց Արեւելք, Իրաք, Սուրիա, մինչեւ իսկ Լիպիա, հետամուտ իր ազգային շահերուն, միաժամանակ վայելելով ԱՄՆ-ի աջակցութիւնը: Շահերու բախումը երկար չտեսնեց, երբ համագործակցութեան ուղիներ նշմարուեցան, որոնք երկուստէք աւելի շահաբեր թուելով, ծաւալեցան: Նոյնիսկ ռուսական ռազմական օդանաւի վարաւումը (Նոյ. 2015) թուրքիոյ կողմէ եւ Ռուս դեսպանի սպանութիւնը (Դեկտ. 2016) Իսթանպուլի մէջ, արգելք չեղան այս ծաւալման:

5.- Յուլիս 2016-ին էրտողանի դէմ ձախող յեղաշրջման փորձէն ետք, նշմարելի դարձաւ Ռուս-թրքական յարաբերութիւններու ծաւալումը: Սեպտեմբեր 2017-ին թուրքիա ստորագրեց 2.5 միլիարդ տոլար արժողութեամբ պայմանագիր մը, Ռուսիայէն գնելու S-400 հակաօդային պաշտպանական համակարգը: Ապրիլ 2018-ին Ռուսիա սկսաւ թուրքիոյ Սինոբ եւ Աքբուլու քաղաքներուն մէջ կառուցել լաթոմակայաններ, աւելի քան 20 միլիարդ տոլար արժողութեամբ: Ասոնք իրագործուեցան, հակառակ ԱՄՆ-ի բողոքներուն: Ռուսիա տարեկան թուրքիոյ կ'արտածէ 21 միլիարդ տոլարի ապրանքներ, իսկ թուրքիայէն կը ներածէ 4 միլիարդ տոլարի ապրանք:

6.- ԱՄՆ-ի կողմէ առեւտրային պատժամիջոցներու կիրառումը թուրքիոյ եւ Ռուսիոյ վրայ, այս երկուքը աւելի մօտեցուց իրարու: Փութին եւ էրտողան դարձան նորօրեայ Լենինն ու Մուսթաֆա Քեմալը: Փութին-Լենին կը փորձեն խրամատ բանալ թուրքիոյ եւ Արեւմուտքի միջեւ, մինչ էրտողան-Մ. Քեմալ կը շահագործեն առիթը:

7.- Այս իրավիճակէն օգուտ քաղողները եղան Վրաստան եւ Ազրպէյճան, իսկ վնաս կրողը՝ Հայաստան:

Նոյեմբեր 9, 2020-ի պայմանագիրը համանման է Նոյեմբեր 29, 1920-ի համաձայնագրին եւ Դեկտեմբեր 2, 1920-ի դաշնագրին: Օրին, հայ բոլշեւիկները եկան փոխարինելու ՀՅԴ-ին, եւ Քաջագունիի բնութագրութեամբ՝ «ապահովեցին անկախութեան այն աստիճանն ու այն ձեւը, որոնք միակ հնարինն են այսօրուայ պայմանների մէջ»: Այսօր, ժողովրդավարական հիմքերու վրայ պէտք է ձեւաւորուի այն ուժը, որ պէտք է ապահովէ Հայաստանի զարգացումը ազգային արեւելումի տեսլականով: Ո՛չ նախկինները եւ ո՛չ ալ ՀՅԴ-ն հաւակնութիւնը պէտք է ունենան առաջնորդելու այդ շարժումը: Վերջին 25 տարիներու անոնց գործունէութիւնը փաստ է, որ անոնք ատակ չեն վարելու այդ գործը: Մանաւանդ, պէտք է խոչընդոտ հանդիսանան այդ ուղղութեամբ տարուող աշխատանքներուն, ինչպէս ըրաւ ՀՅԴ-ն 1920-ականներուն եւ 1990-ականներուն եւ կը փորձէ ընել նաեւ այսօր: Հետաքրքրական է նկատել, որ ՀՅԴ-ն, հարիւրամեակ մը առաջ եւ մինչեւ 1970-ականներու երկրորդ կէսը, կը վառէր թունդ հակառուս քաղաքականութիւն, մեր թշնամին թուրքէն աւելի ռուսը համարելով, իսկ անկէ ետք 180 աստիճան շրջադարձ կատարած է: Մտածումի տեղի տուող հարց է, որ ազգային շահը, թէ՛ հատուածական շահն է այս շրջադարձի պատճառը:

Ուրեմն.

Ա.- Չայպանենք օտարները մեր գլխուն եկած այս նոր աղէտին համար: Եկէք չկրկնենք Վրացեանի խօսքերը. «Առարկայական փաստերի անաչառ ուսուցմանսիրութիւնը իրաւունք է տալիս պնդելու, որ Հայաստանի անկախութեան անկման պատճառները ներքին չէին, այլ գերագնացապէս արտաքին»: Այդքանով բաւականանալով, ու չծանրանալով նաեւ ներքին պատճառներուն վրայ, մենք դարձեալ մեր ճակատագրի տնօրինումը յանձնած կ'ըլլանք օտարին: «Պատմութիւնը ինքզինք կը կրկնէ» ասացուածքը ունի իր արամաբանական շարունակութիւնը՝ «միայն անոնց համար, որոնք պատմութեանէն դաս չեն քաղեր»: Դժբախտաբար մենք բազմիցս ինկած ենք ու տակաւին կ'իյնանք այդ շարունակութեան մէջ:

Բ.- Առարկայական քննարկումով քաղենք մեր դասերը այս աղէտէն ու ազգային համերաշխութեամբ լծուինք անոր դառն հետեւանքները վերացնելու ապաքինման աշխատանքին:



**ՄԵՐ ԶԻՆՈՒՐԸ 2Է ՊԱՐՏՈՒՄԸ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ՎԱՐԴԱՆ ԵՒ ԼՈՒՍԻՆԷ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ**



# «Մուրճի Եւ Սալի» Կրկնուող Պատմութիւնը

Արդեօք կրնայի՞նք խուսափիլ այս աղէտէն: Մեր պատասխանը այո՛ է: Թող անհամեստ չլինի մեր այս հաստատումը, որովհետեւ անոր հիմք կը ծառայեն անցնող երեսուն տարիներուն մեր գրած բազում յօդուածներու մէջ կատարած ախտաճանաչումները: Եւ այդ ախտաճանաչումներուն գլխաւորագոյնը, լաւագոյնս պարզաբանած են Յովհաննէս Քաջազնունին՝ «գործիքը սիրում էք աւելի, քան գործը» եւ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ «այլ տէրութեան խաղալիքը դառնալու մոլագարութիւնը դեռեւս որքան ժամանակ պէտք է լինի հայի կենսակերպը»: Մենք «արտաքին»էն աւելի, «ներքին»ի հզօրացումը ջատագոված էինք, որպէս հիմք ապագայ յաղթանակներու: Մեր «Անձնասիրութենէ դէպի ազգասիրութիւն», «Ինքնախաբէութենէ ինքնաճանաչութիւն եւ անդին», «Ամբողջ եւ մաս» եւ բազում նմանօրինակ յօդուածներով փորձած էինք այդ մտածելակերպը տարածել:

Կրնա՞ք պատկերացնել թէ այսօր ո՞ր հասած կ'ըլլար Հայաստանը, եթէ փոխանակ կրքեր հրահրելու, հանդարտ ու սթափ մտքով եւ հրապարակային քննարկումներով մեր առջեւ դրուած խնդիրներուն ԱԶԳԱՇԱՀ լուծումներ որոնէինք: Այդ պարագային տեղի պիտի չտունենար Հոկտ. 27-ի եղբայրասպանութիւնը եւ մեր պետականութեան գլխաւորագոյնը: Շատ հաւանաբար համամիտ պիտի գտնուէինք արցախեան ազատամարտի կերտիչներէն՝ նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ծրագրին՝ յաղթածի դիրքէն հասնիլ փոխ-գիշուումներով



Փութին-Էրտողան

Հայաստանի համար շահաւետ համաձայնութեան մը, փոխարինելով 1994-ի ժամանակաւոր հրադադարը: Այդպիսի համաձայնութեան մը պարագային, հաւանականութիւնը ստեղծած կ'ըլլայինք, որ Պաքու-ձէյհան նախատարը անցնէր յարմարագոյն ուղղիչին՝ Հայաստանէն, փոխանակ Վրաստանի: Նոյնը նաեւ երկաթուղագիծերու պարագային: Այդպիսի համաձայնութեան մը պարագային, աւելի զօրացուցած կ'ըլլայինք Հայաստանի անկախ պետականութիւնը: Բայց որո՞ւ համար շահաւետ չէր այդպիսի լուծում մը: Առաջին հերթին՝ Ռուսիոյ եւ անոր ծառայողներուն, որոնք «հայրենիքի պաշտպան»ի շղարշին տակ վնաս հասցուցին մեր հայրենիքին:

Դժբախտաբար այսօր ալ գործադրութեան դրուած կը տեսնենք 1998-ի բեմագրութիւնը (scenario): Նոյն ահաւոր ցեխարձակումները, խեղաթիւրումներն ու ապատեղեկատուութիւնները: Մենք կ'ափսոսանք, որ հրապարակի վրայ ելոյթ ունեցողներ ինչ խղճալի վիճակի մէջ կը յայտնուին, երբ մեր ներքին հարցերու լուծման համար կը շահագործեն օտարի՝ Փութինի, էրտողանի կամ Ալիեւի յայտարարութիւնները, անգիտանալով, որ անոնք այդպիսի խօսքերով պարզապէս իրենց երկրի շահերն են որ առաջ կը տանին ի հեճուկա մեր շահերուն, մեր երկիրը ապակայունացնելով: Որպէս գլխաւոր օրինակ, նշենք Փութինի մեղադրանքը, որ Հայաստան չէ ճանչցած Արցախի անկախութիւնը: Բայց փաստը այն է, որ Ռուսիան ալ չէր ուզած ճանչնալ Արցախի անկախութիւնը, որովհետեւ այդպիսով քաջալերած պիտի ըլլար իր ներսը գտնուող բազմաթիւ «Ղարաբաղներու» անկախութեան հռչակման: Բայց Ռուսիան ճանչցաւ Աբխազիայի եւ Օսեթիայի անկախութիւնները, ի հեճուկա Վրաստանի տարածքային ամբողջակա-

նութեան, երբ այդ թելադրեց իր շահը: Այսօրուան պայմաններէն մեկնելով, Ղարաբաղի անկախութեան հարցը հնչեցնելով, արդեօ՞ք Ռուսիա պատուհան մը կը բանայ կրկնելու Աբխազիայի եւ Օսեթիայի օրինակը, ի հեճուկա Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան եւ ի նպաստ իր շահերուն:

Ամբողջ քսան տարի հայրենիքը կողոպտողները այսօր կը ճառեն հայրենիքի փրկութենէն: Ամբողջ քսան տարի բանակի սպառազինութիւնն ու ռազմական ուժի հզօրացումը անտեսողները այսօր կը ճառեն բանակի դերի կարեւորութենէն: Ամբողջ քսան տարի մենատիրական վարչակարգի տակ ընտրութիւններ կեղծողներն ու օրէնքը ռոտակախողները այսօր ժողովրդավարութեան եւ օրինականութեան դասեր կը ճամարտակեն:

Այդպիսի գործունէութեամբ, ինչպէս 1998-ին, այսօր մենք աւելի եւս կը վտանգենք մեր անկախ պետականութիւնը, զայն դարձեալ գետեղելով օտարներու «մուրճին եւ սալին» միջեւ: Պէտք է միանգամընդմիջտ գիտակցիլ ազգային արեւելում ունենալու եւ ազգային շահը գերադասելու անհրաժեշտութեան վրայ: Այդ կարելի կը դառնայ, երբ կը գիտակցինք նաեւ, որ կազմակերպութիւններն ու կուսակցութիւններն պարզապէս գործիք են ազգին ծառայելու համար: Անոնք յաւերժական չեն ու չեն կրնար ըլլալ: Յաւերժականը հայ ազգն է, որ իր հազարամեակներու պատմութեան մէջ տեսած է շատ թագաւորութիւններ, հարստութիւններ, նախարարական տուններ, կազմակերպութիւններ, եւ այլն, որոնք եկած ու անցած են ծառայելով ազգին: Պէտք է առարկայականօրէն գնահատել ամէն մէկուն կատարած գործը իր ժամանակաշրջանին մէջ, բայց երբէ՛ք մէկուն վարկաբեկումով միւսը բարձրացնելու հաշուոյն: Պէտք է ի վերջոյ գիտակցինք, որ հայ ազգը բոլորիս ամբողջութիւնն է, եւ անոր մէկ մասնիկին հասցուած վնասը, կը վնասէ ամբողջի առողջութեան: Այնքան ատեն, որ չենք գիտակցիր այս պարզ իրականութեան եւ չենք առաջնորդուիր անորմով, պիտի յայտնուինք օտար ուժերու մուրճին եւ սալին միջեւ:

Դեկտեմբեր 18, 2020

Յ.Գ. Մեր յօդուածը հրատարակութեան ուղարկելնես ետք, Դեկտեմբեր 19-ին տեղի ունեցան այս պատերազմին զոհուած մարտիկներուն յիշատակի երկու սզոյ երթերը, որոնք մեզ մղեցին աւելցնելու այս յետ գրութիւնը:

Նախ, ցաւալի կը գտնենք երկու սզոյ երթերու երեւոյթը, փոխան համազգային երթի: Ասիկա մեզի կը յուշէ սկզբնական տարիներուն Եղեռնի յիշատակման անջատ նշումները Սփիւռքի մէջ: Որ դժբախտաբար ցոյց կու տայ երեւոյթի քաղաքականացումը:

Երկրորդ, գիտելով երկու երթերու տեսագրութիւնը, բացայայտ կը դառնայ կառավարութեան կազմակերպած երթի մասնակիցներու թիւին մեծ առաւելութիւնը, բաղդատամբ ընդդիմադիրներու կազմակերպածին: Որ ցոյց կու տայ, թէ ժողովուրդը հալած իւղի տեղ չ'ընկալել ընդդիմադիրներու «հայրենիքի փրկութեան» յայտարարութիւնները: Բայց միաժամանակ կը մտահոգուինք, երբ ականջալուր կ'ըլլանք իրավիճակը սրելու միտուած ընդդիմադիրներու ահաւոր յայտարարութեանց, ինչպէս օրինակ, «Նիկոլ Փաշինեանին ու կիսամարդկանց պատերի տակ սատկացնելու» վատիկանի մօտ նախկին դեսպանի իր հանգամանքին անվայել, Միքայէլ Մինասեանի յայտարարութեան: Կամ իր այն յայտարարութիւնը, որ «Խաչակիրները, յանուն եկեղեցուն, պատժի շատ տեսակներ չունէին: Վիրավորողի կա՛մ ականջներն էին կտրում, կա՛մ ոտքերը ջարդում»: Կրնա՞ք երեւակայել, որ ինչ ահաւոր վիճակի կրնայ մատնուիլ Հայաստանի պետութիւնը, հայրենի ժողովուրդն ու համայն հայութիւնը, այսպիսիներուն իշխանութեան գալով: Ո՞ր խելահաս մարդը այսպիսի մարդոց կրնայ վստահիլ հայրենիքի փրկութիւնը: Երբ յայտնին են ընդդիմադիրներու ետին կանգնող ուժերը եւ ուրկէ կը սնանուին անոնք, մեր մօտ կը խորանայ այն համոզումը, որ անոնց գործողութիւնները մեզ աւելի մօտեցուցած կ'ըլլան քաղաքացիական պատերազմի շեմին, քան՝ «հայրենիքի փրկութեան»: Իրավիճակը վատացնելով, անոնք կը նպատակադրեն խլել իշխանութիւնը եւ վերականգնել մենատիրութիւնը: Որմէ պէտք է խուսափիլ, իսկապէս փրկելու համար մեր հայրենիքը:

Դեկտեմբեր 20, 2020



# Հայ Թրքուհին

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿԵԱՆ

Պատերազմն սկսվելուց՝ աւելի ճիշտ վերսկսվելուց յետոյ Աջափնեակի նորահաս հարեւանուհիները՝ Յոլինէն ու Նուանէն, իրենց լքուած էին զգում: Քաղաքում հասակակից տղայ չէր մնացել: Ամենաճարպիկները ճակատ չգնալու-չգոհուելու համար ժամանակին արտասահման ու Ռուսաստան էին ճողոպրել, առողջական խնդիրներ չունեցողները զօրակոչուել էին. Երեւանում մնացել էին ակնոցաւոր հիւանդկախները: Հակառակի պէս Փարիզը, որ ոչ այնքան հեռաւոր տարիներին, նորաձեւութեան գունափայլ պարբերականներ թերթեւ լիս անասելի հեռու էր թւում, անսպասելի մօտեցել, մերձեցել էր: Աջափնեակի հարեւանները բնակարանները վաճառում, ամբողջ գումարը ներդնում, իրար հետեւից Փարիզ էին մեկնում: Չէին մեկնում, փախչում էին Հայաստանից: Նոյնը դեռահաս հարեւանուհիներին էին յորդորում, հաւատացնում էին, որ եթէ երկուսով Շան գ'էլիզէնում յայտնուեն, աշխարհի ամենագեղեցիկ ճեմափողոցն աւելի կը գեղեցկացնեն:

Յոլինէն ու Նուանէն որոշեցին գեղեցկացնել Փարիզը: Մինչդեռ Հայաստանի ֆրանսական դեսպանատան համապատասխան բաժնի աշխատակիցները օժանելիք բուրդ մարմարէ կիսանդրիներ էին, ոչ մի հարց չէին տալիս, ոչ մի հարցի չէին պատասխանում, ամէն անգամ հետ էին վերադարձնում հարցաթերթիկները, մարմարէ շրթունքները դժուարութեամբ շարժում:

Նպատակալարմար չենք համարում...  
Նրան առաջինը Նուանէն դեսպանատան առաջ, այրող արեւի տակ ժամերով հերթի սպասելիս նկատեց: Միջին տարիքի, վաշտուչ տեսքով, վաշտուչ ակնոցով, վաշտուչ թղթապանակով տղամարդ էր, հերթի երկարութեամբ քայլում, ուշադիր դեսպանատուն մտնող ելլողներին էր գնում:

Երբ երրորդ, ինչպէս աղջիկներին թուաց, վերջին անգամ ու վերջնականապէս բացասական պատասխան ստացան, դեսպանատան դիմացի բազմալարիլ բարձրացան, սրճարանի ապակեձածիկ բացօթեակը մտան: Պատրաստ էին ոչ թէ սուրճ պատուիրել, եօթերորդ յարկից ցած նետուել, դեսպանատան ճաղաչարի առաջ ջախջախուել, օժանելիք բուրդ մարմարէ կիսանդրիներից այդպէս վրէժխնդիր լինել:

Վաշտուչ տեսքով, վաշտուչ ակնոցով ու թղթապանակով տղամարդը, ասես իմիջի աչրոց, պատահաբար յայտնուեց: Նախ նրանց սեղանին մօտենալու թոյլտուութիւն խնդրեց, երբ չմերժեցին, այցետոմսը մեկնեց, դեռատի դիցուհիների դիմաց տեղաւորուելով՝ մտերմի հոգածութեամբ հարցրեց: Իբր չգիտէր.

- Ինչն է այդպէս վշտացրել գեղեցկուհիներին:
- Աղջիկները նողկանքով հանդիպակաց շէնքը ցոյց տուին: Իրենք էջ, դեսպանատան ճաղաչարի առաջ ջախջախուել էր Փարիզի Շան գ'էլիզէն ճեմափողոցը, որտեղ իրենց ֆրանսական հանրահռչակ կիրառեմադրիչներ պիտի մօտենային, առաջիկայ ֆիլմաշարում նկարահանուելու հրաւիրելին:
- Իսկ ինչո՞ւ էք Ֆրանսա մեկնելու համար ֆրանսական դեսպանատանը դիմում,- զարմացած թուաց տղամարդն ու սուրճ առաջարկեց:
- Բա ո՞ւմ դիմենք,- տարակուսեցին աղջիկները:
- Տղամարդն աչքն անգամ չթարթեց.
- Ինձ:

Յոլինէն ու Նուանէն հայեացք նետեցին անծանօթի այցետոմսին, գլխի ընկան, որ միջազգային կարեւոր ճամբորդական ընկերութեան պատասխանատու է:

-Եթէ ուզում էք Ֆրանսա մեկնել,- հածող հայեացքով շարունակեց պատասխանատուն,- առանց որեւէ արտոնագրի կամ ուղեթղթի, ձեր ցանկացած առաւօտն ինձ հետ նստում էք Թուրքիա մեկնող շարժակառքը, երեսունուեց ժամից անարգել հասնում ենք Ստամպուլ: Ստամպուլի օդանավակայանում ես ձեզ ինքնաթիռ եմ հասցնում, ու նոյն օրը երեկոյեան վայրէջք էք կատարում ձեր երազած մայրաքաղաքում:

Շան գ'էլիզէն, ֆրանսական ֆիլմաշարերում նկարահանուելու հեռանկարը, որ ջախջախուել էին դեսպանատան ճաղաչարի առաջ, յարութիւն էին առնում:

Այնուամենայնիւ երկու դեռահասներն էլ խուզարկուի գործիմացութեամբ աւելի ուշադիր քննեցին պատասխանատուի այցետոմսը, բնակավայրի ու աշխատավայրի հասցէները, հեռախօսահամարները, բազում այլ տուեալները, համոզուեցին, որ կասկածելու պատճառ չունեն.

- Իսկ ինչով ենք մենք փոխհատուցելու այդ հաճոյքը:
- Եթէ կանխիկ ի վիճակի չէք,- ապահովեցրեց,- կարող էք Փարիզ հասնելուց, աշխատանք գտնելուց յետոյ դրամն իմ գործակալութեանն առաքել: Ես ձեզ վստահում եմ, կ'ուզէի, որ դուք էլ ինձ վստահէիք:

Նուանէն, սակայն, ի տարբերութիւն Յոլինէի, միամիտ չէր, մտածելու համար մի շաբաթ ուզեց:

-Խնդրե՛մ, խնդրե՛մ, խորհրդածէ՛ք, խորհրդակցէ՛ք ինչքան ուզում էք, ում հետ ուզում էք,- իսկոյն ընդառաջեց պատասխանատուն ու աղջիկների անձնագրերը վերցրեց:

Նախնական ձեւակերպումների համար:

Այդ մի շաբաթուայ ընթացքում աղջիկները խորհրդածելու կամ խորհրդակցելու փոխարէն՝ է՛լ աւելի էին սիրունանում: Ապագայ փարիզուհիներն արագ-արագ լցնել տուին շրթունքները, ուռնացրին ստիւնքները, նօսրացրին հոնքերը, թանձրացրին արտեւանունքները: Ուզում էին հայկական քթերն էլ կրճատել, չհասցրին: Գեղագիտական վիրահատարանում ամիսների, ոմանք հաւատացնում էին՝ տարիների հերթ էր:

Մեկնելու առաւօտը, ինչպէս եւ նախօրօք պայմանաւորուել էին, որպէսզի ծնողներին չարթնացնեն, շատ շուտ դուրս եկան տնից: Երկուսն էլ խոհանոցի սեղանին գրութիւն էին թողել՝ «Մենք մեկնում ենք, մեզ մի՛ որոնէք, հենց տեղ հասնենք, կը յայտնենք»:

Վաշտուչ տղամարդն իրենցից շուտ էր եկել, երաժշտանոցի պուրակում՝ Կոմիտասի արձանի մօտ, հետ-առաջ սպասում էր: Հարեւան կայանատեղիում կառանել էին Երեւանից Ստամբուլ ուղեւորուող շքեղ շարժակառքերը: Յոլինէն ու Նուանէն գեղեցիկ իրենց տեղերը, ուղեձամպուրակները տեղաւորելուց յետոյ, երբ շուրջըտուրը նայեցին, իրենք իրենց աչքից ընկան: Չէին իմացել, որ Երեւանում այդքան հմայիչ, առինքնող կին ու աղջիկ կայ: Ընդ որում ոչ մէկը միւսին չէր ասում, թէ ո՛ւր, ինչո՛ւ է գնում, նայում էին իրար, յուսադրող ժպտում:

Ճանապարհին պարզուեց, որ վաշտուչ տղամարդը նաեւ կնամեծար է: Կեսժամեայ դադարներին նա Յոլինէին ու Նուանէին հերթական հանգստարանն էր հրաւիրում, նրբանկատօրէն ցոյց էր տալիս գուգարանը, լուացարանը, ապա արեւելեան նրբնտիր թխուածքներ էր հիւրասիրում, իսկ ինքը նամագի համար անհետանում էր հանգրուանների աղօթասենեակներում: Նա, չնայած հայաստանեան սահուն հայերէն էր խօսում, ըստ երեւոյթին հաւատացեալ մահմետական էր:

Ստամպուլն անսպասելի յայտնուեց, քնից զարթնող պչրուհու պէս ձգուեց, գլուխը հանգչեցրեց եւրոպական ափի գով բարձունքին, գիտերը ասիական ափի հովիտները մեկնեց: Նրա մեղկ մարմինն օրօրում էր Մարմարայի ալիքների վրայ, ու որքան շարժակառքը մօտենում էր, այնքան սուլթանական հարեմում հեծող յունական դիցուհու էր նմանում: Ճամբորդական ընկերութեան պատասխանատուն վարձակառքով աղջիկներին հիւրանոց հասցրեց, վերին՝ 13-րդ յարկի շքեղ յարկաբաժինն առաջնորդեց: Նորից յարդարանքի ժամանակ յատկացնելով՝ համազամ ընթրիք պատուիրեց: Բնական համարեց, որ աղջիկները չեն խմում, պարպեց վիսկիի առաջին, երկրորդ, երրորդ բաժակը, ապա յարկաբաժնի դուռը ներսից կողպեց, «Չեմ ուզում մեզ խանգարեն»՝ տեղը վերադառնալով աչքերով ժպտաց, դեռեւս Երեւանում աւուրեցած բարեհաճ ձայներանգով շարունակեց.

-Կարծում եմ՝ ժամանակն է, որ մենք մօտիկից ծանօթանանք: Ուզում եմ ինձնից սկսել: Ես վարժ հայերէն եմ խօսում, որովհետեւ Հայաստանում ծնուած, մեծացած ատրպէյճանցի եմ: Մեր գիւղը՝ Ախնաբաղը, հայերը հիմա Աղաւնավանք են վերանուանել, Դիլիջանի անտառներում էր, ամպերին քսող կենիներ, լեռներից բխող աղբիւրներ, Անապատի Սուրբ Աստուածածին անունով միջնադարեան վանք ունէր: Բայց ձեր ֆիդայիները խլեցին մեր ջեննեթը, Հայաստանից քշեցին, անտուն ու անտեր թափառական դարձրին: Տատս Ախնաբաղի սառը ջրին կարօտ՝ ծարաւ մեռաւ: Ես էլ վրէժս հսպէս եմ լուծում՝ ձեզ նման մանկամարդ աղջիկներին բերում եմ Ստամպուլ, թուրքերի կրքերին եմ յանձնում, փճացնում, հետ եմ ուղարկում...  
Նա ոսկեշար ատամների նենգաբարոյ փայլով քռքռած, հրճուեց աղջիկների ահաբեկութեամբ, աւելի դաժանացաւ.

-Արդէն ուշ է, չգողաք, չճչաք, աղմուկ չբարձրացնէք, անձնագիր, ինքնութեան ոչ մի վկայական չունէք, հստեղ դուք ոչ ոք էք, աւելին ասեմ՝ ոչնչութիւն էք: Սուսուփուս էս հիւրանոցում կայրէք, հիւրանոցի հանրատանը կը ծառայէք: Թէ որեւէ յաճախորդի մերժել կամ ասածը չէք արել, ոնց որ հերս ուսմադանին գառների վիզն էր կտրում, տանջելով, շարչարելով, երկուսիդ վիզն էլ կը կտրեմ:

Հայաստանցի ազերին վիսկիի կիսատ բաժակը պարպեց, ոտքի ելաւ.

-Իմացէ՛ք, ես մի ուխտ էլ ունեմ՝ իմ բերած կոյսերին սրա-նրա ուխտը պցելուց առաջ, նախ ինքս պիտի վաշտուչ:

Պիջակի կոճակը քանդեց, փողկապը թուլացրեց, հայեացքով մերկացրեց



**ՄԵՐ ԶԻՆՈՒՈՐԸ ԶԷ ՊԱՐՏՈՒՄԸ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ՍԻՄՈՆ ԵՒ ԺԱՆԷԹ ՍԻՄԻԹԵԱՆ**



ՄԱՍԻՍ - 2021

# Հայ Թրքուհին

դրացուհիներին, Նուանէին ընտրեց.

-Քեզնից սկսենք, Երեւանում շատ էիր ճտպուում:

-Անասուն,- վրան ծանրացող փքուած որովայնը սուրսայր կրունկով մի կողմ հրեց, թուաց պայթեցրեց Նուանէն,- Արցախում կռուող եղբորս գլուխը քո պէս հրէշը... բա ես իմ պատուին թույլ կը տամ, որ մատով դիպչես...

Մտածելու ժամանակ չեղաւ: Չէր կարող լինել: Բաց պատուհանի գոգին աղջկական կիսամերկ կերպարանք յայտնուեց, սուր ճիչ լսուեց, որը տասներեք յարկերի արանքում դանդաչեց, հեռուում ինչ-որ տեղ մարեց:

Մինչ հայաստանցի ազերին անակնկալի եկած, այլաչլուած, անելիքն էր որոշում, դուռը բռնուցքներով բախեցին, ու քանի որ չէր բացուում, խորտակեցին: Ներս խուժեց անհաստախի մի տղամարդ: Նա խոյացաւ ազերիի վրայ, ճերմակ վերնաշապիկը, թուաց, կրծքի մսերի հետ բռան մէջ ճմրթեց, մռնչաց:

-Ստամբա՛կ, քեզ չասի՞նք Հայաստան քիչ գնաս-գաս, կաւատութեանդ վերջ տաս: Ո՞ւր են անձնագրերը...

Չսպասեց, որ տայ, բռնուցք արած մատներով գետին շարեց ազերիին, թղթապանակը բացեց, անձնագրերը գրպանեց: Այդ ժամանակ էլ նկատեց պատին փակած, պատի գոյն դարձած Յոլինէին:

Ձեռքը բռնեց, տարաւ:

Հիւրանոցի անդաստակում անցորդ թուրքերն ու տարբեր յարկերի զինուորները խոնուել, խառնուել էին իրար: Յոլինէն նրանց կողմը չնայելով հանդերձ գլխի էր ընկնում, որ Նուանէի մարմինն են շրջապատել, առանց ճանաչելու նրա մասին վարկաբեկող դատողութիւններ են անում, վիճում: Դեռ հեռուից կաղկանձելով՝ տեղ հասաւ ոստիկանական ծառայողականը, ապա եւ բժշկականը:

Ահրատեսիլ տղամարդը հիւրանոցային սպասարկուի արտագետով էր, պինդ բռնել էր Յոլինէի դողողացող մատները, թույլ չէր տալիս, որ մօտենայ, գոնէ իմանայ՝ ընկերուհին ո՞րք է: Նա հաստատ հօր տարիքին կը լինէր, հայեացքը խիստ, խոժոռ էր, Յոլինէին փողոցն անցկացրեց, հանդիպակաց չէնքը տարաւ: Արեւմուտքում կանգնեց, իրեն ցոյց տուեց՝ «Մեհմեդ» ասաց: Յոլինէն «Յոլինէ» ասաց, տղամարդն ուզեց կրկնել, չկարողացաւ, ձեռքը թափ տուեց, աստիճաններով վեր բարձրացրեց: Նա բանալին ունէր, բացեց 4-րդ, թէ՛ 5-րդ յարկի միակ դուռը, հայ աղջկան մի ընդարձակ սենեակ մտցրեց, որի յատակին ծայրեծայր գորգ էր փռած, պատերի տակ բարձեր էին շարուած: Մի խումբ կանայք, մէկը աւելի տարիքով, միւսները՝ ջահել, գորգին ծայրատիկ նստել, իրար շատ ծիծաղելի բան էին պատմում, քրքրում: Ներս մտնողներին տեսնելով՝ իսկոյն լրջացան, վարչամականքը գլխներին քաշեցին, պատին կպան: Նա, որ աւելի տարիքոտ էր, ոտքից գլուխ նախ Մեհմեդին չափեց, յետոյ Յոլինէին, տեղից կտրուկ ելաւ, աղջկայ թեգանիքի բռնելով՝ խիստ շարժումով լոգասենեակը ցոյց տուեց: Յոլինէն ցալուում, տաք ջրի շիթերի հետ աւելի տաք՝ արցունքներն էին հոսում: Չէր հասկանում, թէ՛ հահրատեսիլ տղամարդն իրեն ո՞ւր, ինչո՞ւ է բերել: Կարգին չլողացած՝ նախասրահ ելաւ, հայեացքով շորերը որոնեց, չգտաւ: Յաճիրիկ աթոռակին իրար վրայ դարսուած էին մարմնի, ոտքի գատ-գատ սրբիչներ, ամենայն հաւանականութեամբ ներսի ջահել աղջիկների չհագած ներքնագգեստներ, տնագգեստներ, գիշերագգեստներ... Ո՞վ գիտէ ցալուելու ընթացքում անվրատեսիլ տղամարդն ինչ էր պատմել, հենց գգեստափոխուեց, նստասրահ վերադարձաւ, բոլորն սկսեցին ժպտալ իրեն, տարիքոտ կինը փարուեց, թշերը պաչեց, աղջիկները խոհանոց տարան, որ կերակրեն: Ուտելիք տեսաւ, նորից լաց եղաւ, ձեռք տալ չկարողացաւ: Մեհմեդը բարկացաւ աղջիկների վրայ, Յոլինէին նստասրահից բացուող բազմաթիւ դռներից մէկը տարաւ, ներս մտցրեց, ետեւներից փակեց: Խորդանոցի նման նեղլիկ սենեակում հագիւ մի մահճակալ էր տեղաւորուել ու նախազարդ սնդուկ, որից Աջափնեակի հայրենադարձ պառաւները հոտն էր գալիս: Յոլինէն կարծեց՝ Մեհմեդն իրեն այս խուցն է բերել, որ ինքն իր հետ մենակ մնայ, քնի, հանգստանայ, հայեացքը մահճակալին շրջեց, վերմակի տակ շուշանի նման ճերմակ դէմքով, փակ աչքերով մի ծերուհի նկատեց: Նա չէր շարժուում, թուում էր՝ չի էլ շնչում: Մեհմեդը կռացաւ, միայն մի, ինչպէս Յոլինէին թուաց, գաղտնաբառ ասաց, աւելի շուտ շնչաց, Յոլինէին թողեց, ինքը ոտքի մատների վրայ, փախչելու պէս դուռը գնաց:

Ծերուհին շարժուեց, ուզեց աչքերը բացել, չկարողացաւ, կոպերը հագիւ թրթռում, երեւի իրեն չէին ենթարկում:

Մէկ էլ գերեզմանային, աւելի հեռաւոր՝ անդրաշխարհային ձայն լսուեց.

-Հա՞յ ես, աղջիկս:

Յոլինէն չկողմնորոշուեց՝ իրեն թուաց, թէ՛ իրօք այդ հարցը՝ հայերէն լսեց, խեղդուկ կմկմոցով արձագանքեց: Ծերուհին վերմակի տակից հանեց դիակի պէս պող, հողագոյն, արդէն հող բուրող մատները, որոնեց, գտաւ Յոլինէի ձեռքը, դէմքին մօտեցրեց, ճերմակ ճակատին, այտերին քսեց: Արցունքները փակ կոպերի տակից հոսում, ներծծում էին թշկալի ծալքերում:

Ու յանկարծ շրթունքները շարժուեցին: Ծերուհուն թուում էր, թէ խօսում է, բայց քանի որ ուժ չունէր, աւելի շուտ մտքում, առաջին անգամ հայերէն պատմում էր այն, ինչ ամբողջ կեանքում խոստովանանքի պէս ուզել էր պատմել ու խոստովանահայր չէր գտել:

Յոլինէն այդ պատմութիւնը գիտէր: Մինչ այդ մէկ միլիոն հինգ հարիւր հազար հոգի պատմել էր: Դու Չնքուշում եղե՞լ ես, աղջիկս: Ափսո՛ս, խոստացիր, որ անպայման կը լինէս, Ծովառ լեռը, Եփրատի ինձահովիտը կը տեսնես, կը հասկանաս, թէ ինչու չնքուշիները բռնազաղթի հրամանն ստացել, բայց չէին կարողանում իրենց լեռնաշխարհից բաժանուել: Երբ գաւառապետը տարհանելու համար զօրք ուղարկեց, տղամարդիկ ըմբոստացան, գէնքերն առան, լեռ բարձրացան: Չնքուշ ներխուժած ասկեարները մոլեգնեցին, 5700 անպաշտպան կանանց, երեխաների ոչ թէ մորթեցին, Տիտանի քարակարկառներից վիհը նետեցին: Մայրիկս փաթաթուել է ինձ, մարմինը սուրսայր ժայռերից ջախջախել, բայց ինձ անվնաս հովիտ է հասցրել: Ես այդ ամէնը չեմ լիշում, յետոյ, երբ ողջ մնացած կանանց, երեխաներին հաւաքեցին, որ Տէր-էլ Ջօր աքսորեն, Եփրատի ափին, դադարի մեր հանգրուանում Չնքուշի դրացուհին պատմեց: Մայրս սալջարդերից տնքում, բայց ինձ յուսադրում, հաւատացնում էր, որ հայրիկը գէնքը ձեռքին գալու, մեզ ազատելու, ես՝ տուն է տանելու: Ես Եփրատի աւազափին խաղում էի ինձ հասակակից աղջիկների հետ, հայրիկիս սպասում: Մի օր էլ գետի ալիքները Չնքուշի մեր տղամարդկանց բերեցին: Նրանց, որ գէնքերն առել, լեռ էին ելել: Ուշադիր նայեցի, հայրիկիս գտայ:

-Մամա, մամա,- բղաւեցի,- շո՛ւտ արա, արի՛, հայրիկը եկաւ:

Մայրիկը վագեվագ մօտեցաւ, հայրիկին նկատեց, չհամբերեց, գետը նետուեց: Ես տեսայ, թէ ինչպէս լողալով մօտեցաւ, մագերից բռնեց, բարձրացրեց, ճշալով ձեռքից թողեց: Հայրիկի մարմինը չկար, գետը միայն անճիտուած գլուխն էր բերել: Մայրիկը անհագարուել էր, ինձ գրկած քայլում, անընդհատ խօսում էր.

-Ես չեմ դիմանալու, մեռնելու եմ, շուշանի պէս աղջկաս ո՞ւմ եմ թողնելու:


Երբ Հաղթուկ գիւղը հասանք, նա արդէն քայլել չէր կարողանում, չոքեչոք աղբիւրին մօտեցաւ, կուժը լցնող մի ջահել թրքուհու աղբսեց.

-Բա՛ջի, էլ տանելու ուժ չունեմ, ինչ կը լինի, մի հատիկիս քեզ թողնեմ, թէ ողջ մնացի, ետ եկայ, չարչարանքդ ապաշխարանք կը համարեմ, կը վերցնեմ, թէ չեկայ, դու Աստծոյ պարգեւը կը համարես, քո գաւակի պէս կը մեծացնես, տուն-տեղ կը դարձնես, կը վայելես:

Թրքուհին համաձայնում է, որովհետեւ մանկուց երագել էր աղջիկ ունենալ, բայց ամուսնացել, եօթ տղայ էր ունեցել: Երեւի կարծում է Ալլահը վերջապէս կատարել է նուիրական փափաքը, առջեւը չոքած հայուհու միջոցով ճեննեթից ճերմակերես հրեշտակ է ուղարկել. որբուկին վերցնում, անունը հենց այդպէս՝ Բեյագիւկ՝ Լուսերես էլ դնում է:

Հոգեմայրս, հոգեհայրս, նրանց եօթ տղաներն ինձ շատ էին սիրում, ճաշի ամենահամեղ պատառներն էին պնակս դնում, բայց, միեւնոյնն է, ես մայրիկիս կարօտում, անհամբեր վերադարձին էի սպասում: Խոստացել էր: Ինչ իմանալի, որ ինձ յանձնելուց յետոյ աքսորի քարաւանին էլ չի հասել, գիւղի հանդերում ուժասպառ ընկել ու հոգին չաւանդած՝ գիշանգղներին կեր է դարձել: Տարիներ անց հոգեմայրս ինձ ցոյց տուեց նրա հագուստի ծուխները. քաղցրարմատ հաւաքելիս էր գտել... Ես ապահով մեծանում ու որքան մեծանում, երեւի այնքան սիրունանում էի. նկատում էի՝ գիւղի տղաները ժամերով սպասում էին, որ ջրի գնամ, հեռուից գոնէ դէմքս տեսնեն: Հոգեհայրս, հոգեմայրս վախեցան, որ բեկերն ու բեյերը մի օր ինձ կը փախցնեն, իրենց հարձը կը դարձնեն, արբունքի չհասած՝ ամենամեծ տղայի՝ Մեհմեդի հօր հետ ամուսնացրին: Հաղթուկ գիւղում ճերմակ աղիճ էի, ճերմակ հարսուկ դարձայ: Մեր Չնքուշը մեզնից խլած, հօրս գլխատած, մօրս մարմինը ջախջախած, ողջ-ողջ վայրի գազաններին կեր դարձրած ազգի երիտասարդի հետ ամուսնանալիս ես խղճի խայթ չզգացի, այն ժամանակ ուրիշ միջոց չունէի, բայց մի մեղք գործեցի, որի համար մինչեւ հիմա Աստուած ինձ չի ներում:

-Ի՞նչ մեղք, տատի ջան, ինչի՞ համար չի ներում:



**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ՅԱՐՈՒԹ ԵՒ ՌՈԶԻՆ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ**



# Արշակ Գազանճեան Խմբագիրն ու Գրողը ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՍ

Խմբագիրի եւ խմբագրականներու մասին արդարացիօրէն արտայայտուելի բաւական դժուար հարց է, երբ խնդրոյ առարկան ամբողջ կեանքի մը ընթացքին, այլազան ժամանակներու եւ միջավայրերու, կացութեանց եւ տազնապներու արգասիքը եղած է ան: Այս մօտեցումով, կը խորհիմ որ լաւագոյն ձեւը պիտի ըլլար ողջունելի սոցն հատորին բոլոր յօդուածները դարձեալ ընթերցել՝ կարենալ հաղորդուելու համար յարափոփոխ ժամանակներուն եւ վայրերուն իւրաքայտուկ մթնոլորտին հետ: Եթէ գրողին համար ամրագրուած է ժամանակին հեւքին արձագանգը դառնալ, լրագրող խմբագիրէն ոչ միայն այդ հետեւողականութիւնը կը պահանջուի այլ մանաւանդ կ'անկալուի որ ինք ստեղծէ այդ տուեալ ժամանակն ու ձեւաւորէ անոր հոլովոյթն ու յառաջընթացը:

Արշակ Գազանճեան աւելի քան յիսնամեակ մը ստանձնած է այդ յանձնառութիւնը եւ իր գրիչով, անշեղօրէն, պարկեշտութեամբ, քաջութեամբ, հմտութեամբ եւ շնորհալի վայելչութեամբ ծառայած է մեր հասարակութեան, անոր հոգեկան կեանքին ջամբելով հայրենասիրութեան վեհ զգացումն ու գիտակցութիւնը, «Հայաստան»ը ամէն բանէ վեր դաւանանքը իւրացնելով: Եւ ասիկա ինքնին արդէն բարձրագոյն արժանիքը կը նկատեմ հայ մտաւորականին ընդհանրապէս եւ Սփիւռքահայ տարագիր մտաւորականին՝ մասնաւորապէս:

Չեմ անգիտանար որ որդեգրուած այդ ուղին յաճախ եղած է փշոտ ու նոյնիսկ վտանգներով առլցուն, ոչ միայն ներքին մախանքներով եւ ուռացումներով, այլ նոյնիսկ օտար ուժերու հալածանքով եւ սպառնալիքներով ամբողջացած:

Արշակ Գազանճեան որդեգրելով այդ դժուարին ուղին, գիտակցօրէն, անձնուիրաբար գոհած է իր կեանքէն շատ բաներ, որոնց գլխաւորը կը նկատեմ իր գեղարուեստական գրականութիւնը, որ ունեցաւ փայլուն սկզբնաւորութիւն մը «Մերին Ամերիկան» յաջող ուղեգրական վէպով, ուր սուր դիտողականութեան մը կողքին, կը ճառագայթէր նրբին հիւմոր երգիծանքն ալ:

Աւաղելով հանդերձ այս «շեղում»ը, բարի երթ կը մտայթեմ իր լրագրական սոցն հատորին, որուն ընթերցումը, վստահ եմ, պիտի մեր մէջ վերարծարծէ ազգային հին ու նոր մեր մտահոգութիւններն ու մտորումները:

## Հայ Թրքուհին

Շարունակուած էջ 15-էն

-Ես մզկիթում ամուսնացալ ու իմ ազգութիւնը, կրօնն ուրացալ, մահմետական թրքուհի դարձալ. իմամը համոզեց: Տե՛ս, հրեշտակները որքան ժամանակ է շուրջս պտտուում, բայց հոգիս չեն առնում-տանում, ինձ դրուժան են համարում:

Միջանցքում ոտնաձայներ լսուեցին, ապա հրահանքներ հնչեցին: Այս անգամ տանտիրուհին յայտնուեց, Յոլինէին ձեռքով դուրս կանչեց: Երկու ոստիկան եկել, հետները Աջափնեակի պարոն Յարութիւնին շատ նման թարգման էին բերել: Առաջինը նա՛ հենց պարոն Յարութիւնի պէս էլ խօսեց:

-Աղջիկս,- կողքին նստեցնելով՝ յորդորեց հայրաբար,- հոս Հայաստան չէ, ոստիկանները ինչ որ հարցնեն, պէտք է ճիշդը պատասխանես, դուն վախնալու պատճառ չունիս, ձեզի բերողին մեծ պատիժ կը սպասէ:

Ոստիկաններից մէկը Յոլինէին խօսեցնում, միւսը գրառում էր: Երկուսն էլ մերթ գարմանքով, մերթ գայրոյթով թարթում էին աչքերը:

-Վերջին հարցը, օրիորդ, Դուք ցանկանում էք մեր երկրո՞ւմ մնալ, թէ՞ Հայաստան վերադառնալ:

- Հայաստան, Հայաստան,- այնպիսի ձայներանգով աղերսեց Յոլինէն, որ թարգմանելու հարկ չեղաւ:

-Հայաստան,- գլխով հաստատեց Մեհմեդը:

-Բայց մենք ձեր երկրի հետ դիւանագիտական յարաբերութիւններ չունենք, Ձեր ընկերուհու մարմնի տեղափոխման, ձեր ուղեւորութեան ծախսերը հոգալ ի վիճակի չենք:

-Ես կը հոգամ,- նորից գլխով միջամտեց Մեհմեդը:

Ոստիկանները կասկածով նրան նայեցին:

-Դուք անձանօթ աղջիկների հետ ի՞նչ կապեր ունէք, որ մեզնից թաքցնում էք, ինչո՞ւ էք նման ծախսեր անում:

-Ոչ մի կապ էլ չունեմ,- այս անգամ ուսերը թոթուեց Մեհմեդը,- մօրս հոգու համար եմ անում:

## 133 Տարի Ժողովուրդին Հետ



Անցնող Նոյեմբերին Ս.Դ.Հ. կուսակցութիւնը բոլորեց իր ծննդեան եւ հիմնադրութեան 133-րդ Տարեդարձը: 133 տարի Հայ Ժողովուրդին ի սպաս, Մայր կուսակցութիւնը միշտ ալ արթուն պահակը եղաւ անոր եւ հարատւօրէն պաշտպանեց անոր շահերը, առանց շեղելու իր ժողովրդավար սկզբունքներէն:

Դար մը՝ եւ երեսուն երեք տարի ետք, ահաւասիկ 1938-ի ՀՆԶԱԿ-ի էջերէն գրութիւն մը որ կարծէք այսօր գրուած ըլլար ... այս դժուարին օրերուն, թէ հայրենիքի եւ թէ սփիւռքի մէջ, Հայը կրկին անգամ կարիքը ունի վերաշխուժանալու, իր ուժերը հաւաքելու եւ իր հայրենիքին Տէրն ու տիրականը դառնալու....:

Եւ ահաւասիկ .-

«Անուրանալի է, որ տնտեսական ծանր տագնապ մը տակնուվրայ կ'ընէ ամբողջ աշխարհ եւ երբ ասոր վրայ բարդենք մեծ եւ փոքր պետութիւններու ձգտեալ, պատերազմաշունչ դրութիւնը, դասակարգային պայքարներն ու բաղխումները՝ որ տեղի կ'ունենան շատ մը երկիրներու մէջ, մարդկային ողբերգութիւնը կատարեալ կ'ըլլայ:

«Պահը հասած է, որ մենք ոտքի կանգնինք եւ ուժգին թափով մը առաջ նետուինք, ցոյց տալու համար, թէ այն գաղափարը՝ որուն նուիրուեցանք եւ որուն համար գոհուեցանք անտեսելով հալածանքներ եւ գնդակ, աքսորանքներ ու կախաղաններ, իր ծրագրին մէջ կը բովանդակէ սէր եւ աջակցութիւն դէպի տառապած եւ դարատանջ հայ ժողովուրդը, զայն ազատագրութեան շաւղին մէջ նետելու եւ միանգամ ընդմիշտ արմատախիլ ընելու բոլոր այն վերքերը որոնք խոցոտեր, թարախոտեր եւ պատառ-պատառ դարձուցած են մեզ:

«Պահը հասած է որ մենք ամենուրեք եւ բոլոր մեր շրջաններով՝ շարժուինք մեր սերմնացանէն, մեր մայրերու հեղեղահոս արցունքներէն եւ անհամար ու անմեղ զոհերու գերեզմաններէն, մեր ժողովրդավար ծրագրէն անուղ տալով մեր ազգին ու հայրենիքին:

«Թող անգամ մը եւս հրապարակ զան իրենց ուսումներով մեր բոլոր հերոսներն ու հերոսուհիները, թո՛ղ անգամ մը եւս մեր գաղափարական ճառագայթները սիւռուին ամեն դի, թո՛ղ անգամ մը գէթ յարութիւն առնեն իրենց գերեզմաններէն Չէյթունն ու Սասունը, Փոքր Հայքն ու Կիլիկիան, Ծոփաց Աշխարհը, Բարձր Հայքն ու Վասպուրականը եւ այլեփառ Արարատէն՝ ազատութեան ճիչերով հրճուեցնեն մեր վշտաչարչար հոգիները:

«Պահն է շարժուելու՝ պայծառ հոգիներով, սրաթափանց մտքով, մեր ամբողջ կարողութիւններով եւ տարողութեամբ, ձեռք ձեռքի տուած, ցոյց տալով որ մենք քալեցինք ու կը քալենք ճշմարտութեան ճանապարհէն, թէ այն ջահը որ կը կրենք մեր ձեռքերուն մէջ՝ համայն հայութեան բարօրութեան ու անդորրութեան ճամբան լուսաւորող ջահն է, թէ մեր արիւնի, արցունքի շրջանը շատոնց հրաժեշտ տուած է եւ մենք կը քալենք վճռականօրէն դէպի մեր ամբողջական յոյսերու պսակումը»:

-Մայրիկդ մահացա՞ւ,- անակնկալի եկաւ պարոն Յարութիւնը,- ե՞րբ:

Մեհմեդը ոտքի ելաւ:

-Հինգ երկվայրկեան առաջ,- նա մօր սենեակն ուղղուեց, ձայնն արդէն այնտեղից լսուեց,- չմեռաւ, վերջապէս հոգուն հանգստութիւն իջաւ....:

Մեր Զինուորը 25 ՊԱՐՏՈՒՄ

### ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.

## ՎԱՐԴԻՎԱՐ ԵՒ ՈՍԿԻ ԱՆԹՈՍԵԱՆ



# Համառօտ Ակնարկ 2020-ի Իրադարձութիւններուն Կրայ

ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՈՅԵԱՆ

## ՅՈՒՆՈՒՍԱՐ

-Անցեալ տարուան Դեկտեմբերին Աւստրալիոյ կոյս անտառներուն մէջ ծագած հսկայածաւալ հրդեհը աւերներ գործեց շուրջ 20,000 քառ. քիլոմէթր տարածութեան վրայ, պատճառ դառնալով 34 անձերու մահուան եւ հազարաւորներու տեղափոխման եւ 500 միլիոն կենդանիներու ոչնչացման:

-Անգլիոյ էլիզապէթ թագուհիի թոռնիկը՝ իշխան Հէրիս եւ իր կինը Մէկան, հրաժարեցան արքայական ընտանիքի անդամի իրենց կարգավիճակէն ու արարողակարգէն:

-ԱՄՆ-ի նախագահ Տօնալտ Թրամը ամբաստանուեցաւ Ուքրանիոյ ներքին հարցերուն ուժգնօրէն միջամտելու յանցանքով:

-«Լէյքըրզ»ի առասպելական հերոս Գօպի Պրիանթ ուղաթիռի արկածի զոհ զնաց, իր աղջկան եւ եօթ այլ ուղեկիցներու հետ:

-ԱՄՆ-ի անօդաչու սարքով, իրանցի բարձրաստիճան գորավար Քասամ Սոլէյմանին կը սպաննուի Պաղտատի օդակայանին մէջ:

-Ինտոնեզիոյ մէջ (ճաքարթա) տեղատարափ անձրեւներու պատճառով կը մահանայ 53 հոգի:

-Ուքրանական Boeing 737-800 տիպի օդանաւ մը Թեհրանէն թռիչք առած պահուն կը ջախջախուի պատճառ դառնալով 96 անձերու մահուան:

## Փետրուար

-Հոնկ Բոնկի մէջ ցոյցերը շարունակուեցան բողոքելով Չինաստանի կողմէ դատական հարցերու վերահսկողութեան նոր օրէնքներուն դէմ:

-Առաջին ամերիկացիի մահը քորոնա համաճարակէն:

-Թէքսասի Գօրբուս Բրիսթի քաղաքին մէջ օդային կազի խողովակի մը պայթիւնով լայնածաւալ հրդեհ յառաջացաւ, մեծ վնասներ պատճառելով շրջապատին:


-Աւելի քան 800,000 սուրիացիներ տեղափոխուեցան երկրի հիւսիս արեւմտեան կողմը, խուսափելու համար իշխանամէտ եւ ընդդիմադիր ոյժերու բախումներէն:

-Տէլհի մէջ (Հնդկաստան) հպատակութեան նոր օրէնքի դէմ ցոյցերու ընթացքին, առնուազն 38 հոգի կը մահանայ քանի մը օրուան մէջ:

-ԱՄՆ-ի նախագահ Թրամի երկօրեայ այցով Հնդկաստան կը մեկնի:

-ԱՄՆ-ի եւ Թաիլանի միջեւ կնքուած համաձայնագրով մը վերջ կը տրուի Աֆղանիստանի 18 տարուան պատերազմին:

## Մարտ



-Նիւ Եորքի սակարանի բաժնետոմսերու սակագիները մեծ անկում կրեցին, քորոնա համաճարակի պատճառած համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետեւանքով:

-Սեւամորթ ծորճ Ֆլոյտի սպանութեան պատճառով՝ ԱՄՆ-ի տարբեր քաղաքներու մէջ տեղի ունեցան զանգուածային ցոյցեր, ցեղային խտրականութեան դէմ:

-Թուրք 36 զինուորներու սպանութենէն ետք Թուրքիա գորաւոր յարձակում կը գործէ Սուրիոյ կառավարական ոյժերուն դէմ:

-Թուրքիոյ նախագահը Ռաճէբ Էրսոյան կը սպառնայ չեղեալ համարել 2016ի Եւրոմիութեան հետ կնքած համաձայնագիրը, ազատ արձակելով գաղթականները:

-Իրան ազատ կ'արձակէ 54 հազար բանտարկեալներ, առաջին առնելու համար քորոնա համաճարակի տարածումին:

-Քորոնա համաճարակի պատճառով նախագահ Թրամի կ'արգիլէ ճամբորդութիւնը դէպի 26 եւրոպական երկիրներ:

-Նախագահ Տօնալտ Թրամի ազգային արտակարգ վիճակ կը յայտարարէ 50 միլիառ տոլարի յատկացում կատարելով պայքար մղելու քորոնա համավարակին դէմ:

-Ճաբոնի վարչապետը կը յայտարարէ 2020-ի ողիմպիական խաղերու առկախումը ԱՄՆ-ի Դաշնակցային իշխանութիւնը տոկոսային դուր-թիւնը գրեթէ գերոյցի կ'իջեցնէ աշխուժացնելու տնտեսութիւնը, քորոնա վարակի պատճառով:

-Հնդկաստան կախաղան կը բարձրացնէ 4 անձեր, կիներ բռնաբարելուն համար:

## Ապրիլ

-Հիւսիսային Քորէայի նախագահ Քիմ Ճօնկ Ունի մահուան մասին լուրեր տարածուեցաւ եւ ապա հերքուեցաւ:

-Անգլիոյ վարչապետ Պորիս Ճօնսը քորոնայէ վարակուելով հիւանդանոց փոխադրուեցաւ:

-Ճաբոնի վարչապետ Շինզո Ապէն 7 նահանգներու մէջ ստիպողական վիճակ յայտարարեց եւ 1 թրիլիոն յատկացուց քորոնայէն տուժողներուն:

-ԱՄՆ-ի նախագահական թեկնածու Պըրնի Սանտէրզ որոշեց գորակցիլ իր նախկին մրցակից Ճօ Պայտընին: Նոյնը ըրաւ Պարաք Օպաման:

-Նախագահ Թրամի որոշեց կասեցնել իր նպատար Առողջապահութեան Միջազգային Կազմակերպութեան:

-ԱՄՆ-ի քորոնա ժահրէն մահացողներու մէկ օրուան թիւն էր 2,752: 4 շաբթուան մէջ 22 միլիոն ամերիկացիներ գործազուրկ դարձան:

-Ափրիկէի մէջ քոլիտէն մահացողներու թիւը հասաւ 300,000-ի իսկ վարակուածները 30 միլիոնի:

-Քանադայի մէջ զինեալ մը 18 հոգի սպանեց:

-Հարաւային Քորէայի պահեստանոց մը կրակ առնելով մահացած է 38 հոգի:

## Մայիս

-ԱՄՆ-ի պետական քարտուղար Մայք Փամփթոն Չինաստանը պատասխանատու նկատեց քորոնա ժահրի տարածումին:

-Պրագիլիան հաստատեց որ 100,000-է աւելի քորոնայէն վարակուածներ ունի:

-Ալիարհի մեծ տէրութիւնները որոշեցին 8 միլիառ տոլար տրամադրել քորոնա ժահրի պատուաստանիւթը գտնելու:

-Անգլիա 1706-էն ի վեր տնտեսական մեծագոյն անկումն ունեցաւ:

-ԱՄՆ-ի գործազուրկներու թիւը 33.3 միլիոն է, 50 տարուան մէջ մեծագոյն համեմատութիւնը:

-ԱՄՆ-ի նախագահը Տօնալտ Թրամի սկսաւ քորոնա ժահրի դէմ դեղ առնել:

-Չինաստան ազգային անվտանգութեան նոր օրինագիծ մը հրապարակեց Հոնկ Բոնկի խնդրով:

-ԱՄՆ արգիլեց Պրագիլիայէն ժամանողներու մուտքը, քորոնայի պատճառով:

-Սպանիա 4 օրուան սուգ հուշակեց ի յիշատակ քորոնա համաճարակէն մահացող շուրջ 27,000 անձերու:

-Իրանի նախագահ Հասան Ռուհանի կոչ ուղղեց կիներու նկատմամբ պաշտպանողական նոր միջոցներ որդեգրելու, մասնաւորաբար 14 տարեկան աղջիկ մը իր հօր կողմէ սպաննուելէ ետք:

## Յունիս

-Պրագիլիոյ մէջ Քորոնայէն մահացաւ 30,000 հոգի, իսկ վարակուած են 555,383:

-ԱՄՆ-ի տարածքին յուշահանդէսներ եւ բողոքի քայլարշաւներ ծօրճ Ֆլոյտի սպանութեան առթիւ:

-Եւրոպայի մէջ կիրարկուած քորոնա համաճարակի սահմանափակումներուն պատճառով փրկուած է 3 միլիոն մարդոց կեանքը:

-Գաղթականներ փոխադրող Թունուզեան նաւ մը շրջուելով 46 հոգիներու մահուան պատճառ դարձաւ:

-Դերասան Տէնի Մասթէրսօն ամբաստանուեցաւ 3 կիներ բռնաբարած ըլլալուն համար:

-Քանադայի մէջ քորոնա համաճարակէն վարակուած է 100,000 իսկ մահացած 8,361 հոգի:

-Մրցանիշ կտրող Չերմաստիճան 38C (100F) Սիպերիոյ մօտ Բիւքուսթին վերիտղանքի մէջ:

-Աւստրալիոյ Քանդաս օդանաւային ընկերութիւնը 6,000 պաշտօնեաներ գործէ արձակեց համաճարակին պատճառով:



**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ԱՒԵՏԻՍ ԵՒ ԱՐՄԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ**

Մեր Զինուորը ԶԷ ՊԱՆՏՈՒՍԱԾ



# Համառօտ Ակնարկ 2020-ի Իրադարձութիւններուն Կրայ

## Յուլիս

- Եւրոպայ իր սահմանները կը բանայ 15 ապահով նկատուող երկիրներու նկատմամբ, ի բացառութիւն ԱՄՆ, Ռուսիա եւ Պրագիլ:
- Սուերնայի մէջ խտրական ոստիկանութիւնը կը բռնագրաւէ 14 թոն թմրանիւթ 1.1 միլիառ տոլար արժողութեամբ: Ներածուած Սուրիայէն (Տահէշական):
- Ռուսիոյ նեխագահ Փութինը հանրաքուէով կ'ընտրուի առաւել երկարաժամկէտով վարելու նախագահական պաշտօնը:
- Մեքսիքոյի մէջ քորոնայէն վարակուած մահացողներու թիւը 30,000:
- Պրագիլի նախահր ժայր Պոլսանարօ վարակուած է քորոնայով:
- Միացալ թագաւորութիւնը կ'առկախէ Հոնկ Գոնկի հետ իր ունեցած դաշնագիրը, տարածաշրջանային ապահովութեան չինական նոր օրէնքի լոյսին տակ:
- Եւրոպական Միութիւնը կը համաձայնի 859 միլիառ տոլար յատկացնել որպէս հատուցում քորոնայէն տուժող գործաւորներուն եւ գործարարներուն:

## Օգոստոս



- Յեղափոխ խտրականութեան դէմ գանգուածային ցոյցեր, 29 ամեայ ձէջգոյ Պլաքի խոշտանգումին առթիւ:
- Պէշլուքի նաւահանգիստի ահաւոր պայթումը, պատճառ դառնալով հարիւրաւորներու մահուան, հազարաւորներու վիրաւորուելուն եւ տնտեսական հսկայական վնասներու:
- Գալիֆորնիայէն մինչեւ Ուաշինկթըն նահանգ անտառային ահարկու հրդեհներու պատճառով միլիոնաւոր էջքը հողատարածք փճացաւ:
- Հարաւային Ափրիկէի մէջ քորոնայէն կը վարակուի 400,000 հոգի: Կ'որոշուի դպրոցները փակել մէկ ամիս:
- Մալթայի նախկին վարչապետ Նաթիալ Ռազաք փտածութեամբ ամբաստանուելով 12 տարուան բանտարկութեան եւ միւլենոյն ատեն 50 միլիոն տոլար տուգանքի դատապարտուեցաւ:
- Եւրոգոնի տնտեսական փոխանակումները 11.9% անկում արձանագրեց, իսկ Սպանիոյ հետ 18.5%:
- Գալիֆորնիոյ Պօմօնթի շրջանի բնակիչներէն 8000 հոգի տեղահան եղան անտառային հրդեհներու պատճառով:

## Սեպտեմբեր

- Բողոքի գանգուածային ցոյցեր Պելաուսիոյ, Հոնկ Գոնկի, Հարաւային Ափրիկէի, Ուքրանիոյ եւ Ուկրանայի մէջ:
- Ազերի եւ թրքական զինուած ուժերը լայնածաւալ յարձակում գործեցին Արցախի Հանրապետութեան ամբողջ երկայնքին, ռմբակոծուեցաւ մայրաքաղաք Ստեփանակերտն ու այլ բնակավայրեր: Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանն ըսաւ. «Մենք զինադադար չենք խնդրելու, պարտադրելու ենք»:
- Թօլոն ունեցաւ իր առաջին կին վարչապետը Քիքթուար Թօմեկա Տօկպի:
- Եւրոպայի մէջ վերջին երկու շաբաթներուն Գորոնա համաճարակի 45,000 նոր դէպքեր պատահեցան:
- Հիմալայան լեռներու կից սահմանային բուռն բախումներ Չինաստանի եւ Հնդկաստանի զինեալ ուժերու միջեւ:

## Հոկտեմբեր

- ԱՄՆ-ի նախագահ Թրամփ եւ կինը Մէլանի քովիտէն վարակուելով

## դարձանումի գացին Ուոլթըր Ռիտ հիւանդանոցը:

- Թուրքիա փակեց իր օդային տարածքը մարդասիրական օդու թեան համար:
- Քուէյթի կառավարիչ եւ մենատէր Շէյխ Սապահ էլ Սապահի մահը:
- Լիբանանի նշանակեալ վարչապետ Մուսթաֆա Տիապի հրաժարականը:
- Աւելի քան 100 քննիչականներ դատապարտեցին Արցախի եւ Հայաստանի վրայ յարձակումները:
- Ատրպէյճանի եւ Թուրքիոյ դէմ պատժամիջոցներ պահանջող 750,000 դիմումներ ԱՄՆ-ի քննիչսին:
- Դեմոկրատական կարգերու ի նպաստ բուռն ցոյցեր Թայլանտի մէջ:
- Մուտան եւ Իսրայէլ համաձայնեցան յարաբերութիւններու բնականոնացումի համար:

## Նոյեմբեր



- Ճօ Պայտըն ընտրուեցաւ որպէս ԱՄՆ-ի 46րդ նախագահը, փոխարինելու Տանըլ Թրամփը:
- Սուրիական բանակը Թուրքիոյ հսկողութեան կէտին վրայ բարձրացուց Սուրիոյ դրօշը իր ուժերը տեղաւորեց Համալի հիւսիսը:
- Նիւմենէի ըսաւ. «Իրան հուժկու պատասխան պիտի տայ եթէ ահաբեկիչները մօտենան մեր սահմաններուն, իսկ Հայաստանը պէտք է վերադարձնէ իր «գրաւած» տարածքները:
- Ռուսիոյ արտգործ նախարար Լաւրով. «Լեռնային Ղարաբաղի տագնապի միջնորդութեան բոլորին կողմէ ճանչցուած ձեւաչափը ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահութիւնն է»:
- Ալիարհանահալ ֆուտպոլիստ Տիեկօ Մարատօնայի մահը: Արժան-թինցի մարզիկը 60 տարեկան էր եւ մահացաւ սրտի կաթուածով:
- Ֆրանսայի ծերակոյտը ճանչցաւ Արցախի Հանրապետութիւնը:
- Հայկական կողմը շատ ծանր պայմաններով ստորագրեց զինադադարի համաձայնագիրը:
- 50 հազար արցախցիներ վերադարձան Արցախ:
- Հայաստանի արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեան հրաժարեցաւ:

## Դեկտեմբեր

- Քորոնա համավարակի դէմ հնարուած pfizer-ի պատուաստը վաւերացուեցաւ ԱՄՆ-ի Մնուսդի եւ Դեղորայքի տեսչութեան կողմէ: Նոյնպէս շաբաթ մը ետք վաւերացուեցաւ Moderna-ի պատուաստը:
- Ուաշինկթըն պատժամիջոցներ հաստատեց Թուրքիոյ դէմ:
- Եւրոմիութեան անդամ 27 երկիր համամիտ գտնուեցան Միացեալ Թագաւորութեան ԵՄ-էն անջատուելու համաձայնագրի բովանդակութեան: Վերջնական վաւերացումը պիտի կատարուի Յունուարին:
- Ռուսական ձկնորսանաւ մը ընկղմեցաւ 19 ուղեւորներով, հիւսիսային սառուցեալ ովկիանոսի Նովայա Չէմլեա արշիպելագոսի մօտերը, ուժեղ քամիներու եւ մրրիկներու պատճառով:
- Փութին եւ Մաքրոն քննարկեցին Լեռնային Ղարաբաղի մէջ տիրող իրավիճակը:
- Վրաստան չեզոքութիւն պիտի պահպանէ Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ ըսաւ վարչապետի պաշտօնակատարը:



## Prime Minister Nikol Pashinyan's Congratulatory Message on New Year and Christmas

Dear people, dear compatriots in Armenia, Artsakh and the Diaspora,

It is even hard to believe that there are only a few minutes left until the end of 2020, a year of which we will keep bitter memories for a long time ahead. A war with severe consequences, the COVID-19 pandemic: 2020 will be remembered with these milestones in our people's history.

On New Year's Eve, our hearts and minds are with the families of our martyrs, our brothers and sisters who fell in the war, as well as with their children, mothers, fathers, wives, husbands, brothers and sisters.

On this New Year's Eve, our hearts and minds are with the families of our missing soldiers - their children, mothers, fathers, wives, brothers and sisters.

Եթէ անոնք նման քայլ մը առած ըլլային՝ շատ հաւանական է չիթլեր 22.8.1939ին, իր հրամանատարներուն եւ «Մահուան Չոկատ»ի ներկայացուցիչներուն հետ ունեցած զգալունի ժողովին մէջ հետեւեալ հրամանը (որ շատ նման է 24 տարի առաջ թալաթի յղած հեռագրին) չտար.

«Հրաման տուած եմ իմ «Մահուան Չոկատներուն», որպէսզի առանց խղճահարութեան եւ զթասիրութեան ոչնչացնեն լեհերէն խօսող ցեղին պատկանող տղամարդիկը, կանայք եւ երեխաները: Միայն այս ձեւով կրնանք ձեռք բերել կենսական տարածքը, որուն պէտք ունինք:»

Ժողովին մասնակցող հրամանատարներէն մէկը կը հարցնէ չիթլերին, «Իսկ ի՞նչ պատասխան պիտի տաք հետագայ սերունդներուն»:

Չիթլեր անամօթաբար կը պատասխանէ, «Ո՞վ այսօր կը լիշէ Հայոց

Ցեղասպանութիւնը»:

Երբ նախամտածուած ոճիր մը, ինչպիսին է Հայոց Ցեղասպանութիւնը, կը մնայ անպատիժ, չիթլերի նման ոճրագործի մը առիթ կու տայ անամօթաբար յայտարարու՝

«Այսօր ո՞վ կը լիշէ Հայոց Ցեղասպանութիւնը»:

Անգլիան, Միացեալ Նահանգները եւ իրենց նման պետութիւններ «կը ձեւացնեն» որ «ալյայմըրը» հիւանդութենէ տառապելու պատճառով՝ չեն «լիշեր» Հայոց Ցեղասպանութիւնը: Հայերը սակայն ոչ միայն կը լիշեն մարդկութեան դէմ գործուած ոճիրը, Հայոց Ցեղասպանութիւնը, այլ նաեւ կը պահանջեն հազարամեակներու պատմութիւն ունեցող իրենց հայրենիքը, որ սրբացած իրենց նախահայրերուն եւ 1,500,000 նահատակներուն արիւնով:

Յաւալի է որ կարգ մը «քաղաքակիրթ» երկիրներ եւ կազմակերպութիւններ, գանազան տնտեսական եւ քաղաքական շահերէ դրդուած՝ կը նախընտրեն դաշնակցիլ «մարդկութեան դէմ ոճիր գործած» թուրքիոյ, հետ, քան ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը, կամ պաշտպանել ճշմարտութիւնը, արդարութիւնն ու մարդու իրաւունքները...:

Այդպիսի պետութիւններուն համար արդարութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ թեւերը կոտորած կոյր արծիւ մը, որ վանդակուած է ու դրուած՝ շքեղ դղեակի մը մութ սենեակներէն մէկուն մէջ... :

## Ղարաբաղ եւ Մեծն Բրիտանիա

Հոկտեմբերեան Ցեղափոխութիւնը տապալեց Յարական կայսրութիւնը: 1917-ին, ուսական բանակը լքեց կովկասեան ճակատը: 1918 թուականի մայիսին Հայաստանը, Վրաստանն ու Ազերպայճանը անկախութիւն հռչակեցին:

Անշուտ Ղարաբաղը որպէս Հայաստանի հողամաս՝ նաեւ դարձաւ անկախ:

1918-ի ամրան թրքական արշաւանքները դէպի կովկաս պատճառ դարձան միջ-ցեղային կռիւներու, ստեղծելով անկայուն վիճակ ամբողջ տարածաշրջանին մէջ: Թուրքերու կարեւոր առաջադրանքներէն մէկն էր նաեւ Ղարաբաղը գրաւելով՝ ոչնչացնել անոր հայ բնակչութիւնը: Ստեղծուած կացութիւնը արցախահայութեան համար «լինել չլինելու» ինդիք էր. Անհրաժեշտ էր ամէն գնով պաշտպանելը հայրենիքը թուրք, ազերի եւ թաթար ուժերու դէմ:

Հպարտութեամբ պէտք է հաստատել, որ արցախահայութիւնը հերոսական դիմադրութեամբ պաշտպանեց Արցախը մինչեւ Ա. Աշխարհամարտի աւարտը, երբ պարտուած Օսմանեան բանակը ստիպուած հեռացաւ տարածաշրջանէն:

Յաւարտ պատերազմի՝ Դաշնակիցները կովկասեան տարածաշրջանը կառավարելու լիազօրութիւնը յանձնեցին Մեծն Բրիտանիոյ: 17 Նոյեմբեր 1918-ին Բրիտանական բանակի հնդկական զօրաբաժինը մտաւ Պաքու: Բանակին հրամանատարը, Ուիլիամ Մոնթկոմմերի թոմսըն, որ կը պաշտպանէր Ազերպայճանի կառավարութեան տեղական մարմինները, հաւանութիւն տուաւ որպէսզի 7 Դեկտեմբեր 1918-ին կայանայ Ազերպայճանի խորհրդարանի անդրանիկ նիստը...:

Հայաստանի եւ Ազերպայճանի սահմանները ճշդելու հարցին մէջ, Մեծն Բրիտանիան բացայտ կերպով կողմնորոշուեցաւ ի նպաստ մուսավաթական Ազրպայճանին: Հակառակ 1918-1919 տարիներուն կազմակերպուած բազմաթիւ հանրաքուէներու մէջ, քուէներու աւելի քան 90% առաւելութեամբ Արցախի բնակչութիւնը որոշում կայացուց Հայաստանի մաս կազմել՝ Հրամանատար թոմսըն, հետեւելով Լոնտոնէն ստացուած հրահանգին՝ Ղարաբաղը «նուիրեց» Ազերպայճանին:

Տարածաշրջանի պատմութեան մասնագէտ, անգլիացի պատմաբան Քրիստըֆըր Ուոքըր կը գրէ.

«Բրիտանիան երկու նպատակ կը հետապնդէր (երբեմն իրար հակասող), երկուքն ալ՝ հակա-պոլշեվիկ. Տանիքինի Սպիտակ Բանակին օգնել հիւսիսի մէջ, իսկ հարաւը՝ նախապատուութիւնը տալ գորաւոր եւ Անգլիոյ բարեկամ Ազերպայճանին: Շատ մը Բրիտանացի սպաներ ծառայած ըլլալով Հնդկաստանի մէջ, իսլամամէտ էին եւ չէին սիրեր տեղացի քրիստոնիաները: Չմոռնանք որ Բրիտանական կայսրութիւնը, շնորհիւ Ափրիկէի եւ Ասիոյ իր գաղութներուն, իսլամական աշխարհին մէջ կը ներկայացնէր մեծ ոյժ: Հրամանատար թոմսըն երբ Պաքու մտաւ 17 Նոյեմբերին, շուտով յուսահատութիւն պատճառեց հայերուն, որոնք մեծ յոյսեր դրած էին զինադարին վրայ: Բրիտանական հրամանատարութիւնը, որ 30,000 զինուորներէ բաղկացած բանակ մը ունէր Անդրկովկասի մէջ, Օսմանեան զօրքերու մեկնումէն յետոյ հրահանգեց Ղարաբաղի

» » »

Մեր Զինուորը 2Է ՊԱՐՏՈՒԹ

**ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ.**  
**ՅԱՐՈՒԹ ԵՒ ՄԱՅՏԱ ԵԱՂԱՉԵԱՆ**



ՄԱՍԻՍ - 2021

Արցախ, Հայաստան, Հայոց Ցեղասպանութիւնը Ղարաբաղ եւ Մեծն Բրիտանիա

Հայու թեան, որպէսզի ենթարկուի Ազերպէյճանին: Առաջարկը մերժուեցաւ»: ("Armenia and Karabagh" C.J. Walker

\*\*\*

1918թ.ի Մարտ-Ապրիլ ամիսներուն, «Կամաւորական Բանակ»-ին միացան Քուպանի հակահոմոսեօս դազախները, որոնք փորձեցին Քուպանի մայրաքաղաք, Եկատերինոտարը ազատագրել Կարմիր Բանակէն, բայց ձախողեցան: Սպիտակ բանակի հրամանատարն էր Անթոն Տենիքինը:

\*\*\*

26 Մարտ 1919-ին, գնդապետ Տ. Ի. Շաթըլուրթ (Colonel D I Shuttleworth), որ հետագային փոխարինեց Թոմսընը, հետեւեալ սպառնալից յայտարարութիւնը ըրաւ Ղարաբաղի հայ պատգամաւորներուն.

«Մենք բաւական ոյժ ունիք պարտադրելու ձեզ ենթարկուելու մեր հրահանգին»: ("Armenia and Karabagh" C.J. Walker)

Ըստ նոյն հեղինակին, «Ղարաբաղի այժմու խնդրին (1991) պատճառը մեծաւ մասամբ 1919 տարուան առաջին կէսին Անգլիոյ որդեգրած քաղաքականութիւնն է, որուն նպատակն էր արգիլել՝ որպէսզի Ղարաբաղը մնայուն կերպով Հայաստանին մաս կազմէ:»

Մեծն Բրիտանիոյ Հայաստանի զինւորական կցորդ, գնդապետ Ֆլաուտըն (Colonel J C Flowden) Օգոստոս 1919-ին, հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ. «Ղարաբաղը Ազերպէյճանին յանձնելը, իմ կարծիքով, ամենէն դառն հարուածն էր... Ան եղած է իրենց ցեղին բնօրրանը, իրենց աւանդական վերջին ապաստանարանը եւ իրենց վերջին թագստոցը, երբ երկիրը ենթարկուած է յարձակումներու: Ան Հայաստանն է բոլոր անկիւններէ դիտուած. Ղարաբաղը Հայաստանի ուժեղագոյն մասն է թէ՛ ֆիզիկապէս եւ թէ՛ զինւորական եւ ընկերային իմաստով:»

\*\*\*

1920-ին Հայաստան, Վրաստան եւ Ազերպէյճան որդեգրելով խորհրդային կարգերը, դարձան սովետական հանրապետութիւններ:

12-06-1921-ին, Սովետական Ազերպէյճանն ու Սովետական Հայաստանը հրապարակեցին հռչակագիր մը, որով հաստատեցին Լեւոնային Ղարաբաղի Հայաստանի մաս կազմելուն իրողութիւնը:

1923-ին, Ազգութիւններու նոր Կոմիսար Ստալինին պարտականութիւն Տրուեցաւ, որպէսզի ճշդէ կովկասեան հանրապետութիւններու սահմանները: Հայաստանի եւ Ազերպէյճանի միջեւ գոյութիւն ունեցող նախասովետական տարիներու անհամաձայնութիւնները ուսումասիրելէ յետոյ, Ստալին՝ անտեսելով 12-06-1921-ի հռչակագիրը, որոշեց Մեծն Բրիտանիոյ օրինակին հետեւելով Ղարաբաղը ներառել Ազերպէյճանի սահմանին մէջ որպէս «ինքնավար մարզ»: Ստալինի որոշումը հիմնուած էր այն իրողութեան վրայ, որ ինչպէս Մեծն Բրիտանիան, այնպէս ալ Սովետ Միութիւնն ունէր մահմետական հոծ բնակչութեամբ երկիրներ...:

Անշուշտ ինչպէս Անգլիոյ՝ այնպէս ալ Ստալինի որոշումին մէջ անտաակոյց Պաքուի քարիւղը կարեւոր դեր խաղցաւ ...:

\*\*\*

Անդրադառնալով Ղարաբաղի հայութեան դիմադրութեան, Քրիստոֆեր Ուոքըրը կը գրէ.

«Մեծն Բրիտանիոյ քաղաքականութիւնը Ղարաբաղի մէջ բացայատ կերպով մուսաւաթական Ազրպէյճանին հետ դաշնակցիւն էր, որ կը համապատասխանէր Կիլիկիոյ մէջ Ֆրանսայի Քեմալական Թուրքիոյ հանդէպ որդեգրած ժամանակակից քաղաքականութեան: Երկու պարագային ալ՝ «դաշնակցիները» կ'օժանդակէին, որպէսզի հայերը արտաքսուին տարած շրջանէն: Այս ծրագիրը յաջողեցաւ Կիլիկիոյ մէջ, բայց ոչ Ղարաբաղի, ուր հակառակ որեւէ արտագին օգնութեան չգոյութեան,

բնակչութիւնը դիմադրեց եւ ձախողութեան մատնեց զինք արտաքսելու բոլոր փորձերը»: ("Armenia and Karabagh" C.J. Walker).

\*\*\*

Ղարաբաղի Հարցը եւ Թուրքիան

Էրտողանի Թուրքիան կարեւոր դեր խաղաց սեպտեմբեր 2020-ին Ղարաբաղի դէմ Ազերպէյճանի սկսած պատերազմին մէջ: Գաղնիք մը չէ որ Թուրքիոյ ծրագիրը միշտ ալ եղած է եւ կը մնայ՝ Կովկասի մէջ առաջացնել քաղաքական անկայուն վիճակ մը, որ կարեւոր է Համաթուրքական Կայսրութիւն մը հիմնելու իր երազը իրագործելու համար: Ղարաբաղի դէմ Ազերպէյճանի եւ Թուրքիոյ տարած յաղթանակին հետեւանքով, ստեղծուած է նպաստաւոր պայման, թրքական ազդեցութեան ծիրը ընդլայնելու համար նաեւ Կեդրոնական Ասիա եւ կարգ մը պալքանեան եւ ռուսական իշխանութեան ենթակայ երկիրներ:

Նշենք նաեւ որ Ազերպէյճանի հետ ղարաբաղեան պատերազմին Թուրքիոյ մասնակցութեան գլխաւոր նպատակն էր Կովկասի մէջ մնայուն զինւորական կորզ մը հիմնելն էր: Էրտողանի համար կարեւոր էր նաեւ որ Ազերպէյճան պարտաւորուած ըլլալ միշտ ապաւինիլ Թուրքիոյ զինւորական ուժին: Ինչպէս դիտել տուինք արդէն, Անգարայի յաջորդ թիրախներէն մէկը կրնայ Ռուսիոյ իշխանութեան ենթակայ երկիր մը ըլլալ: Բոլորին ծանօթ է թէ ինչպէս անցեալին, էրտողանի «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան անդամները յայտարարութիւններ ըրած են, ըստ որում Ղրիմը կը պատկանի Թուրքիոյ: Հիմա նոյնը կը կրկնէ նաեւ էրտողան:

Ռուսիոյ խորհրդարանի անդամ, Ալեքսանդր Շերինի համաձայն, երբ Թուրքիոյ ապօրինի եւ կամայական արարքները կը մնան անպատիժ, էրտողան կը կարծէ որ ինք նախագահն է աշխարհի ամենէն հզօր եւ ամենէն անպարտելի պետութեան, որ կրնայ գրաւել անցեալին կորսնցուցած բոլոր երկիրները եւ վերականգնել անգամ մը եւս Օսմանեան հզօր կայսրութիւնը: Այդ նպատակով Թուրքիա կ'ուզէ զինւորական զօրաւոր կայան մը հաստատել Ազերպէյճանի մէջ, նպատակ ունենալով՝

-Չէզոքացնել Հայաստանի մէջ հաստատուած Ռուսական զինւորական կայանը,

-Ռեզիմական իր ազդեցութիւնը տարածել Կեդրոնական Ասիոյ մէջ: Եթէ էրտողանի կայսրապաշտական վտանգաւոր ձգտումները հակադէմ տակ չառնուին, մարդկութիւնը ականատես կրնայ ըլլալ նոր հակամարտութիւններու եւ պատերազմներու, որոնք կրնան նոյնիսկ պատճառ դառնալ Գ. Աշխարհամատի, աննախընթաց ողբերգական հետեւանքներ ունենալով մարդկութեան համար:

ՆԱԹՕ քաջ գիտնալով հանդերձ որ իր անդամներէն Թուրքիան՝ կ'օգտագործէր կազմակերպութեան մասնագիտական եւ ռազմավարական դիւրութիւնները Ղարաբաղեան պատերազմի ընթացքին, ան «համը, խուլ ու կոյր» ձեւացուց ինքզինք:

Ինչո՞ւ: Հարցումին պատասխան գտնելը կը ձգեմ ընթերցողին:

Ինչ կը վերաբերի Թուրքիոյ անբարտաւան նախագահին, կրնանք առանց վարանումի ըսել. եթէ Հիթլեր «20 -րդ դարու ամենէն վտանգաւոր մարդը» տիտղոսին արժանացած է, էրտողան անտարակուս առաջնակարգ տեղ կը գրաւէ 21-րդ դարուն նոյն տիտղոսին համար մրցող թեկնածուներուն մէջ:

Կ'ուզեմ յօդուածս աւարտել մէջբերելով Թուրքիոյ նախկին վարչապետ Ահմէտ Տավուտօղլուի վերջերս հաւաքոյթի մը մէջ արտասանած հետեւեալ խօսքերը.

«Մարդկութեան համար մեծագոյն վտանգը «Քորոնա» ժահրը չէ, այլ էՐՏՈՂԱՆԸ:»

**Անուշապուր**  
**ԱՐԱՔՍԻ ԹԱԹՈՒԼԵԱՆ**  
 (Փոխան շնորհաւորական քարտի, տօնական օրերուն առիթով)

<p>Տօնական այս օրերուն,          Սիրտս թախծ, վիշտ ու խինդ,          Բոլորուել եմ շուրջս պար,          Ու կը յիշեմ անցեալի,          Քու սեղանդ տօնական:</p> <p>«Սուֆրայիմ» շուրջ բոլորուած,          Չիր ու չամիչ քաղցրալի,          Անհուն սերդ բերկրալի,          Աչքերուդ մէջ թաքցրած,          Հիմ, անցեալի կարօտներ,          Մտորումներ, անհատնում,          Որբանոցի քու կեանքդ,          Քոյր ու եղբայր,          Անհայր անմայր          Կարօտ յոյսի եւ լոյսի,          Կարօտ սիրոյ ու խանդի,          Սպասումով այն օրուան,          Երբ Կաղանդը պիտի գար:</p> <p>Ափ մը չամիչ, կէս մը նարինջ,          Մեծ յոյսերով ու երգերով          Կաղանդ պապան պիտի գար          Բաշխելու սեր բիւր-բարիք          Տալու քնքուշ երագներ:</p>	<p>Ու մենք ուրախ ու զուարթ          «Սուֆրայիմ» շուրջ բոլորուած,          Անգիտակից անցեալին,          Նոր յոյսերով վառարուն,          Չամիչ, ընկոյզ, լէլէպ չիր,          Կը սպասեինք անձկանօք,          Ուրախութեան ճիչերով,          Չանգակներու ղօղանջին          Հրացաններու տարափին:</p> <p>Շնորհաւոր Նոր Տարի          Դուռ պատուհան բաց առած,          Դուռ-դրացի երջանիկ,          Թաղին կեդրոնն հաւաքուած,          Նազպար պարող աղջիկներ,          Ծափ ու զուռնա ածողներ          Անուշապուրն աւանդական          Համատեսողներ շար ու շարան,          Մեծ ու պզտիկ          Ծափ ու ծիծաղ,          Կաղանդ է կաղանդ:</p> <p>Խաղաղութիւն աշխարհին,          Խաղաղութիւն բիւր-բարիք</p>	<p>Երկիրն Հայոց աշխարհին          Մայրիներու երկրին,          Ազգական ու բարեկամ,          Հեռու ու մօտ սիրելիներ,          Թող դադարին պատերազմ,          Արցունքները սրբուին,          Ժպիտն անոյշ թռթռայ,          Կեանքն աւելի քաղցրանայ:</p> <p>Մայր իմ, այսօր եկար դուն,          Մտածումներուս մէջեմ,          Չիր ու չամիչ բերելու,          Մաղթելու ինձ          Թողներուդ ու ծոռներուդ          Շնորհաւոր Նոր Տարի:</p> <p>Անուշապուրն համադամ,          Յիշեցուցիր ինձ նորէն          Որպէսզի ես ալ պատրաստեմ          Նոր տարուան գիշերուան,          Չանգակներու ղօղանջին հետ          Կանչեմ դուռ ու դրացի          Ու բոլորին ես մաղթեմ          Շնորհաւոր Նոր Տարի:</p>
--	---	--



# Պարոյր Սեւակի Քիչ Ենք, Բայց Հայ Ենք Բանաստեղծութեան Նոր Մեկնաբանութիւնը Կամ Անկեղծ Ըլլանք Նշմարտագրեց՝ Վարդգէս Գուրուեան



Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում (առայժմ):  
 Մենք մեզ ո՛չ ոքից չենք գերադասում (իրա՞ւ, հապա մեր  
 ինքնագովութիւնները):  
 Պարզապէս մենք էլ պիտի ընդունենք,  
 Որ մենք, միայն մենք Արարատ ունենք (բայց Արարատը Թուրքիոյ  
 կը պատկանի),  
 Եւ որ այստեղ է՝ բարձրիկ Սեւանում,  
 Երկինքը իր ճիշտ պատճենը հանում (հիմա Սեւանը նեխած է,  
 ապականած է):  
 Պարզապէս Դաւիթն այստեղ է կռվել (այդ՝ ժամանակին էր, Դաւիթը  
 ո՞ւր է հիմա),  
 Պարզապէս Նարեկն այստեղ է գրվել (գոնէ Աստուած լսե՞ց Նարեկի  
 աղօթքները):  
 Պարզապէս գիտենք ժայռից վանք կերտել (եթէ ամրոց, բերդ  
 կերտէինք աւելի լաւ չէ՞ր ըլլար),  
 Քարից շինել ձուկ (անոր համար Հայաստանցիներուն կէսին  
 ալուաները փճացած են),  
 Եւ թռչուն՝ կաւից (թռչուններ՝ որոնք չեն կրնար թռչիլ),  
 Ուսուցման համար եւ աշակերտե՛լ  
 Գեղեցիկին (երանի գորաւորին աշակերտէինք),  
 Բարո՛ւն (ի՞նչ շահեցանք),  
 Վսեմի՛ն (մենք մեզ խաբեցինք եւ նսեմացուցինք),  
 Լաւին ( լաւին, թէ Լաւրովին)...  
 Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում (եթէ այսպէս երթայ, այդ  
 քիչն ալ պիտի չմնայ):  
 Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում (որովհետեւ ուտել խմելէն  
 այնքան գիրացած ենք որ դասուիլ չենք կրնար)  
 Պարզապէս մեր բախտն ուրիշ է եղել (բայց բախտ ունեցա՞ծ ենք...  
 թէ դժբախտ եղած ենք).-  
 Պարզապէս շատ ենք մենք արյուն հեղել (երանի մենք ուրիշին  
 արիւնը հեղէինք)  
 Պարզապէս մենք մեր դարավոր կեանքում,  
 Երբ եղել ենք շատ (շա՞տ, ե՞րբ շատ ենք եղել)  
 Ու եղել կանգուն (հոգնեցա՞նք կանգուն մնալէն, հիմա արդէն ինկած  
 ենք),  
 Դարձեա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի (ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ  
 մենք բոլորին ճնշէինք),  
 Ո՛չ ոք չի տուժել զարկից մեր բազկի (երանի բոլորը տուժէին մեր  
 բազուկի զարկերէն):  
 Եթէ գերել ենք՝  
 Լոկ մեր գրքերով (ի՞նչ շահեցանք, գոնէ այդ գերիներուն ձրի  
 կ'աշխատցնէինք),  
 Եթէ տիրել ենք՝  
 Լոկ մեր ձիրքերով (ձիրքերով, երկաթեայ բազուկով տիրէինք եւ  
 մարդ ըլլայինք)...  
 Պարզապէս մահն էր մեզ սիրահարուել (կամ՝ մենք սիրահարուել

էինք մահուան «մահ իմացեալ անմահութիւն է», չէ՞),  
 Իսկ մենք ինքնակամ նրան չենք տրուել (ի՞նչ օգուտ):  
 Ու երբ ճարհատ մեր հողն ենք թողել՝ (եթէ ուզէինք, կրնայինք  
 մնալ, քիչ մը անձնագոհութիւն կը պահանջուէր),  
 Ո՛ւր էլ որ հասել, որտեղ էլ եղել (Ռուսաստան, Ամերիկա,  
 Աւստրալիա, Եւրոպա, Միջին Արեւելք),  
 Զանացել ենք մենք ամենքի՛ համար (սուտ, մենք նպարտաւաճառի մեր  
 խանութներն ու արհեստանոցները բացեր ենք հացի համար),  
 Շինել ենք կամուրջ (վճարուեա՞ծ ենք անոր համար),  
 Կապել ենք կամար,  
 Ամեն տեղ հերկել,  
 Հասցրել բերքեր (մեր անձնական շահերուն եւ օգտին համար),  
 Ամենքի՛ն տվել մի՛տք, առած, երգեր (մեր «միտք»ը տալով՝ մեզի  
 «միտք» չէ մնացած, իսկ մեր «երգ»երը՝ միշտ եղած են տխուր, լալկան)՝  
 Պաշտպանել նրանց հոգեւոր ցրտից (մեր հոգիները հիմա սառած են,  
 չորցած),-  
 Ամեն տեղ թողել մեր աչքից՝ ցոլանք (անոր համար կուրցած ենք,  
 իրողութիւնները, իրականութիւնը տեսած չունինք),  
 Մեր հոգուց՝ մասունք (հոգի մնա՞ց որ մէջ մըն ալ ուրիշին տայինք),  
 Եւ նշխար՝ սրտից (անոր համար 30 տարուայ մեր մեծերը անսիրտ  
 մարդիկ են)...  
 Մենք քիչ ենք, այո՛, բայց կոչվում ենք հայ (Շէյքսպիրը պիտի ըսէր  
 «What's in a Name»)  
 Գիտենք դեռ շանցած վերքերից տնքալ (ե՞րբ պիտի անցնին,  
 դարմանուին այդ վէրքերը),  
 Բայց նոր ինդուսթրիալ ցնծալ ու հրճվել (ե՞րբ պիտի սկսինք ցնծալ  
 ու հրճվել, մի՞շտ աշխարհին մէջ),  
 Գիտենք թշնամու կողը մխրճվել (եւ հոն խեղճուիլ),  
 Ու բարեկամին դառնալ աջակից (բարեկա՞մ, ո՞ւր են այդ  
 բարեկամները: Մենք մասնագէտ ենք մեր բարեկամները թշնամի  
 դարձնելու մէջ),  
 Դուրս գալ մեզ արուած բարութեան տակից (ո՞վ մեզի բարիք ըրած  
 է որ: Եթէ ըրած են, մենք բարիքին պատասխանած ենք ապերախտութեամբ),  
 Մեկի փոխարեն տասն հատուցելով (նախ մէկին դէմ մէկով  
 հատուցենք, յետոյ կը մտածենք տասնապատիկը հատուցանել)...  
 Յօգուտ արդարի եւ արեգակի  
 Գիտենք քուէարկել մեր կյանքով նաեւ (կեանք մնա՞ց որ մէջ մըն  
 ալ կեանքով քուէարկենք)...  
 Բայց թե կամենան մեզ բռնի վառել՝ (եկեղեցիներուն մէջ վառեցանք  
 արդէն)  
 Մենք գիտենք միա՛լ - եւ կրա՛կ մարել (տակաւին կը մխանք, ե՞րբ  
 պիտի մարենք այդ կրակը, չե՞մ գիտէր).  
 Իսկ եթէ պէտք է ցրել՝  
 Գիտենք մոխրանալ որպէս վառ կերոն (մոխրացեր գացեր ենք:  
 Ինչո՞ւ ուրիշին խաւարը պիտի ցրենք: Կը բաւէ օտարամոլութիւնը,  
 քծնելու հոգեբանութիւնը).  
 Եւ գիտենք նաեւ մեզ կրքոտ սիրել (այո, արջի սիրով, այնքան  
 սեղմենք որ սիրածը շնչասպառ ըլլայ ու մեռնի).  
 Բայց ուրիշներին միշտ էլ յարգելով (ճիշդ է, մենք արդէն օտարամոլ  
 ենք, պէտք եղածէն ալ աւելի)...  
 Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում,  
 Բայց մեզ էլ գիտենք (հաւանաբար 100 տարի ետք սկսինք մենք  
 մեզ «գիտնալ») -  
 Մեզ հա՛յ են ասում (այո՛, ուրիշները մեզի հայ կ'ըսեն):  
 Եւ ինչո՞ւ պիտի չհպարտանանք...  
 Կա՛նք (տակաւին կանք):  
 Պիտի լինենք (եթէ այսպէս երթանք, կը կասկածիմ):  
 Ու դեռ - շատանա՛նք (կը կասկածիմ: Արդէն 4,500,000-էն  
 2,900,000-ի իջանք: 1990-ականներուն 20,000 եւ աւելի  
 երիտասարդներ գոհուեցան, վերջերս ալ 5000-6000 երիտասարդներ  
 նահատակուեցան եւ 12,000-14,000 երիտասարդներ հաշմանդամ  
 դարձան: Ինչպէ՞ս «ՇԱՏԱՆԱՆՔ»...Ինչո՞վ շատանանք, ինչո՞ւ  
 շատանանք:  
 Եթէ իրապէ՛ս կ'ուզէք ՇԱՏԱՆԱՆ, ուրեմն պէտք է իսլամանանք եւ  
 բազմակնութիւնը որդեգրենք: Ուրիշ ճար չկա՛յ:

Մեր ԶԻՆՈՒՄԸ 2Է ՊԱՐՏՈՒՄԸ

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ԱՌՕ ԵՒ ԱԼԻՆ ՄԱԿԱՐԵԱՆ**



# Յայ Եկեղեցւոյ Լուսապայծառ Դէմքերէն՝ Գեորգ Ե. Սուրենեան Կաթողիկոսը (1847-1930)

«Թող թշնամին իմ դիակի վրայով մտնի մեր Սրբարանը» Գեորգ Ե. վշտալի Կաթողիկոս ԽԱՉԻԿ ԸԱՆՈՅԵԱՆ

Հայ ժողովուրդի վերջին դարու պատմութեան երկնակամարին վրայ, լուսաշող եւ փայլատակող աստղ մը կը հանդիսանայ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գեորգ Ե. Սուրենեան Կաթողիկոսը, որ իր կաթողիկոսութեան տարիներուն մեր ժողովուրդը ամէնէն մուսլիմ, տխուր եւ խաւար տարիները ապրեցաւ:



Գեորգ Ե. Վեհափառի կաթողիկոսութեան (1911-1930) հայ ժողովուրդը տեսաւ Յեղասպանութիւն, տեղահանութիւն, աքսոր, սովամահութիւն, համաճարակ եւ այլատեսակ զրկանքներ եւ ցաւեր:

Պատմական այդ դժուար օրերուն, Վեհափառ Գեորգ Ե. Կաթողիկոսի ներկայութիւնը դեղ եւ բալասան եղան մեր վշտահար եւ Յեղասպանութենէն մագապուած եղած եւ խլեակներու վերածուած, բայց իր յոյսը եւ հաւատքը բնաւ չկորսնցնող հայ փառապան ժողովուրդին համար:

Նմանապէս Գեորգ Ե. Կաթողիկոսը տեսաւ եւ մանսակից եղաւ Սարտարապատի անունով մկրտուած հերոսական ճակատամարտերուն, եւ վերջապէս բախտը ունեցաւ Մայիս 28, 1918-ին տեսնելու, դիմաւորելու եւ ողջունելու ազատ եւ անկախ հայրենիքը:

Դժբախտաբար անկախ Հայաստանի Ա. Հանրապետութեան կեանքը կարճ տեւեց, ուր Հայաստանը Սովետական Միութեան մաս կազմելով կորսնցուցինք այդ հանրապետութիւնը եւ իշխանութեան եկան հակակրօն եւ անաստուած դեկապարներ, որոնք մեծ դժուարութիւններ տուին ռուսական, վրացական եւ հայաստանեան ուղղափառ եկեղեցիներուն:

Այդ օրերուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսը կոչ ըրաւ ժողովուրդին, որ չդիմադրեն Ստալինեան օրերուն եղած հալածանքներուն եւ դժուարութիւններուն, գուապ ըլլան եւ սպասեն մինչեւ որ «այդ սեւ ամպերը անհետանան մեր երկրի վրայէն»:

Այդպէս ալ եղաւ Ստալին, Բերիան անցան եւ մեր Հայց. Առաքելական եկեղեցին մնաց:

Հոգելոյս Գեորգ Ե. Կաթողիկոսը ծնած է Թիֆլիս Օգոստոս 28, 1847-ին: Իր նախնական ուսումը ստացած է Թիֆլիսի տեղական վարժարանի մէջ, ապա էջմիածին անցած է եւ ուսանած է էջմիածնի Գեորգեան ձեմարանէն ներս:

1882-ին կը ձեռնադրուի վարդապետ, կը դասաւանդէ Գեորգեան ձեմարանին մէջ:

Գեորգ Ե. Կաթողիկոսը Առաջնորդ եղած է Արցախի, Գիւմրիի, Երեւանի, Վրաստանի եւ Աստրխանի (Ռուսիա) թեմերուն: Այս թեմերէն ներս ունեցած է վիթխարի գործունէութիւններ: Հոգեւոր, մշակութային, ազգային բազմերես գործունէութիւններ ծաւալած է այդ թեմերէն ներս: Իր վարչական արտակարգ կարողութիւններուն համար, 1907-ին էջմիածին կը հրահրուի վարելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի օգնականի պաշտօնը, իսկ 1911-ին կ'ընտրուի Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Երջանկալի շատակ Կաթողիկոսը իր մահկանացուն կնքեց Մայիս 8, 1930-ին:

Հոգելոյս Վեհափառին մարմինը թաղուեցաւ Ս. էջմիածին իր հոգեւոր եղբայրներու կաթողիկոսներու պանթէոնին մէջ:

Ամենայն Հայոց Գեորգ Ե. Կաթողիկոսը նամակներ եւ գիրքեր կը ստորագրէր «Վշտալի Կաթողիկոս» անունով, քանի որ ինչպէս յիշեցինք, հայոց պատմութեան մեծագոյն ողբերգութիւնը պատահած էր իր գահակալութեան տարիներուն, Վասպուրականի հայութեան գաղթը դէպի Հայաստան բազմաթիւ որբերու եւ սովածներու Ս. էջմիածնի մէջ պատասպարելու դժուարին բայց անխուսաբելի գործը կատարելով:

1917 թ. Հոկտեմբերին Ռուսաստանի մէջ կատարուած յեղաշրջումէն ետք, խորհրդային իշխանութեան բանակի զինուորները լքեցին կովկասեան ռազմաճակատը: Հայ ժողովուրդին համար ստեղծելով շատ վտանգաւոր վիճակ մը, որմէ օգտուեցաւ թուրքը եւ սկսաւ յարձակիլ Հայաստանի վրայ:

1918-ին Մայիսեան օրերուն թուրքերը յաջողեցան զրաւել իրզրումի

եւ Կարսի բերդաքաղաքները, ապա Մայիս 26-ին մտան Ալեքսանտրապոլ (այժմ Գիւմրի): Թուրքերը կը պատրաստուէին յարձակիլ Երեւանի վրայ: Այդ օրերուն հայոց զօրքի հրամանատարն էր Նազարբեկեան, որ էջմիածին կը դրկէ գնդապետ Սելիկեանին, որպէսզի Կաթողիկոսին առաջարկէ միաբանութեան հետ հեռանայ Ս. էջմիածինէն եւ Սեւանայ կղզի ապաստանիլ, քանի որ էջմիածինը մօտ է Երեւանի եւ էջմիածինը կարող է թշնամիին ձեռքը անցնիլ: Երբ գնդապետ Սելիկեան վտանգը ներկայացնելով այդ առաջարկը կ'ընէր, Կաթողիկոսը ոտքի կը կենայ եւ վճռական շեշտով կ'ըսէ. «Ես ոչ մէկ տեղ չեմ գնա գնեւերալ: Ես իմ ժողովրդից չեմ հեռանայ: Թող թուրքերն իմ դիակի վրայով մտնեն էջմիածին, եթէ դուք չէք կարող պաշտպանել մեր հայրենի սրբութիւնը, ես կը պաշտպանեմ», ըսաւ ծերունագարդ Հայրապետը եւ շարունակեց. «Մեր միաբաններին հետ Մայր Տաճարում կը հաւաքուենք, կ'աղօթենք մեր զօրքի յաղթանակին համար եւ կուռի օրերին հրահանգ կը տանք հնչեցնել էջմիածնի եւ ողջ Հայաստանի եկեղեցիներին գանգերը»:

Գնդապետ Սելիկեանի կարծիքով, Կաթողիկոսի ըսածը լոկ գեղեցիկ խօսք էր, ոչ աւելին ոչ պակաս: Ապա գնդապետ Սելիկեանին կը հետաքրքրէր ողջ միաբանութեան կարծիքը, արդեօք անոնք կը ցանկանան, որ միաբանութիւնը նման վտանգի մը առաջ դրուի:

Կաթողիկոսի կարգադրութեամբ դիւանապետը Վեհափառ հրահրեց միաբանութեան բոլոր անդամները, եւ երբ բոլոր միաբանները արքեպիսկոպոսներէն մինչեւ աբեղաները հաւաքուեցան, ծերունի Վեհափառը անոնց ներկայացուց սպասուող վտանգը, որն էր Ս. էջմիածինը ձգել եւ Սեւան կղզի ապաստանիլ եւ յայտնեց իր որոշումը. «Ես անձնապէս չեմ հեռանայ, թող թշնամին իմ դիակի վրայով մտնի մեր Սրբարանը, դուք ամէնքդ ազատ էք անելու այն, ինչ կ'ամենում էք...», ըսաւ Վեհափառը:

Կաթողիկոսի այդ խօսքերը, միաբաններուն մէջ անսպասելի իրարանցում յառաջացուց: Բոլորը միահամուռ կը վստահեցնեն Վեհափառին, որ իրենք նոյնպէս ոչ մէկ տեղ չեն երթար եւ մինչեւ մահ կը մնան իրեն հետ:

«Որ այդպէս է եղբայրներ, շարունակում է յուզուած Կաթողիկոսը, այսօրուանից իւրաքանչիւրդ պէտք է մի մի Ղեւոնդ Երէց ըլլաք եւ գնաք խրախուսէք զօրքին եւ ժողովրդին... գնացէք գիւղ եւ քաղաք ոտքի հանեցէք եւ ոտքի հանէք ամէնքին... եւ ամէն տեղ գիւղում կամ քաղաքում քաշեցէք եկեղեցիներու գանգերը գիշեր եւ ցերեկ, որ ամէնքը ոտքի ելլեն եւ իրենց տունն ու հայրենիքը պաշտպանելու համար...»:

Այդպէս ալ եղաւ Վեհափառին դուրս ելլելով, հոգեւոր բոլոր միաբանները, իւրաքանչիւրը շտապեց Վեհափառին խօսքը գործադրելու, հայրենիքի եւ ազգի փրկութեան համար:

Մայիս 22-ին առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ Ս. էջմիածնի Մայր Տաճարէն սկսեալ բոլոր գիւղերուն եւ քաղաքներուն եկեղեցիներու գանգերը կը ղօղանջէին, ժողովուրդը իր բոլոր խաւերով զինուած, դանակներով, բահով եւ բրիճով դաշտ նետուեցան հայրենիքի պաշտպանութեան համար:

Այդ ճակատագրական, վճռորոշ օրերուն, Վեհափառին ուղղակի պատերազմի դաշտ կը մեկնի նաեւ Ս. էջմիածնի գիտնական միաբաններէն, Գեորգեան ձեմարանի տեսուչ՝ Գերշ. Տ. Գարեգին Եպս. Յովսէփեան, (որ յետագային Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուեցաւ): Սրբազան Հօր այցելութիւնը մարտնչող բանակին եւ կամաւորներուն համար եղաւ անկիւնադարձային, որովհետեւ այդ օր հայ զինուորները եւ կամաւորները մտահոգ էին, թշնամին մեծ ուժով եւ բանակով կու գար եւ հայ զինուորները կը կարծէին ոչ մէկ հայկական ուժ կրնար կեցնել այդ ուժը: Անոնց համար ոգեւորիչ խօսքերը չէին ազդեր: Ծատ լսած էին «հայրենիք, ժողովուրդ, հայրենասիրութիւն»: Այս բառերը չէին ազդեր մարնչող հայ բանակին վրայ, որովհետեւ ոչ ոք կրնար այդ վիճակը փոխել կամ դիմադրել:

Այդ աղէտալի օրը Ս. էջմիածնի միաբան Գարեգին Եպս. Յովսէփեան հայրենասիրական ճառ մը կը խօսի ժողովուրդին, յատկապէս զօրքին յաղթանակի հաւատքը զօրացնելով անոնց մէջ:

«Հայ ժողովուրդը օրհասական կուրներ շատ է ունեցել, եւ միշտ էլ էլք մը գտել է փրկելու իրեն: Ելքը եղել է անձնագոհ հերոսութիւնը... յետ նայեցէք, մեզ միայն մնացել է Երեւանն ու էջմիածինը... եթէ հերոսութեան չդիմենք, ամէն ինչ կորցնելու է ի սպառ այլեւս չի լինի ոչ հայ, ոչ հայի»:

**GLENDALE WESTERN DRUG**  
ՏՕՔԹ. ՎԱՀԱՆ ԱԼԱՏԱՏԻ

Մեր Զինուորը ԶԷ ՊԱՆՏՈՒՍ



# «Միասին Ծնան եւ Միասին Մահացան»

ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԾԵՊԵՏԵԱՆ

Մոյն չօրուածը գրուած է 2 Նոյեմբեր 2020, ապրիլին 10 Նոյեմբերին Ատրպէյճանի, Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ կնքուած եռակողմ համաձայնազորէն առաջ:

Վահէ եւ Էտկար Արաքելեան երկու երկուորեակ եղբայրներ կ'ուսանէին Երեւանի Արնօ Պապաճանեան երաժշտական դպրոցին մէջ: Անոնք կը մասնագիտանային տուտուկի եւ գլարինէթի երաժշտական նուագարաններու մէջ: Անոնք 2018-ին գինուորագրուեցան հայոց բանակին՝ Հայաստանի քաղաքացի ուրիշ երիտասարդներու նման: Մնացած էր միայն երեք ամիսներ, որ երկու եղբայր գինձառայութենէ արձակուէին: Այդ երեք ամիսներու սպասումը գիրենք պիտի տանէր յաւիտենականութեան:

Արցախի պատերազմը: Արդէն եղաւ աւելի քան մէկ ամիս որ ահաւոր կռիւներ տեղի կ'ունենան: Մեծ է քանդուածը ու տակաւին մարդկային զոհերը: Հայկական քաջարի բանակն է որ կը դիմադրէ: Մեր երիտասարդ տղաքը կը կռուին իրենց արժանապատուութեան համար: Արժանապատուութիւնը հայուն կեանքին՝ ապրելու զայն նոյնիսկ հայուն հողին վրայ եւ իր ազգային ու քրիստոնէական ինքնութեան մէջէն: Այս՝ հայուն համար, սակարկելի չէ: Ինչպէ՞ս կարելի է սակարկել հայուն պայքարը երբ ան կը տգնի արդարութիւն եւ ճշմարտութիւն իրականացնելու եւ ապրելու համար իր հողին վրայ՝ խաղաղութեամբ:

Այս միայն Արցախի պատերազմը չէ: Ան պատերազմն է հայուն եւ աշխարհով մէկտեղ: «Հայրենական պատերազմ է», ըստ հայրենի իշխանութեան: Հայրենական այս պատերազմը հայուն համար կարելի չէ սահմանափակել աշխարհագրականօրէն: Այդ հայուն «լինելու թէ չի լինելու» պատերազմն է: Ինչպէս վարչապետ Նիկոլ Փաշինեան յստակացուց. «Մենք Տէր Զորի ճամբորդ չենք»:

Մեծ է թիւը մեր նահատակ գինուորներուն: Երիտասարդ կեանքեր եւ աւելի քան հազար քաջամարտիկ մինչեւ օրս, որոնք իրենց կեանքերը տուին այս սրբազան հայրենական պատերազմին: Իւրաքանչիւր հայ նահատակ գինուորի նկարը որ կը տեսնեմ կ'ապրիմ անոնց ուժը: Ուժը որ իրական է եւ վճռակամ: Թէ հայը կարելի չէ որ Տէր Զորի ճամբորդ ըլլայ այլեւս: Այս իրականութեան համար անոնք պիտի նուիրէին ու զոհէին իրենց կեանքերը:

Կը նայիմ իւրաքանչիւր նկարին: «Հայու աչքեր» են, որոնք կը խօսին, թեկուզ որ իրենց ֆիզիքական մարմինը անշնչացած է: Կը խօսին հայուն կեանքին մասին: Այն կեանքը ուր հայը պիտի շարունակէ ապրիլ եւ առանց ցաւի: Հայը գիտէ այդ ցաւը: Յեղասպանութեան ցաւն է այդ: Այդ ցաւը, որ սերունդէ սերունդ կը փոխանցուի՝ հասնելով մինչեւ մեր երիտասարդ քաջամարտիկ տղոց:

Վահէն եւ Էտկարը այն մեծ թիւով քաջամարտիկներէն էին, որոնք զոհուեցան այդ ցաւին համար: Երկու երաժիշտ երիտասարդներ, որոնք կարծես ամբողջացուցին բանաստեղծին փափաքը. «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ»: Անոնք մեռան՝ երաժշտութեամբ: Երաժշտութիւնը եւ արուեստը կարելի չէր դուրս հանել իրենց կեանքերէն՝ նոյնիսկ երբ անոնք գէնքը իրենց ձեռքին կը կռուէին հայրենի հողին պաշտպանութեան համար: Հայուն հողը՝ ինչ խօսք, նաեւ կը պաշտպանուի երգով եւ արուեստով:

Չեմ գիտեր, թէ ինչքան պիտի երկարի այս հայրենական պատերազմը ու տակաւին քանի հայ երիտասարդ տղաք պիտի նահատակուի:

Կը նայիմ 19-ամեայ Արտաշի նկարին: Ան իր ծնողքին միակ գաւաակն էր, որ 12 տարի ետք ծնած էր: Ան նահատակուեցաւ Ազատանի շրջանի պայքարի ընթացքին: Իւրաքանչիւր հայ նահատակ տղոց նկարին նայելով, կը սեղմեմ անոնց լիշատակը սրտիս ու հոգիս մէջ: Եթէ արցունքներս կը խեղթեմ, բայց նաեւ կ'ուզեմ ըսել. «Այս շատ մեծ մարդկային կորուստ է մեզի համար»:

Իւրաքանչիւր նահատակ տղոց ետին կայ հայ մայրը: Ու տակաւին հայրը, կողակիցը ու մանուկ երեխաները: Ինչ խօսք նորածինները, որոնք երբեք պիտի չի ճանչնան իրենց հայրը: Բայց անոնց արձունքները ինչպէս պիտի չոռնան: Իրենց ցաւը ինչպէ՞ս պիտի սփոփուի: «Երկու հազար թուականի ծնած ամբողջ սերունդ մը չքացաւ», Քնարիկ Պետրոսեանն է Երեւանէն, որ կը գրուցէ հետո: «Երեւի պէտք է սպասենք ամբողջ քսան եւ աւելի տարիներ պատրաստելու համար յաջորդ սերունդը», ըսաւ ան:

Պատերազմին կը հետեւիմ խառն զգացումներով: Մէկ կողմէ յուզում, տխրութիւն, նեղութիւն եւ բարկութիւն: Միւս կողմէ հպարտութիւն: Յուզում, տխրութիւն եւ նեղութիւն որ հայ տղաքը կը նահատակուին եւ մեր սիրելի Արցախը կը քանդուի: Բարկութիւն՝ թէ ինչպէ՞ս աշխարհ միայն կը դիտէ այս բոլոր անցուղարձերը: Մէկ-մէկ դուրս կուգան արտայայտութիւններ, խրատներ, օժանդակութիւն, այս կամ այն ձեւով զօրակցութիւն, բայց ոչ աւելի:



Կը նայիմ ներկայ աշխարհին եւ կեանքի նկատմամբ անոր համոզմունքները եւ արժէչափերը: Տակաւին ինչ խօսք պետութիւններու աշխարհաքաղաքական եւ տնտեսական հազար ու մէկ հաշիւներուն: Կը տեսնեմ, թէ ուր հասած են մարդոց սկզբունքները: Աշխարհ կը դիտէ ցաւը՝ այս պարագային հայուն ցաւը, եւ կը հաւակնի մնալ իր դիտորդի կարգավիճակին մէջ: Այս կը բարկացնէ զիս:

Բայց չուշանար իմ այս տրամադրութիւններուն մէջէն տեսնելու քաջալերական կայծ-խթան մը: Այս իմաստով դիպուկ է աւստրալիացի դերասան Մէլ Կիպսընի խօսքը ուղղուած հայութեան. «Ես եւ դուք գիտենք թէ ով է Աստուած: Գիտենք թէ Աստուծոյ կարողութիւնները անսահման են: Հայը փաստած է իր պատմութեան ընթացքին, թէ ինչքան հանդուրժողականութիւն ունի իր բոլոր դժուարութիւնները յաղթահարելու: Յարգանք ունիմ հայ ժողովուրդին նկատմամբ: Քաջ մնացէք»:

Խառն զգացումներուս միւս երեւոյթը՝ հայուն հպարտութիւնը, թէ ինչպէս դարձեալ կը փաստենք այսօր թէ որքան մեծ է մեր հանդուրժողականութիւնը՝ պայքարելու համար մեզմէ շատ աւելի գերհզօր ուժերու դէմ՝ Ատրպէյճան, Թուրքիա, Ժայռայեղականներ ու տակաւին (չ)երեւցող այլ ուժեր: Հայն է որ կը կռուի այս բոլորին դէմ: Հայը՝ իր փոքր ուժով, մեծ սխրանքներ կը գործէ:

Մենուս Հովհաննիսեանը մէկ հայ քաջամարտիկն է որ նահատակուեցաւ Արցախի այս պատերազմին: Անոր մայրը՝ Կարին Տոնոյեան, կը սէ իր գաւակին ու բոլոր նահատակներուն համար. «Անոնք այլեւս երկրի վրայ չեն ապրիր, այլ երկինքի ու երկրի միջեւ, ուրկէ ամէն բան տեսանելի է եւ ուրկէ տիեզերական ճշմարտութիւնը աւելի մօտ է»:

Կարինի ճշմարտութիւնը հայունն է անպայման եւ որ հիմնուած է նոյնիսկ արդարութեան վրայ, որ հայ տղաքը այսօր կը պահպանեն ի գին նահատակութեան: Կարին Տոնոյեանն է. «Ես իմ ամենաթանկին տուի իմ ամենաթանկը»:

Պիտի վերադառնանք Վահէն եւ Էտկարին նահատակութեան եւ անոնց մօր որ կը ողբայ իր երկու երիտասարդ գաւաակներուն նահատակութիւնը. «Միասին ծնան եւ միասին մահացան»:

Այս նահատակ կեանքերը սակարկելի չեն: Այս հայրենական պատերազմը մեզ բոլորս դարձեալ պիտի դնէ զգաստութեան խոշոր հրամայականի դիմաց, թէ հայը այսօր եւ ասկէ ետք պարտի միասին ապրիլ: Այսօր այս հայրենական պատերազմին մէջ համայն հայութիւնը մէկտեղուած է եւ կը պատերազմի միասին՝ տարբեր միջոցառումներով: Արցախ, Հայաստան եւ Սփիւռք՝ աշխարհով մէկ տեղ:

Այս պատերազմին մէջէն կայ մէկ յստակ իրականութիւն՝ թէ հայը իր այս կեանքին մէջ ունի Աստուած, մեր երկնաւոր Հայրը: Իսկ երկրի վրայ ունի հայը: Այս հայրենական պատերազմը մեզ պիտի խթանէ որ հայը իր կեանքը ապրի Աստուծոյ եւ Աստուծոյ հետ եւ միասին՝ հայը հայուն հետ, իր թիւով, միտքով, կարողականութեամբ եւ ուժով: Հայրենական այս պատերազմը ցոյց կուտայ, թէ հայը կրնայ ապրիլ միասին իր թիւով, միտքով, կարողականութեամբ եւ ուժով ու տակաւին սխրանքներ գործել: Պէտք չէ երբեք ստորագնահատել հայկական այս մտաւոր եւ ֆիզիքական ուժը: Մանաւանդ որ այս ուժին մէկ մասը՝ Սփիւռքը, տարածուած է աշխարհով մէկտեղ, ինչ որ իր շատ մը

Շար.ը էջ 38

**ՄԵՐ ԶԻՆՈՒՐԸ 2Է ՊԱՐՏՈՒՄԸ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ԱՐԱ ԵՒ ՍՈՆԻԱ ՊԱՊԱՅԵԱՆ**



# ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՆ, ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ ՀԱՅ ԱԶԳԻՆ



**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.  
ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ ՊՈՅԱՄԵԱՆ**



# Կրակի Մկրտութիւն

ՍԱՐԳԻՍ ՆԱԾԱՐԵԱՆ

## ԻՆՉՊԷՍ ԼՐԱԳՐՈՂ ԴԱՐՁԱՅ

Ես ու «Արարատ»ը ուղիղ քսան տարեկան տարեկիցներ էինք, երբ 1957-ի գարնանային օրերէն մէկը գիրար որդեգրեցինք՝ առանց նոյնիսկ գիրար մօտէն ճանչնալու, այլ միայն վստահելով մեզ իրարու լծակից դարձնել ուզող երկու բարեմիտ մարդոց դատողութեան: Անոնցմէ մէկը հայրս էր, իր գաղափարական մկրտութիւնը՝ մեծանուն յեղափոխական Փարամազի ձեռամբ Տիգրանակերտի մէջ ստացած, հրապարակագիր-հրապարակախօս, լրագրող-խմբագիր եւ հասարակական գործիչ՝ դեղագործ Միհրան Սարգիս Նաճարեանը: Միւսը՝ «Արարատ»ի պատասխանատու տնօրէն Օննիկ Ճամպուլեանը: Այդ օրուան յաջորդող քառասուն եւ հինգ տարիները ցոյց տուին որ անոնք, գիտակցաբար կամ բախտի բերմամբ, չէին սխալած իմ ապագայի հաշուին իրենց ըրած կարգադրութենէն իրենց ակնկալիքներուն մէջ: Առանց կարծիքս անգամ առնելու անոնց ըրած կարգադրութիւնը զիս կը դնէր «Արարատ»ի տնօրէնի տրամադրութեան տակ ու կը դարձնէր թերթի տնօրէնին «խելօք գործակատարը»:



Այնպէս ինչպէս նորածին մանուկը՝ իր մկրտութեան ժամանակ խօսք չունի իր անուան ընտրութեան մէջ, ես ալ ապագայ ասպարէզիս ընտրութեան մէջ խօսք չունեցայ: Հակառակ անոր որ արդէն երիտասարդ էի, չհամարձակեցայ նոյնիսկ առարկել իմ ու ապագայիս վերաբերեալ եղած կարգադրութեան մասին: Ժամանակները տարբեր էին, հայր-որդի յարաբերութիւններու ձեւն ու ոճը՝ տարբեր:

Յայտնապէս, հօրս նպատակը՝ իր որդին ի՛ր նախասիրած ասպարէզին մէջ ընդգրկուած տեսնել էր: Այս նպատակով, երբ պատանի էի, իր յօդուածները ինծի գրել կու տար, որովհետեւ 41 տարեկանին, դեղարանէն ներս գործած անխոհեմութեան մը հետեւանքով աչքին լոյսը մեծ մասամբ կորսնցուցած էր: Հօրս յօդուածագրի պարտականութիւնը աստիճանաբար ինծի փոխանցուած էր՝ Սահակեան վարժարանի հայերէնի վաստակաւոր ուսուցիչ եւ ծանօթ երգչուհի Արփինէ Փէհլիվանեանի հօր՝ Նշան Քէօմիւրճեանին կողմէ, որ մինչ այդ սիրալոյսով կը կատարէր այդ պարտականութիւնը: Իւրաքանչիւր յօդուածագրութիւն՝ հայերէն լեզուի, ուղղագրութեան, հայոց պատմութեան դասապահ մըն էր ինծի համար:

Ձիս հայ մամուլի գինուորագրեալ մը դարձնելու հօրս ցանկութիւնը կը բաժնէր նաեւ մեծ հայրս՝ Սարգիսը, որ «Ազգակ»ի ցրուիչ հայրիկն էր: Երբ մանուկ էի, ամէն անգամ որ ան թերթի արտօնատէր-տնօրէն Հայկ Պալեանին հետ հաշուեփակ կատարելու համար «Ազգակ»ի խմբագրատուն-տպարանը կ'երթար, Ս. Նշան եկեղեցուց մօտ, ընդհանրապէս Կիրակի օրերը, զիս հետը կը տանէր, ձեռքս ամուր բռնած, Մար Մխայիշէն մինչեւ Ս. Նշան քալելով: Ծամբու ընթացքին ամէն անգամ որ ձանձրոյթի կամ յոգնութեան նշաններ ցոյց տայի, ան գրպանէն՝ թուղթի կտորի մը մէջ փաթեթուած արմաւ կամ լոխում հանելով, կու տար որ ուտեմ եւ թարմանամ: Երբ պատանի դարձայ, կէսօրները, դպրոցէն տուն վերադարձիս, թերթէն տասնեակ մը օրինակներ ինծի կու տար որպէսզի Մար Մխայիշի հանրակառքի կայա-րանին շուրջ կանգնած՝ գանոնք սպառեմ եւ անոնց փոխարժէքէն գրպանի ծախսի բաժինս առնեմ: Այդ օրերուն, Մար Մխայիշը եւ շրջակայքը հայկական թաղեր էին:

Ինչպէս կը տեսնուի, հայրս ու մեծ հայրս լուրջաբար միեւնոյն երազը կը փայփայէին իմ ապագայիս մասին. կ'ուզէին զիս տեսնել հայ մամուլի ծառայութեան մէջ: Սակայն անոնք տարակարծիք էին իրենց այդ երազի իրագործման միջոցին շուրջ: Մեծ հօրս համար դժուար էր հակադրուիլ հօրս նախընտրութեան, հակառակ անոր որ հայրս՝ «Արարատ»ի խմբագրական մարմնի վարիչն ըլլալով հանդերձ՝ չէր յաջողած հնչակեան թերթէն օրինակ մը անգամ ծախել տալ իր դաշնակցական հօր: Հօրս եւ մեծ հօրս միջեւ առկայ գաղափարական տարակարծութիւնը չէր զգացուեր տունէն ներս եւ չէր խանգարեր բազմանդամ ընտանիքին համերաշխ ու անդորր կեանքը: Իրարու հանդէպ յարգալիր եւ սիրով էին ընտանիքին անդամները:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՃԱԽԵԼՈՒ ԲԱԽՏԸ ՉՈՒՆԵՑԱՅ

Մեծ հայրս համակերպած ըլլալով հօրս ընտրանքին, միեւնոյն տարուան Մայիսին ինքզինքս գտայ «Արարատ»ի յարկէն ներս՝ իբրեւ

խմբագրութեան օգնական, եւ միաժամանակ իբրեւ աշխատակոր՝ խմբագրատան յարակից թերթի տպարանին մէջ: Այսպէս որոշած էին հովանաւորներս, որպէսզի ընտելանամ հայ թերթի մը հրատարակութեան ամբողջ խոհանոցին: Խմբագրատան մէջ, տնօրէն Օննիկ Ճամպուլեանին եւ գլխաւոր խմբագիր Արմէն Ղարիպին, շուտով նաեւ «Կայծ»եան սերունդի վերապրողներէն, հրապարակագիր, տեսաբան, պայագրացի Արսէն Կիտուրի ձեռքին տակ բառին իսկական առումով «bon a tout faire» մըն էի, առանց հաշուելու տակաւին Յարութիւն Չէքչէնեանը, որ թերթին վարչական պատասխանատուն էր եւ տպարանին ու խմբագրատան մէջ աշխատանքային ամէն բաց գոցելու գործը յաճախ ինծի կը վստահէր: Բոլորէն քիչ մը աւելի ֆրանսերէն գիտնալս որոշ առաւելութիւն մը կու տար ինծի: Իսկ հայերէն գրեթէ անսխալ գրելու շնորհս կը գորացնէր այդ առաւելութիւնս: Հակառակ անոր որ ազգային վարժարան յաճախելու բախտը չէի ունեցած, այդ պակասը հոյակապ կերպով լրացուցած էին հայերէնի անգլագական ուսուցիչներս՝ նախ հայրս, ապա Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեմարանին մէջ Պր. Կարապետը (Կարապետեան), երջանակալիշատակ Մեսրոպ վրդ. Թերզեանը (յետագային՝ Եպիսկոպոս) եւ մանաւանդ Հայկական Դատի մեծ պաշտպան, գրականագէտ, հրապարակագիր Վազգէն Այգուլին (Գէորգ Պաղճեան): Հեզահամբոյր մարդ, մեծ մտաւորական, բանասէր, բանաստեղծ, հրապարակագիր ու խմբագիր Հրաչ Քաջարեանց եղաւ յետ դպրոցական տարիներու ուսուցիչս «Մասիս»ի խմբագրատան կամ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի շրջաբակին մէջ:

Տարիներ ետք, անդրադարձայ թէ այս անգլագական հայերէնագէտ ուսուցիչ-դաստիարակները ինծի, եւ իմ սերնդակիցներէս շատերուն, չոր ու ցամաք ձեւով հայերէն լեզուն սորվեցնելէ աւելի, սորվեցուցին սիրելի Մայրենին, սիրելի Հայոց գիրն ու գրականութիւնը, պատմութիւնն ու մշակոյթը, սիրելի ամէն ինչ որ հայ պատանին ու երիտասարդը իր արմատներուն կը կապէ, սորվեցուցին կառչիլ անոնց: Բառին ամբողջական առումով անոնք հայ մանկավարժներ էին, օժտուած նոր սերունդներուն հայեցի դաստիարակութիւն ջամբելու ընդոծին շնորհով ու անսակարկ նուիրումով: Երախտաւոր այս մարդոց շնորհն ու նուիրումը արժանաբար համալրեցին Հայր Տը Լավերնէթի, Հայր Էլի Շատի, Հայր Լուի Հուէի, Հայր Քոկոյի, Հայր Լուի Մալոյի, Հայր Յարութիւն Ճապուրեանի, Հայր Մարկեանի, Փէր Վիլարի եւ հոսակ՝ Հայր Սահակ Քէշիշեանի նման Յիսուսեան հայասէր, հայատուէր եւ հայագէտ վարդապետներ: Յեղասպանութենէն ճողոպրած եւ ասպնջական Լիբանանի ու Սուրիոյ մէջ կայք հաստատած հայ իլեակներն ու անոնց յետնորդ սերունդները խոր երախտագիտութեամբ միայն կրնան յիշել Յիսուսեան Միաբանութեան անդամ այս Հայերուն հայանպաստ աշխատանքը: Անոնք հայու բեկորներուն ջամբեցին ո՛չ միայն ուսում, այլ մանաւանդ հայեցի դաստիարակութիւն, ազգասիրութիւն ու հայրենասիրութիւն:

Այսպիսի դաստիարակութեամբ մեծցած երիտասարդ էի, երբ ինքնաբերաբար կ'ընդգրկուէի լրագրութեան եւ հասարակական գործի մէջ, մինչ Յիսուսեան Հայերու Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեմարանէն ետք ուսումնառութիւնս կը շարունակէի բոլորովին տարբեր ուղղութիւններով՝ մէկը առեւտրագիտական ճիւղին (IHL), իսկ միւսը՝ Ecole Supérieure des Lettres-ի մէջ, Music and Art Teaching Center-ի երաժշտանոցի timbale-ի եւ trompette-ի դասընթացքներուն գուգահեռ:

## ՊԻՏԻ ԱՌԱՐԿԷԻ՞ ԵԹԷ ԱՆԳԱՄ ԳԻՏՆԱՅԻ...

Լրագրութեան եւ հասարակական գործունէութեան մասին արեւելումի ոչ մէկ դասախօսութիւն լսած էի երբ «Արարատ»էն ներս մուտք կը գործէի: Ոչ ոք բացատրած էր թէ ի՞նչ է լրագրութիւնը, կամ ի՞նչ կը նշանակէ հասարակական գործ: Հօրս յօդուածները գրելու ժամանակ, անոնց ազգային, ընկերային, քաղաք-կան ու գաղափարական բովանդակութեան մասին ինծի տրուած բացատրութիւններէն բացի, առիթը չէի ունեցած հաղորդակցելու ինծի «հրամցուող» զոյգ ասպարէզներուն հետ: Անոնք՝ ընտանեկան միջավայրիս բնական շարունակութիւնը ըլլալին կարծես: «Հօրենական ժառանգութիւն է» պիտի ըսէր քանի մը տարի առաջ բարեկամս՝ Բժիշկ Թորոս Թորանեանը՝ հայ խմբագիրներուն նուիրումը իր մէկ ուսումնասիրութեան մէջ՝ նշելով որ հայ թերթերու խմբագիրներէն շատեր իրենց ասպարէզը աւանդ ստացած են իրենց հօրմէն կամ մօտիկ հարազատէ մը եւ ո՛չ մէկ կազմակերպութիւն կրնայ հպարտանալ որ իր հովանաւորած թերթին խմբագիրը ինք պատրաստած է:

Արդեօ՞ք պիտի առարկէի եթէ գիտնայի անգամ որ ասպարէզիս



**Մեր Զինուորը Զե Գարնանը**

**ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՅԵԱՆԻ ԱՆԹԱՐԱՄՅԻՇԱՏԱԿԻՆ ԱԼՊԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ**



# Կրակի Սկրտութիւն

Բերումով կրնայի սպառնալից վիճակներու դէմ յանդիման գտնուիլ, կամ եթէ գիտնայի մանաւանդ որ կուսակցական կամ յանձնառու թերթի մը աշխատակցիլը կրնայ թշնամական արարքի մը համագոր նկատուիլ եւ երբեմն ալ դառնալ կեանքի գնով կատարուող աշխատանք մը, ինչպէս ի յայտ եկաւ աշխատանքի սկսելէս հազիւ տարի մը ետք, 1958-ի ամրան, երբ պայթեցան Լիբանանի քաղաքացիական կռիւները, որոնց պատրուակ ծառայած էր Հանրապետութեան նախագահ Քամիլ Շամունի՝ իր պաշտօնաշրջանը ամէն գնով երկարաձգելու յամառութիւնը:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԴԱՍ ԵՂԱԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ**  
 Իրականութեան մէջ, սակայն, Քամիլ Շամունի եւ վարչապետ Սամի Սուլհի գլխաւորած վարչակարգին դէմ պայթած ժողովրդային գինեալ դիմադրութիւնը շրջանային ու միջազգային աւելի խոր պատճառներ ունէր: Միայն Քամիլ Շամունը կամ անոր վարչակարգը պաշտպանելու համար չէ որ ամերիկեան բանակը ցամաքահասնում կատարած էր Լիբանան (17 Յուլիս, 1958), այլ նասրականութեամբ յատկանշուող արաբական ազգայնականութեան զարթոյթը արգելակելու նպատակով: Ամերիկացիներու այս նպատակին մէկ գոհն էր Լիբանան, որ իր բոլոր համայնքներով ու քաղաքական հոսանքներով բաժնուած էր երկու հակադիր ճակատներու մէկը, գլխաւորութեամբ նախագահ Քամիլ Շամունի, կը համախմբէր փաղանգաւորները, դովմիները եւ Հ.Յ. Դաշնակցութիւնը, իսկ միւսը՝ «Ժողովրդային Դիմադրութեան ճակատ» պիտակին տակ եւ առաւելաբար Լիբանանի Ընկերակարական Յառաջդիմական Կուսակցութեան մեծանուն ղեկավար Քամալ ձուճպլաթի առաջնորդութեամբ, կ'ընդգրկէր «ձախակողմեան» կամ «յառաջդիմական» յորջորջուած կուսակցութիւններն ու շարժումները, եւ ընդհանրապէս օրուան ամերիկամէտ վարչակարգին հակառակորդ հոսանքները: Ասոնց շարքին էին Ս.Դ.Հ.Կ.ը եւ Ռ.Ա.Կ.ը: Երկպառակտուած էր լիբանանահայութիւնը եւ այս պատակուածը շատ սուղ արժեք իրեն: Եղբայրասպան կռիւներու գոհ բազմատասնեակ հայ երիտասարդներու արեան գնով՝ հայ համայնքը եւ յատկապէս գայն գլխաւորող կուսակցութիւնները ձեռք բերին այնուհետեւ՝ օտար հոսանքներէ ու ազդեցութիւններէ տարուելով իրարու դէմ գէնք բարձրացնելու ազգակործան արկածախնդրութիւններէ ամէն գնով խուսափելու իմաստութիւնը, որուն կը պարտինք ուղիղ 17 տարիներ ետք լիբանանահայութեան եւ միեւնոյն ազգային երեք կուսակցութիւններուն կողմէ մտադրացուած ու գործադրուած «ըրական չէզոքութիւնը», որուն շնորհիւ լիբանանահայութիւնը եւս հայրենակործան կռիւներուն մէջ ներգրակուելու փորձերն ու ճնշումները ձախողեցան 1975-ին պայթած 15 ամեայ պատերազմի ընթացքին:

Այսպիսի լարուած պայմաններու ներքեւ է որ հազիւ տարի մը առաջ մեծածաւալ դարձած ու նոր թափով հրապարակ ելած «Արարատ» օրաթերթը լոյս կը տեսնէր իր խմբագրատան կողքին հաստատուած սեփական տպարանէն, Նահր ճամբու վերեւէն անցնող երկաթեայ կամուրջին մօտ, Մար Միայնիլ ու Նոր Հաճըն թաղերուն միջեւ: Փողոց մը միայն «Արարատ»ը կը բաժնէր Հ.Մ.Մ.ի ակումբէն, որ յետագային պիտի դառնար աւետարանական աղօթատեղի:

**«ԱՐԱՐԱՏ»Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ-ՏՊԱՐԱՆԻՆ ԶԻՆԵԱԼ ՊԱՇԱՐՈՒՄԸ**  
 1958-ի աշնանամուտին, եղանակի աստիճանական բարեխառնումը չէր նպաստած երկրի հակառակորդ կողմերուն միջեւ արդէն վեց ամիսէ ի վեր շարունակուող պատերազմաբոյր լարուածութեան մեղմացումին, հակառակ լիբանանեան բանակի ընդհանուր հրամանատար գոր. Ֆուատ Շեհապի Հանրապետութեան նախագահ ընտրութեան՝ իբրեւ համախոհական եւ անհառ ղեկավար (ընտրութիւնը՝ 1 Օգոստոս, 1958-ին, պաշտօնին ստանձնումը՝ 23 Սեպտեմբերին):

Ինչպէս կը պատահի սովորաբար Լիբանանի մէջ, ամառը՝ հրաժեշտ տայ ռազմ, վերջին անգամ մը եւս կը զգացնէ իր քրտնաբեր բնութիւնը: Ամառնային այդպիսի կիզիչ օրերէն մէկն էր եւ երկրին մէջ տիրող քաղաքական մթնոլորտին լարուածութիւնը աւելի ճնշիչ դարձուցած էր տաքը խմբագրատան մէջ, երբ կէսօրուան յաջորդող առաջին ժամերուն, «Արարատ»ի հայրիկը՝ իր բարձր հասակով ու ալլալլած երեւոյթով յայտնուելով իբրեւ խմբագրատուն ծառայող սենեակի մուտքին, աչքով հրաւիրեց գիտ ակնարկ մը նետելու պատուհանէն դուրս: Այն ինչ որ տեսայ ալլալլեց նաեւ գիտ: Զինեալներ դիրք բռնած էին Հ.Մ.Մ.ի ակումբի պատերուն տակ եւ մինչեւ իսկ քանի մը գինեալներ ալ կային ակումբին տանիքը: Հայրիկը, որ Սուէտիոյ լեռներուն վրայ իր յեղափոխականի մկրտութիւնը ստացած աներկիւղ ծերունի մըն էր Գէորգ Կէօքճեան անունով, իր երիտասարդական կորովը վերագրած եւ թշնամիին յարձակումը դիմազարակելու պատրաստուող մարտիկի մը շարժուձեւերով

«հրահանգեց» ինծի օգնել իրեն՝ գոցելու պատուհաններուն փեղկերը եւ պատրաստուիլ մեկնելու, ըսելով որ առանձինն ենք խմբագրատան մէջ... որովհետեւ բացակայ էին նաեւ խմբագրատան երկու գինեալ պահակները, որոնք սկզբունքով մեզ պաշտպանելու պարտականութիւնը ունէին...: Դէպքերու զարգացումը՝ աւելի ուշ ինծի մտածել տուաւ որ լաւ որ անոնք չկային...: Որովհետեւ անոնց ներկայութեան դէպքերը կրնային աւելի ճակատագրական վախճան ունենալ մեզի համար:

Շտապել հրահանգեց հայրիկը՝ խմբագրատան բանալին բարձր բռնած, պատրաստ՝ դուռը կղպելու անմիջապէս որ դուրս գայինք: Բայց արդէն ուշ էր: Զինեալները խմբագրատան փողոցին բերանն էին: Փախուստի տարբեր ճամբայ չուներնալով, հայրիկը դուռը փոխանակ դուրսէն կղպելու՝ ներսէն կղպեց:

## «ՄԻ՝ ՎԱԽՆԱՐ» ԸՍԱԾ ԻՐ ՀԱՅՐԱ

Սրտողորած, մեր ականջները լարած՝ կը փորձէինք գուշակել թէ ինչ տեղի ունենալու վրայ է դուրսը, խմբագրատան շուրջ: Գրեթէ անաղմուկ մօտեցող ինքնաշարժի մը դրան առջեւ կենալը զգացինք: Ինքնաշարժին դուռերը բացուեցան, բայց չփակուեցան: Դուրսը ետուզեա մը զգալի էր: Դժուար չէր հետեւցնել որ խմբագրատունը պաշարուած է: Հայրիկը, պաղարիւն, ականջը մուտքի դրան կողմը, կեցած էր նրբանցքին ծայրը, պատին ետեւ: Ես՝ սարսափած էի պարզապէս, որովհետեւ այդ օրերուն ամէնէն աժան բանը մարդու կեանքն էր՝ «արպաթաշ»ի փամփուշտէն ետք: Բնագրաբար տարուեցայ եղելութիւնը հօրս տեղեկացնել հեռաձայնով, առանց մտածելու որ ինչ կրնար ընել գրեթէ աչազուրկ հայրս: Այդ պահուն սակայն ուրիշ ընելիք չուներ: Մատներուս ծայրը կոխելով մտայ ճամպուլեանին սենեակը, ուր կը գտնուէր հեռաձայնի միակ գործիքը: Վերցուցի ընկալուչը եւ հաւաքեցի Մար Միայնիլի մեր տան թիւը: Ըստ սովորութեան, հայրս պատասխանեց: Հնարաւորին չափ ցած ձայնով պարզեցի վիճակս, որուն ի պատասխան լսեցի «մի՛վախնար, հոն կեցիր» անոր հրամայալից խօսքերը եւ հեռաձայնին երեսիս գոցուելուն շխրտոցը: «Հոն կեցիր» հրահանգեց: Ուրիշ ինչ կրնայի ընել որ...: Ան կարծես աւելին լսել անգամ չուզեց: Մտածեցի թէ եթէ աւելին լսէր անգամ, ինչ կրնար ընել աչքին լոյսը գրեթէ ամբողջութեամբ կորսնցուցած եւ տունը արգելափակուած մարդ մը, որքան ալ խիզախ անցեալ ունեցած ըլլար եւ սենեկազգեստին գրպանը՝ «հինգնոց» արծաթագօծ ատրճանակ մը միշտ: Մտքի ու գրչի մարդ էր, բայց հնչակեան ուսանողական միութեան անդամներուն հետ իր հանդիպումներուն ժամանակ եւ նոյնիսկ բեմէն՝ կը յորդորէր իւրաքանչիւրին անպայման ունենալ սեփական ատրճանակ մը, ըսելով որ «եթէ մեր հայրերը մեր բարձերուն տակ, Սուրբ Գիրքին հետ ատրճանակ մըն ալ դնէին, մեր ճակատագիրը կրնար տարբեր ըլլալ»:

Վերադարձայ նրբանցքի պատին ետեւ, ուր ապաստանած էր հայրիկը՝ ձեռքին կորածեւ թուրը, գոր հետը բերած էր երկրէն եւ իբրեւ յիշատակ կը պահէր տպարանին մէկ անկիւնը՝ տղաներուն ցոյց տալու համար կարծես իբրեւ վկայ, ամէն անգամ որ Սուէտիոյ անցեալին դրուագ մը պատմէր: «Կրնայ պէտք ըլլալ» ըսաւ նկատելով զարմացական նայուածքս ձեռքին ամուր բռնած սուրին: Աւելորդ էր առարկել: Իր ինքնապաշտպանութեան գէնքն էր: Ըսի թէ պիտի փորձեմ կապի մէջ մտնել դուրսիներուն հետ որպէսզի չկրակեն: Գաղափարս հաճելի չթուեցաւ ծերունիին: «Խեղճ ես» յարեց: Բայց արդէն դուրսիներն են որ հրաւիրեցին մեզ դուռը բանալու եւ դուրս գալու եթէ չենք ուզեր որ կրակեն:

Զեմ գիտեր ինչ համարձակութեամբ, վախս թաքցնել ջանալով ուղղուեցայ դէպի ճամպուլեանի սենեակին պատուհանը, որուն առջեւ կը զգայի որ գինեալ մը կանգնած է: Անոր զգացուցի ներկայութիւնս եւ անգէն ըլլալս: Կողմնակի կեցած՝ վարանոտ շարժումներով սկսայ պատուհանը բանալու գործողութեան: Հագիւ փականքը վերցուցի, գինեալ երիտասարդը գործողութիւնը հապճեպ շարունակեց իր գէնքին փողով: Նկատեցի որ ինքն ալ նուազ սարսափած չէ եւ կրնայ վախէն՝ կրակելու սխալը գործել: Մինչ աչքով կը խուզարկէր գիտ, ըսի թէ հետս ծերունի մը կայ եւ դուռը պիտի բանամ: Գլուխով հաւանութեան նշան ըրաւ եւ աչքով հետեւեցաւ քայլերուս:

Մատները իրենց հրագէններու բլթակին՝ չափազանց պրկուած երեւոյթով գինեալներ կը սպասէին դրան առջեւ, դիրք բռնած Citroen ինքնաշարժի մը ետեւ: Անոնցմէ մէկը, որ պետերնին ըլլալ կը թուէր, ատրճանակ մը բարձր բռնած, մօտեցաւ ինծի ու հարցուց թէ քանի՞ գէնք կար ներսը եւ ո՞ւր թաքնուած են անոնք: Այս միջոցին լսուեցաւ փամփուշտի պայթիւն մը: Հայրիկը ներսէն լեղապատառ յայտնուեցաւ



**ՏԻԿ. ԱԶԱՏՈՒՆԻ ՄՈՒԹԱՅԵԱՆ**

Մեր Զինուորը 25 ՊԱՆՏՈՒՍ



# Կրակի Մկրտութիւն

դուրսը՝ զիս ողջ տեսնելուն համար գոհունակութեան արտայայտութիւն մը ունենալով: Ըստ երեւոյթին, արձակուած փամփուշտը նշան մըն էր զինեալներուն միջեւ: Ձինեալներու խումբի պատասխանատուն հայրիկին երկու աթոռ բերել տուաւ ներսէն եւ մեզ նստեցուց մուտքին, մինչ իր մարդիկը շատ զգուշութեամբ ներս կը մտնէին: Մեր լսածէն դժուար չէր հետեւցնել ներսը կատարուածը: Կը խուզարկէին «քացա»ներուն (գրադարակներուն), էջադրումի «կայէ»ներուն տակն ու վրան, կը թափէին շարուած սիւնակները, կը պարպէին պահարանները, կը կոխկռտէին հաւաքածոները: Այս տակնուվրայութենէն ետք, թէեւ գէնք չգտան, որովհետեւ գէնք չկար, բայց զարմանալիօրէն չգտան նաեւ թուրը զոր հայրիկը յաջողած էր պահել դուրս գալէ առաջ:

Վերջապէս, յուսահատ դուրս եկան: Պետերնին մեզի հրահանգեց ինքնաշարժ մտնել: Այս պահուն, Արսէն Կիտուրին անակնկալ յայտնութիւնը խմբագրատան անել փողոցին մէջ զարմանք պատճառեց բոլորիս: Յայտնապէս անտեղեակ պատահածէն՝ ան շորորալով կու գար դէպի մեզ առանց նոյնիսկ նկատելու զինեալներուն ներկայութիւնը: Այսքան անշուշտ հայեցողութենէ զարմացած եւ իրենց ատրճանակները մասամբ պահած՝ անոնք զինք դիմաւորեցին եւ ուղեկցեցան մինչեւ խմբագրատան դուռը եւ ուղեցին խուզարկել զինք: Այս պահուն է որ ան անդրադարձաւ վիճակին: Խիզարկօրէն ընդդիմանալով զինք խուզարկել փորձողներուն, գրպանէն հանեց եւ անոնց ցոյց տուաւ գրիչը՝ ըսելով որ ասիկա է իր գէնքը: Իրեն եւ հայրիկին արտօնեցին մտնել խմբագրատուն, իսկ զիս հրեցին դէպի Citroen-ին հակառակ ուղղութեամբ բացուող դուռը: Այն ինչ որ պատահեցաւ ճիշդ այդ պահուն՝ կը նմանէր երկնառաք յանկարծասան անձրեւին, որ կը մարէ չարաղէտ հրդեհը:

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԱԶԱՏԱՐԱՐՍ ԵՂԱԻ

Արդարեւ, անել փողոցին մէջ յայտնուեցաւ լիբանանեան բանակի հրասայլ մը, որ իր թնդանօթին փողը աստիճանաբար դարձուց մեր ուղղութեամբ եւ մօտեցաւ՝ սմքեցնելով զինեալները: Շուարած էինք բոլորս: Ես՝ ուրախութենէս, իսկ զինեալները՝ իրենց ապիկարութենէն: Անդունդը ինկած մարդուն առջեւ՝ երկինքէն իջած փրկարար չուան մը ըլլար կարծես այդ հրասայլը: Դժոխքի ճամբէն ետ դարձ կատարող մարդու ուրախութիւնս կրկնապատկուեցաւ երբ նշմարեցի որ հրասայլին հետեւող զինուորական ճիւղին մէջ, մեքենավար զինուորի կողքին նստած սպային ետեւը նստած էր քոյրս, Միհրանուշը: Քոյրս տեղէն չչարժեցաւ: Երիտասարդ սպան ոտքը դրաւ գետին եւ դարձաւ քրոջս՝ որ զիս մատնացոյց կ'ընէր: Սպան ձեռքի խարազանով զիս հրաւիրեց իր մօտ: Ձգացի որ փրկուած էի: Ո՛չ հրասայլի թնդանօթին, ո՛չ զինք չըջապատող զինուորներու օգնութեան եւ ո՛չ ալ իր մէջքի ատրճանակին պէտք ունեցաւ նրբակազմ ու խստաքայլ յառաջացող տեղակալը: Ձեռքին խարազանը բաւարար եղաւ բառին իսկական առումով վճռուելու համար զինեալները՝ զգուշացնելով զանոնք միեւնոյն վայրը վերադառնալէ եւ զիս հալածելէ: Լիբանանցի զինուորը երբեք այնքան հիացումիս առարկան չէ եղած: Այն աստիճան հիացած էի որ մտածեցի թէ հայրս զիս փոխանակ լրագրող կամ հասարակական գործիչ դարձնելու մասին մտածելու, ինչո՞ւ չէ մտածած բանակային դարձնել:

Սպան իր զինուորներուն հրահանգեց ճամբան բանալ որպէսզի զինեալները հեռանան: Հեռացան՝ յայտնապէս նուաստացած: Արսէն Կիտուրը, որ հայրիկին հետ խմբագրատան մուտքին կեցած կը հետեւէր եղելութեան, մօտեցաւ երիտասարդ տեղակալին եւ իր գիտցած արաբերէնով սկսաւ ներբողել լիբանանեան բանակը: Սպան՝ պարտականութիւնը կատարած մարդու գոհունակութեան ժպիտով մը մտիկ ընելէ ետք բանակին ուղղուած դրուատալի խօսքերը, թելադրեց փակել խմբագրատան դուռը եւ տուն վերադառնալ: Ապա, ան հրաւիրեց զիս բարձրանալ ճիւղը, քրոջս կողքին: Հրասայլին ուղեկցողութեամբ զիս տարին տուն, իսկ քոյրս մնաց ճիւղին մէջ՝ երթալու համար աշխատանքի, հեռաձայնի սպասարկութեան կեդրոնատեղին, Ռիատ Սոլճ հրապարակին մօտ:

## ՀԱՅՐՍ ԱԶՔԻՆ ԼՈՅՍԸ ԿՈՐՄՆՅՈՒՑԱԾ ԷՐ, ԲԱՅՑ ՈՉ ՄՏՔԻՆ ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆԸ

Հայրս սովորական «ագատեցա՞ր»ով մը դիմաւորեց զիս եւ ըսաւ, թէ վախնալու պատճառ ունենալու չէի՝ սկսեալ այն պահէն երբ հեռաձայնեցի իրեն: Բացատրեց թէ հետո աւելի երկար խօսիլ չէ ուզած ժամավաճառ չըլլալու համար: Ըսաւ թէ հեռաձայնը հագիւ երեսիս գոցած, հեռաձայնած է քրոջս, որ հեռաձայնի սպասարկութեան պաշտօնեայ ըլլալով՝ բանակի հոգատար հսկողութեամբ կ'երթեկէր գործի, եւ անոր տեղեկացուցած է եղելութիւնը: Քոյրս իր կարգին դիմած է սպասարկութեան

կեդրոնի անվտանգութեան պատասխանատու հրամանատարին, խնդրելով անոր օգնութիւնը: Հրամանատարը հրահանգած է միաւորի մը՝ ուղեկցել քրոջս...: Այս բոլորը մտքիս ծայրէն անգամ չէր անցած այն պահուն երբ սարսափահար կը հեռաձայնէի հօրս, որ կորսնցուցած էր իր աչքին լոյսը, բայց, փաստօրէն, ո՛չ մտքին պայծառութիւնը, որուն կը պարտէի կեանքս:

## ԿՐԱԿԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆՍ ՍՏԱՅԱԾ ԷԻ

Իբրեւ հայ մամուլի զինուորագրեալ, այդ ճամբով նաեւ իբրեւ հասարակական գործիչ, կրակի մկրտութիւնս ստացած էի: Որովհետեւ դէպքին ազդեցութիւնը երկար չտեւեց: Շաբաթ մը ետք վերադարձայ խմբագրատուն՝ աշխատանքս շարունակելու: Եւ շարունակեցի 45 տարիներ անընդմէջ, տարուէ տարի աւելի մեծ սիրով ու հաճոյքով՝ հակառակ բազմաբնոյթ, տնտեսական, ապահովական կամ ներքին դժուարութիւններուն, եւ յաճախ մեծ գոհողութիւններու եւ երբեմն մինչեւ իսկ կեանքի գնով: Այդ զինը անպայման արտաքին սպառնալիքներու հետեւանք չեղաւ, այլ երբեմն ֆիզիքական առողջութեան քայքայումի եւ երբեմն ալ ներ-կուսակցական խնդիրներու եւ աթոռակոխի: Այդ զինը ինծի հետ վճարեցին գործընկերներէս շատեր, սկսեալ համեստ բայց նուիրեալ ցրուիչներէն, վարչական գործավարներէն մինչեւ խմբագիրները:

Հրաչ Քաջարեանց, որ պատանեկութեանս կը սրբագրէր առաջին գրութիւններս, կը սիրէր խմբագիրները գոչել «Հայ Մշակոյթի բեռնակիրները»: Հայ մամուլի հրատարակութեան գործին քիչ թէ շատ իրազեկ մարդիկ ինծի հետ համաձայն պիտի գտնուին որ աւելի արդար պիտի ըլլար «Հայ Մշակոյթի բեռնակիր»ի կոչումը տալ հայ մամուլի բոլոր զինուորագրեալներուն եւ ո՛չ միայն խմբագիրներուն:

Դժբախտաբար, տարուէ տարի նօսրացան այդ «բեռնակիրներուն» շարքերը, որովհետեւ անոնք չարժանացան ո՛չ միայն նիւթական, այլ նաեւ բարոյական արդար գնահատանքի, յաճախ ո՛չ իսկ զիրենք հովանաւորողներու հոգատար ու գործնապաշտ ու շարունակեալ: Ազգային կեանքէն ներս, Եկեղեցուց, Դպրոցին եւ Ակումբին կողքին, յաճախ նաեւ անոնցմէ առաջ ու վեր, մամուլի դերի ու առաքելութեան եւ անոր զինուորագրեալներու մասին կատարուած բանաւոր ու գրաւոր դրուատալի վկայութիւնները իրենց շօշափելի արտայայտութիւնը չունեցան, որովհետեւ զանոնք կատարողներուն մօտ պակսեցաւ մամուլի դերի ու առաքելութեան անփոխարինելիութեան ճշմարիտ գիտակցութիւնը: Անոնց մօտ պակսեցաւ մամուլի մասին իրենց իսկ կատարած վկայութիւններուն հանդէպ այն խոր հաւատքը ու համոզումը եւ մամուլի մարդոցմէ իրենց իսկ ակնկալած նուիրումը, որոնք պատնէշի վրայ պահեցին ու կը շարունակեն պահել Հայ Մամուլին զինուորագրեալները:

Քաղուած՝  
«ՊԱՏՆԷՇԻ ՎՐԱՅ» գիրքէն

**Նոր Տարուայ եւ Ս. ԾՆՈՂԵԱՆ ԻՏԵՎԱՅԻՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԵՒ ԱՊՐԱՆՑԵԼԻ ՍՈՆԵՐՈՒ ԱՌԻՅՈՎ, սրտանց կը շնորհաւորենք մեր բոլոր ազգականները, բարեկամները, միութեանական եւ գաղափարի ընկեր-ընկերուհիները, մաղթելով բոլորին քաջառողջութիւն, խաղաղ, երջանիկ եւ արեւշող օրեր:**  
**Թող գալիք տարին Աստուծոյ յորդառատ օրհնութիւններով լեցուին Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի ողջ հայութեան ընտանիքները:**  
**«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ Ձեզի մեզի մեծ Աւետիս»**

# Խաչիկ եւ Ռոզմերի Ճանոյեան եւ ընտանիք

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.**  
**ԱՌՕ ԵՒ ԱՍՏՐԻՏ ԳԼԻԲԵՃԵԱՆ**

Մեր Զինուորը 2Է ՊԱՐՏՈՒՄԸ



# Համախմբուհինք Հայրենիքի Շուրջ Ամուր Կանքով Եւ Ուժեղ Հաւատքով Կ'երտենք Մեր ճակատագիրը



**ԱՐԺ. Տ. ՏԱԹԵՒ ՔՀՆՅ. ԵՒ ԵՐԷՑԿԻՆ ԱՐԱՔՍԻ  
ԹԱԹՈՒԼԵԱՆ**



# Արամի Ողիսականը...

(Պատմուածք՝Նուիրուած Ղարաբաղեան Պատերազմին) **ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ**

... 2020 թուական, Սեպտեմբեր 27, առաւօտեան ժամը 6-ն է: Զարթուցիչի ձայնն այս անգան կարծես թէ սովորականից աւելի ձայնեղ էր: Արամը ընդոստ շարժումով վեր ելաւ անկողնուց ու ինչ որ անբացատրելի տազնապը սրտում՝մտաւ լողարան: Հագիւ էր բաղնիքի փոքր հեռուստացոյցի պաստառը լուսաւորուել, երբ հնչեց հաղորդավարի յայտարարութիւնը.- Այսօր առաւօտեան ժամը 6-ի մօտերքում պատերազմ է սկսուել Ազերիների եւ Ղարաբաղի միջեւ...

Առանց ծնողներին տեղեակ պահելու, անաղմուկ, ուսապարկն ուսին դուրս եկաւ տնից ու իրեն զցեց օդանաւակայան: Այնտեղից էլ հեռաձայնեց ծնողներին.

- Մայրիկ, ես օդանավակայանից եմ հեռաձայնում, ուղիներ եմ փնտրում Ղարաբաղ հասնելու համար:

- Ի՞նչ Ղարաբաղ, ինչ բան...

- Դուք քնած էիք մայրիկ ու լուր չունէք, որ պատերազմ է սկսուել Ղարաբաղի եւ Ազերիների միջեւ: Երեւան հասնելուս պէս կը հեռաձայնեմ:

\* \* \*

...Զորորդ օրն առաւօտեան, բազմաթիւ դժուարութիւններ յաղթահարելով, Արամը երկրից-երկիր, քաղաքից-քաղաք թռչելով, մի քանի հազար տոլար քամուն տալով, վերջապէս իրեն զգաց հայրենի հողի վրայ: Զուարթնոց օդակայանում ասեղ զցելու տեղ չկար: Արամի համար դժուար չ'եղաւ անմիջապէս դուրս պրծնել այդ խաժամուղից, ինքն էր ու իր ուսապարկը:

- Հայրիկ ջան քչի հա՛, ինչքան արագ՝ էնքան լաւ, վրես հալ չկայ, քչի Կոմիտաս, Շիրվանզադէ,- վարորդի կողքին տեղաւորուելուց յետոյ ասաց Արամը:

- Թէ՛ շատ ես շտապում կարամ շուռ գամ, հլա աերոպորտի տարածքում ենք, ընտեղ լաւ ավտոներ կան՝ Լեքսուս, Բի-էՄ, Մերսեդէս..., հաւատայ չեմ նեղենայ:

- Չէ, չէ՛, հայրիկ ջան, ինձ սխալ մի հասկանայ, ես երեք-չորս օրուայ ընթացքում հագիւ եմ Ամերիկայից Երեւան հասել, ահաւոր հոգնած եմ, անքուն եմ, անլվայ:

- Ես՛, քոռանամ ես տղայ ջան, էդ ինչի՞ ես էս նեղ վախտը Հայաստան էկէ, չըլնի՞ Ղարաբաղ ես գնալու...

- Հա՛, ճիշդ էլ հասկացար, գնալու եմ: Հսօր մի լաւ կը հանգստանամ մեր բնակարանում, առաւօտեան կը մեկնեմ:

Արամի առաջին գործն եղաւ անմիջապէս կապուել Լոս Անջելեսի ծնողների եւ Երեւանի տատ ու պապի հետ:

- Այ տղայ՛, էս ի՞նչ ես անում..., կոտորուեցինք է՛, բա դու խիղճ ունե՞ս, մերդ քանի օր է քունդ-դադար չուրի...

- Պապի ջան, մի նեղանայ, երեք օր ու գիշեր, ոնց որ ասում են՝ «օտար, ամալի ճամփեքի վրայ» եմ եղել, տարբեր երկրների օդանավակայաններում, մինչեւ կարողացել եմ Երեւան հասնել: Տեսայ, ինչպէս միշտ՝ սառնարանը լցրել ես: Բայց ես այստեղ չեմ մնալու, առաւօտեան մեկնելու եմ Ղարաբաղ:

- Ի՞նչ..., հօ դու չե՞ս գժուել...

- Չէ, չէ՛ պապի ջան, չեմ գժուել, գնալու եմ մեր ջահելների օգնելու:

Այստեղ Արտաշէս պապը մի քանի վայրկեան լռելուց յետոյ ասաց.

- Գիտեմ տղաս, որ կը գնաս, էն պապդ էլ էր քեզ նման ազգասեր ու յամառ իր որոշումների մէջ, գնա՛ բալես, գնա՛..., երանի բոլորը քեզ նման վարուէին...

\* \* \*

... Երեւանի կայարանամերձ հրապարակում բազմաթիւ մեծ ու փոքր մեքենաներ, բեռնաւորուած տարատեսակ ապրանքներով, շարասիւն կազմած, ուղեւորուում էին դէպի Արցախ: Արամի համար դժուար չ'եղաւ դրանցից մէկի վարորդի կողքին տեղաւորուել Ստեփանակերտ հասնելու համար: Ճանապարհը երկար էր ու հոգնեցուցիչ: Ժամեր տեւող խցանման պատճառով, կէսգիշերն անց էր, երբ հասաւ վերջնակէտին: Սրան-նրան հարցուփորձ անելով գտաւ կամաւորները հաւաքագրման կենտրոնը:

- Հա՛..., լաւ էս արել, որ եկել ես տղայ ջան, էն էլ Ամերիկայից,- ասաց կապիտանը,- դու բանակում ծառայե՞լ ես, գէնք բռնել գիտե՞ս...:

- Չէ, ոչ, չեմ ծառայել, գէնք էլ չեմ բռնել եւ չեմ ուզում բռնել...

- Էդ ո՞նց, բա խի՞ ես եկել այ տղա..., էս տղերքին տեսնո՞ւմ ես,- ցոյց տալով շարքի կանգնած պատանիներին,- հարցրեց կապիտանը,- նրանք էլ գէնք չեն բռնել, բայց եկել են կրակել սովորելու, որպէսզի ճակատ մեկնեն:

- Ես եկել եմ թիկունքում ծառայելու, ինչ է այնտեղ գործ չկա՞

անելու, ես ալբերգիա ունեմ գէնքի նկատմամբ եւ..., եւ յետոյ..., ես մարդ չեմ կարող սպանել...:

Արամի այս վերջին նախադասութեան վրայ մի ահաւոր հռհռոց սկսուեց կամաւորների շարքում:

- Լռութիւ՛ն,- սաստեց կապիտանը կամաւորների խմբին ու, ուշադիր նայելով Արամի աչքերի մէջ, համոզուեց, որ այդ փխրուն երիտասարդը, իրոք գէնք բռնել չի կարող: - Իսկ դու մեքենայ վարել գիտե՞ս: Անունդ ի՞նչ է:

- Արամ է անունս, Արամ, ցանկացած մեքենայ կարող եմ վարել, նոյնիսկ խոշոր բեռնատար մեքենայ:

Այս լսելուն պէս կապիտանը գրպանից հանեց բջջայինը եւ հեռաձայնեց.

- Լենդրուշ, քեզ մօտ եմ ուղարկում Ամերիկայից եկած մի երիտասարդ կամաւորի, որը լաւ, փորձուած վարորդ է, անունը Արամ է, կարող ես օգտագործել:-

- Դու չե՞ գրուզաւիկ (ռուսերէն է,- բեռնատար) մեքենայ քչե՞լ ես տղայ ջան,- սա առաջին հարցն էր, որ ցածր կարգի ուսադիրներով գինուորակներ հարցրեց Արամին:

- Այո՞, վարել եմ, ուզում էք ասել շարժիչի ոչ ավտոմատ փոխանցումով մեքենայ, այդպէս չէ՞...

- Շատ շուտ էլ հասկացար տղայ ջան, ձեզ մօտ, Ամերիկայում սովորաբար շարժիչի փոխանցումը ավտոմատ է:

- Ճիշդ է, բայց Երեւանի մեր մեքենան ավտոմատ փոխանցումով չէ:

- Ես՛, էդ ո՞նց..., Երեւանում հիմա ամէնը ավտոմատ շարժիչի փոխանցումով մեքենաներ են քշում,- կծու հեզանք դնելով իր խօսքի մէջ ասաց գինուորակներ: Բայց, բայց մի բան չհասկացա տղայ ջան, դու Ամերիկայից չե՞ս, ի՞նչ Երեւանի մասին է խօսքը, ի՞նչ մեքենայ...:

- Մենք Երեւանում էլ հօրական, պապենական տուն ունենք ու նաեւ աւելի քան 70 տարուայ մեքենայ: Ձեր իմացած ռուսական Պոբեդան է, աբողջովին թարմ վիճակում:

- Լաւ, երիտասարդ, ամէն ինչ հասկացայ: Հիմա ինձ լսիր: Ներքեւում, փողոցի շրջադարձին երեք գրուզաւիկ մեքենայ կայ: Լուսաբացի առաջին իսկ րոպեներին դրանք այստեղի մեր բնակիչներով լեցուն մեկնելու են Լենինական: Մի երկու ժամից արդէն մարդիկ իրենց ճամպրուկներով, չուլ ու փալասով կը հաւաքուեն այնտեղ: Գնա՞ եւ զբաղեցրու որ մեքենան որ կը հաւանես:

... Հլու, հնազանդ, Արամը ենթարկուեց հրամանին: Բաւական ցրտոտ էր եղանակը: Մի քանի վայրկեան աշխատեցրեց շարժիչը, որի արդիւնքում դէմքին շոյող տաք օդը հեն ա, հեն ա իրեն նետելու էր Քնի Աստուած Մորփեոսի գիրկը: Սակայն Արամի միտքը արթուն էր, գիտէր, որ քնով տարուելով՝ կարող էր այլեւս չ«արթնանալ»: Ուստի անջատեց ջեռուցիչը եւ ընկաւ մտքերի մէջ, ու քիչ անց քունը տարաւ:

- Արամ ջան, խպերս, քունդ տարել ա հա՛,- բացելով մեքենայի դուռը, մտերմաբար ասաց Լենդրուշը: Էն երկու մեքենաներն արդէն լիքն են, էս ժողովուրդն էլ քեզ ա սպասում, դէ՛..., վեր արի տեսնա՞ք ինչ ենք անում:

Մի տեսակ ամոթահար, Արամը վար ցատկեց մեքենայից ու աչքերը տրորելով սկսեց շուրջը տնտղել: Առաջինը, որ աչքին կաւա սպիտակահեր, փողկապաւոր պարոնն էր եւ իր կողքին կանգնած 30-ին բարեւ ասող բաւականին զեղադէմ ու ճաշակով հագու-կապը տեղին կինը:

- Դուք երկուսդ խնդրեմ իմ՝ վարորդի կողքին տեղաւորուէք, ճամպրուկներն ու բողջա-մողջան, չուլն ու փալասը դրէք կուզովի (ռուսերէն է՝ թափք) մէջ:

- Այս հրահանգը լսելուն պէս, անծանօթ պարոնը շուռ եկաւ դէպի մեր հերոսը ու սպանիչ հայեացքը ուղղելով Արամին ասաց.

- Տղայ ջան, կարծեմ Արամ է անունդ, էդ ո՞ւմ տեղն ես դրել քեզ, ինչո՞ւ ես վիրաւորում մարդկանց..., ի՞նչ չուլ ու փալաս այ տղայ՛, դու գիտե՞ս թէ մարդիկ ի՞նչ յիշատակներ են դրել դրանց մէջ, էլ ալբոմներ, նկարներ, դարերի միջով իրենց հասած ընտանեկան յիշատակներ, մասունքներ:

Առանց պատասխանելու դիտողութեանը, Արամը վերցրեց երկուսի ճամպրուկները ու խնամքով տեղաւորեց թափ-քի մէջ: Մի կէս ժամուայ ընթացքում տարհանուող ընտանիքներով լի մեքենաների շարասիւնը բռնեց Հայաստան-Լենինական ուղին:

Երկար ժամանակ լուռ էին երեքն էլ: Շարասեան դանդաղ ընթացքը, տեղ-տեղ ժամեր տեւող խցանումը, անթի ու ու ծարաւ լինելը

▶▶▶

**ՄԵՐ ԶԻՆՈՒՄԸ ԶԷ ՊԱՐՏՈՒՄԸ**

**ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ.**

**ՌՈՒՔԷՆ ԵՒ ՇՈՂԻԿ ԵԱՂՍՉԵԱՆ**



# Արամի Ողիսականը...

յուսահատութիւն էր առաջ բերում մարդկանց հոգիներում:

- Ի՞նչ է, այսպէս լուր ես անցնելու այս տանջալից ժամերը, հը՛, տղաներ, դէ՛ խօսէ՛ք...

- Ի՞նչ իմանամ աղջիկս, երեւում է երիտասարդ պարոնը նեղացել է իմ դիտողութեան համար:

- Ոչ պարոն, չեմ նեղացել, այն ամէնը ինչ դուք ասացիք միանգամայն ճիշդ է: Ի՞նչ է, ես չգիտեմ, թէ՛ ինչեր կան մամիկների, տատիկների խնամքով փաթաթուած կապոցների մէջ: Դուք պէտք չունէիք բոլորի ներկայութեամբ ինձ դիտողութիւն անելու, մանաւանդ որ ես ինքնակամ, առանց ծնողներիս յայտնելու, գործ-բան թողած, մեծագոյն տառապանքների եւ նիւթական շօշափելի գոհողութիւնների գնով Լոս Անջելէսից եկել հասել եմ այստեղ՝ գորաւիզ լինելու իմ ժողովրդին:

Առանց պատասխանի սպասելու, Արամը կանգեցրեց մեքենան եւ իջնելով նրանից, նշան արեց, որպէսզի միւս մեքենաներն էլ կանգնեն.

- Այստեղ, քիչ վարը գետակ կայ ու մի լաւ ճաշարան: Թող ժողովուրդը մի քիչ հանգստանայ, իր կարիքները հոգայ, որից յետոյ կը շարունակենք տառապանքի ուղիներով հասնել մեր նպատակին:

- Սպասի՛ր, սպասի՛ր տղաս, ինչ ասացի՞ր...», «Տառապանքի ուղիներով...», - ոչ մի բան չ'եղածի պէս հարցրեց անծանօթ պարոնը:

- Այո, իսկ ի՞նչ սխալ բան կար ասածիս մէջ յարգելի պարոն, գուցէ կ'ասէ՞ք Ձեր անունը:

- Անունս վահրամ Չիբուխչեան է, չէ, չէ՛ տղաս, սխալ բան չ'ասացիր, պարզապէս ինձ հետաքրքիր է իմանալ, թէ՛ ո՞րտեղից է քեզ յայտնի «Տառապանքի ուղիներով...» արտայայտութիւնը:

- Քիչ միչ կարող եմ էլի պարոն Չիբուխչեան, եւ յետոյ Երեւանի մեր տանը մեծ գրադարան ունենք, հօրս կողմի պապս, որին շատ աղոտ եմ յիշում, գրականութեան մեծ սիրահար էր, մեր գրադարանում կայ վահրամ Ալազանի «Տառապանքի ուղիներով...» յուշագրութիւնների ժողովածուն, այդտեղից էլ յիշողութեանս մէջ մնացել է այդ անուանումը:

- Ապրես տղաս, ուրեմն դու էլ ես գրականութիւն սիրում հա՞ւ...: Ես Ստեփանակերտի համալսարանի սովետահայ գրականութեան դասախօսներից եմ: Բա չես հարցնո՞ւմ թէ՛ ով է այս գեղադէմ օրիորդը, որի անունն է Նուշիկ, - գգալի նրբութիւն ու թելադրիչ շեշտ դնելով հարցի մէջ՝ հարցրեց գրականագէտը:

- Դէ՛ լաւ էլի պապս, դրա ի՞նչ ժամանակն է... Արամը այնքան պառասխանատու յանձնառութիւն է վերցրել իր ուսերին, որ ժամանակ չունի աջ ու ձախ նայելու, - փոքրինչ խայթող շեշտ դնելով խօսքի մէջ՝ նկատել տուեց օրիորդը:

- Բնաւ էլ այդպէս չէ օրիորդ, չեմ ուզում հայրիկիդ մօտ հաճոյախօսութիւն անել, դա ինձ վախել չէ, սակայն չեմ կարող թաքցնել, որ առաջին իսկ վայրկեանից եմ նկատել քեզ ու երանի տուել այն տղամարդուն, որը քո ընկերն է: Այնպէս որ, բնաւ էլ պատահական չէ, որ ես Ձեզ ընտրեցի իմ կողքին տեղաւորել...:

... Չափազանց երկար ու հոգնեցուցիչ ուղեւորութիւնը ի լրումին հասաւ կէս-գիշերուայ մօտերքին: Լենինականի Աճեմեանի անուան թատրոնի լուսաւորուած հրապարակում եռուգեռ էր: Ստեփանակերտից տարհանուած ժողովրդին տեղաւորող յանձնախումբը տենդագինս շարժման մէջ էր:

- Ապրես տղայ ջան, ողջ առողջ տեղ ես հասցրել էս մեր ժողովրդին: Դու կարող ես քեզ ազատ գգալ, - ասաց յանձնախումբի ներկայացուցիչը, - բայց խորհուրդ չեմ տալիս էս գիշերով ետ վերադառնալ Ղարաբաղ: Մի կերպ գիշերն անցկացրու, առաւօտեան կը մեկնես:

- Չէ՛, ի՞նչ է քեզ ասում պարոն, ես գնալու եմ Երեւան, մենք ազատ բնակարան ունենք այնտեղ:

- Ի՞նչպէս թէ՛ ազատ բնակարան, դու Երեւանից չե՞ս...

- Ոչ՛, պարոն, ես Ամերիկայից եմ, եկել եմ օգնելու մեր ժողովրդին:

- Դէ՛, էդպէս ասա էլի տնաշէն: Ուրեմն խնդրանք եւ պատերազմի օրէնքով հրաման: Քեզ հետ Երեւան ես տանում քո բերած ժողովրդից գոնէ երկու ընտանիքի: Տեսնում ես, թէ՛ որքա՞ն նեղութեան մէջ ենք: Հը՛, ի՞նչ էս ասում ամերիկացի մեր հայրենակից:

- Լսում եմ ընկեր հրամանատար, - կատակի տալով ու պատուի կանգնելով ասաց Արամը ու շրջուելով մերոնց ասաց. - Դէ՛, Նուշիկ, քեզ տեսնեմ, հայրիկի հետ գրաւէ՞ք ձեր տեղերը, գնում ենք Երեւան, մեր տուն:

Մեքենայի թափքում տեղաւորուեց չորս հոգանոց մի այլ ընտանիք:

- Դէ՛, ժողովուրդ, պատմէ՞ք տեսնեմ երկու ժամ ունենք գրոցի համար: Նուշիկ, դո՞ւ ինչ ես անում, ընտանիք ունե՞ս-չունե՞ս, ո՞ւր է Ձեր մայրիկը:

Արամի այս հարցի վրայ մի ճնշող լուրթիւն տիրեց, որից յետոյ առաջին խօսողը պրոֆեսորն էր:

- Նուշիկն աշխատում էր ինձ հետ, համալսարանում: Նա զբաղւում է ժամանա-կակից սփիւռ-քահայ գրականութեամբ: Աւարտաճառը պոլսահայ գրականութիւնն էր: Ընտանիք չունի: Մի քանի տարի կապուած էր մի սրիկայի հետ, որը, հարսանիքից օրեր առաջ պարզուեց, որ ընտանիք եւ երեխայ ունի Կրասնոդարում: Արդէն 3-4 տարի է ոչ մի տղամարդու երես չի ուզում տեսնել մեր աղջիկը: Իսկ մեր մայրը հոգին աւանդեց երկու տարի առաջ՝ կրծքի քաղցկեղից:

Երկար լուրթիւնից յետոյ սկսեց խօսել մեր հերոսը:

- Ես մասնագիտութեամբ ինժեներ եմ, աւարտել եմ Կալիֆորնիայի համալսարանը ու անմիջապէս տեղաւորուել ամերիկեան խոշոր ընկերութեան մէջ՝ բարձր աշխատավարձով: Հինգ-վեց տարի աշխատելուց յետոյ համոզուեցի, որ կարող եմ սեփական գործ սկսել, նոյնիսկ պատուէրներ ընդունել իմ նախկին աշխատավայրից: Ես տանն եմ աշխատում, ամբողջ օրը համակարգչի առջեւ եմ: Տանը երեքս ենք եւ ամէնքս էլ աշխատում ենք: Հայրս շատ տաղանդաւոր նախագծող է, աշխատում է օդանաւաշինական գործարանում: Մայրս մաթեմատիկայի ուսուցչուհի է: Ամուսնացած քոյր ունեմ: Ինչպէս Նուշիկը, ես էլ հրասթափուած եմ աղջիկներից: Նշանածու կանադայից էր: Նրա մեծահարուստ հայրը ցանկանում էր, որ ես որպէս տնփեսայ գնամ կանադա: Մի քանի անգամ երկուստեք գնալ-գալով չտաքացաւ միջնորդը: Երկու տարի նշանուած մնալուց յետոյ հայրը եկաւ մեր տուն եւ վերադարձրեց շատ թանկարժէք մատանին: Վեց տարի է աղջկայ երես չեմ տեսել: Արդէն 36 տարեկան եմ:

Եւ այսպէս, ասել-խօսելով խումբը հասաւ Երեւան, Արաբիկը թաղամաս: Արամենց բնակարանի երկու հարմարաւէտ ննջասենեակներում տեղաւորուեցին մեր գաղթականները:

- Տաք ջուրը միշտ կայ, սառնարանում էլ պապս լցրել է անհրաժեշտ ուտելիքներով, այնպէս որ Ձեզ զգացէ՛ք ինչպէս ձեր տանը: Դէ՛, ես գնացի:

- Ո՞ւր էք գնում Արամ, - նկատելի անհանգստութեամբ հարցրեց Նուշիկը:

- Մերոնց տուն, պապիս, տատիս մօտ, Նոր Արեշ: Առաւօտեան, Ղարաբաղ գնալուց առաջ կը գամ Ձեզ հրաժեշտ տալու:

Գրեթէ երկու շաբաթ լուր չկար մեր հերոսից: Ամէնքից աւելի անհանգիստը Նուշիկն էր: Օրը մի քանի անգամ փորձում էր բջջայինով կապուել Արամի հետ, բայց անօգուտ: Ամբողջ տան մէջ միայն երկուսով էին, ինքն ու հայրը: Միւս ընտանիքին բարեկամ-ները տարել էին:

Նոյեմբերի 9-ի Ղարաբաղի դաժան պարտութիւնից երկու օր անց, բառի ամենալայն իմաստով, հիւժուած, չարչարուած, աշխարհից խռոված Արամը ոտքը դրեց հայրենի տան դռնից ներս: Նոյնիսկ լոգանք ընդունելու ուժ չունէր խեղճ տղան: Ձերմ ունէր, գրեթէ 39 աստիճան: Նուշիկը կորցրել էր իրեն: Արագօրէն կապուեց Արամի պապի հետ: Վերջինս մէկ ժամ չ'անցած, անհրաժեշտ դեղորայքով ծանրաբեռ հասաւ օգնութեան: Ամէն դէպքում գրեթէ տաս օր տեւեց մինչեւ ապաքինուեց Արամը:

Պապը այդ օրերի ընթացքում մի քանի անգամ գնաց-եկաւ եւ կարելոյն հետեւեց Նուշիկի պահուած քին ու վերջին անգամ երբ երկուսով էին, թոռան ականջին շշնջաց.

- Հիանալի աղջիկ է, աչքը վրան պահիր, աշխատիր քեզնով անել:

Նուշիկի հայրն էլ արդէն վաղուց էր նկատել, որ երկուստեք լուրջ համակրանք կար միմեանց նկատմամբ եւ յօրինովի պատճառներով յաճախ էր բացակայում տնից: Եւ մի օր, երեկոյեան, ընթրիքի պահին դիմեց երիտասարդներին.

- Երեխեք ջան, ես վաղուց եմ նկատել, որ դուք սիրում էք միմեանց, մաքուր, ազնիւ սիրով: Պէտք չունէք որեւէ մէկից թաքցնել Ձեր սէրը: Դուք արդէն հասուն երիտասարդ-ներ էք ու գիտէք ինչ անել: Խօսէ՛ք, ես Ձեզ լսում եմ:

- Հայրիկ, - թոյլ տուէ՛ք Ձեզ այդպէս դիմել, ես առաջին օրից եմ համակրել Նուշիկին: Դուք տեղեակ էլ չէք, որ ես բջջայինով նկարել եմ իրեն եւ ուղարկել Ամերիկա՝ ծնողներին, որոնք աշխարհի չափ ուրախ են, որ ես վերջապէս գտել եմ իմ ուզածին:

- Նուշիկ, աղջիկս դու համաձայն ես ընտանիք կազմել Արամի հետ: Փոքր-ինչ դադարից յետոյ Նուշիկը գլխահակ, գրեթէ շշնջալով ասաց.

- Այո հայրիկ, ես նրան շատ եմ սիրում:

Երկու օր անց, ջահելները պրոֆեսորի հետ, Արամի միւս՝ վաղամեռիկ պապի՝ Կառլէնի Պոբեդա մեքենայով ներկայացան Չապսի գրասենեակ եւ ամուսնութեան վկայականի յայտ ներկայացրին: Այժմ Արամը սպասում է ամերիկեան իշխանութիւնների դրական որոշմանը, որպէսզի կարողանայ իր հարսնացուին իր հետ բերել Ամերիկա: Ապագային, վստահաբար Նուշիկի հայրն էլ նրանց կը միանայ հիւրասէր Ամերիկայում:







**Պայքար Մինչև Վերջնական Արդարութիւն Եւ Ազատութիւն  
Մայր Հողին Վրայ**

**ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ-ՍԱՐԳԻՍ**

**Middle Eastern &  
European Cakes  
Delicious Pastry  
For All Occasions**

**(Glendale, Anaheim & Pasadena)**

**KOLANJIAN BROTHERS**



# ՆԱԼԱՍԱՐԴ - ՆՈՐ ՏԱՐԻ, ԱՄԱՆՈՐ-ՎԱՆԱՏՈՒՐ

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ



սաւոր երթով խմբոււմ Տարօն ու Բագրեւանդ գաւառները սահմանազլխին, սրբազան Արածանի գետի՝ Նպատ լեռան Բագաւանի տաճարու մտնախմբելու Նալասարդ՝ Արամազդ աստուածահօր, Անահիտ դիցամօր, «Ամենաբեր Դից» յիշատակներ: Յոյն պատմիչ Ստրաբոնը վկայել է, ծիսական օրերին ազնուականուհիներ իրենց արգասաւորութիւնը նուիրել սիրեցեալ երիտասարդներին: Նալասարդեան օրերին, Բագաւանի տաճարի հրապարակում, արքան, իշխանները աշխարհական մարդիկ Նալասարդի հանդէս տօնախմբել, աստուածների բազիններին զոհաբերութիւններ կատարել: Գողթան աշխարհի երգիչներ տաղեր ասել, երգեր հնչել, երգե՞ր, որոնց հնչիւնների արձագանգները հասել Գառնի Միհրի լոյսի տաճար, որտեղ արեւային քրմուհիներ ինչքան անուշ երգել այն: Թմբուկ զարկել, փողեր հնչել, փանդիոնների լարերից մեղմանուշ հնչիւններ ծորել: Տաճարի շուրջ բոլորը խարոյկներ էին բացավառոււմ, որոնց բոցերը ճախրոււմ երկինք, գնալու կրակի ու լոյսի աստուած Արային ողջոյնելու, աւետելու նրան իրենց լինելութեան առհաստէան, աւետելու նրան կրակի ու լոյսի խորհուրդի իրենց յաւերժութիւնը: Լեռների լանջերից որսացած երէնների խորոված մսի անուշ բոյրն էր լցուել մեհեանի հրապարակ: Երկու կտորիճ տղաներ, խորոված երէի շամփուրի երկու կողմերից պահած, տարել մատուցել իրենց արքային: Վանատուր աստուծոյ հիւրընկալ խրճիթների սպասաւորները կացարան տրամադրել հեռու վայրերից ժամանածներին, տաճարի բազիններին

Գալղ բարի, Անդորրութիւն լինի Հայոց Աշխարհին, Արմին-հայերին՝ Նահապետի Յաղթանակի Կորով: Կարծեցիք թէ ջնջեցի՞ք դուք մեր հետքերը բոլոր, Խեղդեցի՞ք ձայնը չորս հազարամեայ Հայոց պատմութեան, խելագարներ, Ամէն մի ճամբայ եւ ամէն մի ափ հող՝ Մեր ոտնահետքն է պահոււմ իր վրայ, Հետքը մեր մուրճի՝ իւրաքանչիւր քար, Որ վէպ է, վիպերգ է, հերոսերգութիւն է: Մէջբերոււմ, մամուլում եղած հաղորդումից Ազատ էր Արմինա երկիրը, ազատ էին արմինները: Ի պատիւ Բելի դէմ յաղթանակի օրուան, երկրի աստղագէտներ՝ Հայոց «Բուն Տոմար»-ի, նոր տարեցոյց ստեղծել, որը ըստ Միխիթարեան Միաբանութեան նուիրեալ, քանքարաշատ Ղեւոնդ Ալիշանի, այն պատահած պիտի լինէր ք.ա. 2492 թուականի Օգոստոս 11-ին: Տարեցոյցը արէզակնային եղել, ունեցել 365 օր, բաղկացած 30 օր ունեցող 12 ամիսներից եւ Աւելեաց կոչուած 5-օրեայ տօնական մէկ ամսից: Ըստ Անանիա Շիրակացիի տարուայ ամիսների անունները՝ 1. Նալասարդ, 2. Հոռի, 3. Սահմի, 4. Տրէ, 5. Քաղոց, 6. Արաց, 7. Մեհեկան, 8. Արեգ, 9. Ահեկան, 10. Մարբրի, 11. Մարգաց, 12. Հրոտից, 13. Աւելեաց: Յատուկ անուններով կոչուել էին նաեւ ամսուայ բոլոր օրերը եւ օրուայ բոլոր ժամերը: Միւրեւի ընթերցող, Յուլեան տարեցոյցի՝ 2020 թուականը՝ Հայոց «Բուն Տոմար»-ի 4513 թուականն է հիմա:

Հայկ Նահապետի յաղթանակ, Օգոստոսի 11, նախնիների տարուայ առաջին ամիս՝ Նալասարդ (նալասարդ=նոր Տարի): Ամառ էր, դաշտերում հասունացած ցորեանի հասկերն էին մանգաղում, լցնում կալեր: Եօղունօլուգ շէնի Ամառ թաղի Լագիսեան Պետրոսի որդիք՝ Սարգիս ու Յարութիւնի իրենց լծկան եզերին կապել կամն-ը, այն պտտացրել կալում, նրա տակ գամուած սուր կայծքարերը փշուել հասկերը, այն հաւաքել էին կալի մէջտեղ: Մատներս դողալով գրում այս տողերը, մեր դաշտի կալում, կամնին նստած ցորենի հասկերը կալսել: Յարութիւն, Սարգիս, իրենց Պօղոս հօրեղբօր տղայ Արմենակ՝ կալսուած յարդախառն ցորենը թիակներով իրիկնային գեփիւռին տուել, ցորենն էր բլրացել, դեղին մրեղն էր գնացել ծածկել թգենիները, ձիթենիները, մեր դաշտը ոսկեղէն լոյսով էր փայլում, ցորենը տարել լցրել ամբարներ: Աշխարհի մեծեր, կուռում յաղթանակած մարդկանց հողը, դափնիների ու հոնի լեռան լանջի շէները, հազար ու մի խարդաւանանքներով թշնամուն տուին: Արեւելքի կողմն աշխարհի հեռուից եկած մի ցեղ տիրացաւ Հայոց աշխարհին, նրա արեւելքում մնացած մի կտորի համար կռիւ տուել: Ուրացել էին իրենց ռազմի ու զօրութեան աստուած Վահագնին, ապաշնորհ իշխանութիւն՝ տանուլ տուել իրենց կռիւր: Քարիւղի տէր գինակիր թշնամին՝ թուրքի ու վարձկանների հետ կռիւ եկել մեր երկիր, աշխարհի բազում երկրներից նոր գէնքերի տիրացած, նրա շարքերին 44 օրեր կռիւ տուել, Ռուսը գինադադար պարտադրել:

Նալասարդի տօնահանդէսներ: Աշխարհական Արմին-հայեր, Հայոց զօրք, արքունիք, նախարարական գնդեր, մեհեանների քուրմեր հանդի-



## ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՍԱՆՆՈՒՆՆԵՐ, ՕՐԱՆՈՒՆՆԵՐ

զոհաբերուած կենդանիների եփած միս, նոր բերքի երախայրիքի մրգեր հիւրասիրել, կարգն էր այդպէս: Արմինա-Հայաստան աշխարհում, աստուածների բաշխած բերքի առատութիւն եղել, Յոյն զօրավար Քսէնոֆոն պատմել, որ այնտեղ անմշակ հող էր եղել, իր առաջնորդած զինուորները շատ ուտելուց մահացել: Արմին-Հայ, այդ ինչքան երախտիքի ողի լցրել քու հին աստուածները հոգուդ տաճարների բազիններին, դեռ մինչեւ հիմա էլ քու արարչական երկրիդ լեռների ճամբաներին նման կացարաններ կան... պատսպարելու անցորդներին, փառք լինելութեանդ: Տաճարի քրմապետը այսպէս խօսել.

-Արմինա աշխարհի արքայ, ողջ լեր: Ողջոյն Արմինա երկրի իշխաններին, աշխարհական մարդկանց, Նալասարդի տօն է այսօր՝ Նահապետ Հայկի յաղթանակի, Արամազդ աստուածահօր, ամենաբեր դիցերի, մայր Անահիտ դիցուհու յիշատակութեան տօնն է: Տօն է Նալասարդի, բնութեան ծաղկունքի, Արմին-հայերի Նոր Տարին անձնա-

**CAROUSEL RESTAURANT**

Մեր Զինուորը ԶԲ ՊԱՏՈՒՄ



ՄԱՐԱԶԴ



ՄԱՐՕ ԵՐԿԱՅՆՀԱՐՍԵԱՆ ԱՃԷՄԵԱՆ (Ծնդեալ 1955)

Խոր ցաւով կը գուժենք մեր սիրեցեալ կնոջ, մօր, քրոջ եւ մեծ մօր՝ ՄԱՐՕ ԵՐԿԱՅՆՀԱՐՍԵԱՆ ԱՃԷՄԵԱՆի անսպասելի մահը որ պատահեցաւ Շաբաթ, 19 Դեկտեմբեր 2020ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի 5 Յունուար 2021ին առաւօտեան ժամը 9:30ին Ֆորըսթ Լոնի Հոլիվուտ Հիլզ գերեզմանատան շիրիմին շուրջ բացօթեայ:

- Սգակիրներ՝
- Ամուսինը Հրաչ Աճէմեան
- Դուստրը Տէր եւ Տիկ. Վահէ եւ Սալբի Ռպչեան եւ զաւակունք՝ Շանթ, Արէն եւ Վահան
- Զաւակը Արա Աճէմեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Օհան եւ իվոն Երկայնհարսեան եւ զաւակունք՝ Սոնա եւ Նայիրի
- Եղբայրը Գօգօ Երկայնհարսեան եւ համայն Աճէմեան, Ռպչեան, Առաքելեան, Մելքոնեան, Տէմիրճեան, Պալեան, Տավանթի, Յովհաննէսեան, Քիւրճեան եւ ազգականներ:

Երկրին մէջ տիրող քորոնա ժահրին պատճառաւ կը խնդրուի գործածել դիմակ եւ ապահով հեռաւորութիւն:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ԱՆԺԵԼ ԳԱԶԷՉԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեաններ իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Վահան Գազէզեանին, դուստրերուն Շուշիկին, Զարուկին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրեն Հ.Մ.Մ.ին:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ԱՆԺԵԼ ԳԱԶԷՉԵԱՆԻ մահուան տխուր առիթով Լուիզիանայի Պաթոն Ռուժ քաղաքին ընկերուհի Ազատուհի Մուլթաֆեան իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ամուսնոյն՝ Վահան Գազէզեանին եւ դուստրերուն Շուշիկին, Զարուկին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ կը նուիրէ՝ \$100 Հ.Մ.Մ.ին \$100 «Մասիս»ին

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՀՐԱԶ ԳԻՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Կիլիկեան» Բարեսիրական Միութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր Պրն. Սարգիս Գիրէճեանին: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

Հայ Եկեղեցւոյ Լուսապայծառ Դէմքերէն

Շարունակուած էջ 27-էն

հայրենիք...»:

Զօրքը հանգիստ կը լսէր, ոչ մէկ գանգատ, խօսք կամ արտայայտութիւն:

Հայրենասէր Եպիսկոպոսը յուզուած կը շարունակէ խօսքը. «Հայրենակիցներ, եղբայրներ եւ որդիներ, հին դարերուն, երբ հայոց բանակը պատրասուած էր թշնամու դէմ կռուելու համար, նրա հրահրումները գալիս էին Կաթողիկոսին մօտ, Նրա Աջը համբուրելու եւ օրհնութիւններ անելու: Բայց այս անգամ վտանգն այնքան մեծ է եւ ահաւոր, որ ես Սուրբ Էջմիածնից եկել եմ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գէորգ Ե. Հայրապետին խնդրանքը եւ օրհնութիւնները բերելու եւ ես անձամբ վեհափառի կողմէ ձեր ձեռքը համբուրելով, կը խնդրենք որ փրկէք մեր հայրենիքը, փրկէք ձեր պատիւը, հայի պատիւը», եւ Սրբազանը խօսքը կ'աւարտէ հեկեկալով եւ արտասուելի աչքերով:

Սրբազան Հօր հոգեցունց խօսքերը նոյնպէս հաւաքուած անշարժացած բանակի զինուորները արտասուելու սկսան եւ ամէն ինչ արհամարելով մարտի նետուեցան դէպի առաջ շարժելով:

Կռուի ելան բոլորը՝ երիտասարդ, թէ տարեց, տղամարդ, թէ կին, բոլոր խաւերէն, տարբեր կուսակցութիւններէ մարդիկ, հոգեւորականներ, ֆիտայիներ, Երեւանէն կամ Էջմիածին ապաստան գտած արեւմտահայ գաղթականներ, բոլորը ջոկատներ կազմած նետուեցան պայքարի եւ իրենցմէ շատ մեծ թիւով եւ զէնքով թրքական բանակին ետ շարտեցին մեր Սուրբ հոգերէն:

Այսօր մեր ժողովուրդը կ'ապրի Սարտարապատի կամ Աւարայրի ճակատամարտերուն նմանող օրեր, ուր թուրք եւ ազերի ոհմակներ դարձեալ մահ ու աւեր կը գործեն հայրենի մեր ժողովուրդին եւ հողերուն վրայ:

Ուրախ ենք տեսնելու, որ ներկայիս մեր հոգեւոր պետերը եւ եկեղեցիներու հովիւները մէկական Ն.Ս.Օ.Տ.Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի ոգիով թրծուած, զիշեր-ցերեկ կը գործեն մեր դժբախտացած ժողովուրդի ծով կարիքներուն հասնելու համար:

Մեր ներկայ հոգեւոր հայրերը աղօթքով, սէր եւ համերաշխութիւն յորդորելու կողքին, անոնք բարեբախտաբար մեր ժողովուրդի կողքին եղած են եւ ներկայիս ալ իրենց զօրակցութեամբ եւ օժանդակութիւններով թէ բանակին եւ թէ ժողովուրդին կը հասնին:

Հազար փառք մեր անցեալի եւ ներկայի հայրենասէր եւ ազգասէր կղերականներուն:

Թող անոնց եւ մեր եկեղեցւոյ շուքը եւ ներկայութիւնը անպակաս ըլլան մեր ժողովուրդի վրայէն:

«Միասին Ծնան եւ Միասին Մահացան»

Շարունակուած էջ 28

անպատեհութիւններուն հետ ունի նաեւ առաւելութիւններ: Այս պիտի ըլլայ հայուն ապրելու տեսլականը:

Վահէ եւ Էտկար միասին ծնան եւ միասին մահացան:

Հայրենական այս պատերազմին, մեր հայ տղոց նահատակութիւնը ունի մէկ մեծ եւ կարեւոր պատգամ՝ թէ հայը իր կեանքը պիտի կերտէ ու ապրի զայն միասին:

Վահէին եւ Էտկարին պատգամը: Բայց նաեւ բոլոր նահատակ քաջամարտիկներուն, եթէ մեր սեփական հողին վրայ արդար եւ խաղաղ կեանք մը պիտի կերտենք:

Հայը պարտի իր կեանքը ապրիլ միասին:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* USA \$50.00, \$100.00 (First Class)

\* Canada \$125.00 (Air Mail)

\* Overseas \$250.00 (Air Mail)

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**

**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**

**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**



### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂՈՍԱՔ

«Կիրիլկեան» Բարեսիրական Միութիւնը շուտափոյթ ապաքինում եւ կատարեալ առողջութիւն կը մաղթէ Ընկ. ԹԱԴԻՌՍ ՔԷՕՐՈՂԱՆԱՆԻՆ: Առ այդ \$100 կը նուիրէ Հ.Կ.Բ.Մ.ի կրթաթոշակին:

## Նաւասարդ - Նոր Տարի, Ամանոր-Վանատուր

Շարունակուած էջ 37

Լորոյ «Նոր պտուղների ամենաբեր» բերքի ուրախութեան: Տօն է Նաւասարդի՝ մրգերն են հասունացել, արտերում ցորենի հասկերի ոսկեծուփ հեղեղ հոսում: Նաւասարդ, Նահապետ Հայկի յաղթանակի օր, Արմինա աշխարհում «Նոր Տար»-ի: Ձեր սրտերին խրախճանքի խարոյկներ բռնկեն, աշխարհական տօնախմբութիւն լինի, գինի հոսի տաճարի որմերին ու նրա բացատին: Թմկահարնե՛ր՝ թմբուկ գակէ՛ք, երգիչներ, փողահարներ՝ աստուածների յիշատակութեան տաղեր հնչեցէ՛ք, գինի ըմպէ՛ք, շուրջ պարեր լինեն, քաջերի խաղեր լինեն:

Սպիտակ հագուստներով պարմանուհիների բոլորակ շարքն էր, հանդերում ելած փերիներին նման ելեւէջում, նրանց իրաններին ձիւնի փաթիլներ մաղում: Նրանց շարժումներին նազանքից՝ պարմանների սրտերին ովկիանների անդունդների խռովք փոթորկել: Արքան էր կանգնել, բուն ծափահարում: Պարմաններ էին բացատ ելել: Իրենց վերամբարձ շարժումները աստղեր էին վար բերել, որպէս աստուածների տաճարներից փրցուած ծաղիկներ՝ պարմանուհիներին մեկնել: Թմբուկների զարկերի հետ գետինն էին ուժգին տոփել, կարծէս շարքերով թշնամու դէմ մարտի ելել: Լանջաբաց երկու կտրիճ պարմաններ, դաշոյնները վեր պահած խոյացել բացատ: Արեւ աստուած Միհրի լոյսն էր դաշոյններից փախել, զնացել պարմանուհիների այտերը վառում: Դաշոյններն էին իրար գարկել, Արմինա աշխարհի փափկասուն կանայք երկիւղել... ծիծաղել էին պարմանները: Մարտ վարելու բազում հնարքներից յետոյ գրկախառնուել, Արմինա աշխարհի պարմանուհիների հետ պար բռնել: Վերեւ պարզած թաշկինակները թափահարել, Միհրի լոյսի եօթ գոյներն էին ծաղկել մեհեանի որմերին: Նրա բացատում էին թմկահարները, փողահարները, գողթան երգիչներ, պարում, երգում, թասերով գինի ըմպում, թասերով գինի ցօրում պարմանուհիների վարսերին, ծնրադրել, նրանց հանդերձներից ծորած գինի ըմպել: Արքան, արքունիքը, իշխանները այդ օրը խրախճացել աշխարհական մարդկանց հետ, դիտել տաճարի բացատում Նաւասարդեան խաղերի մրցումներ, արքան դափնի ծառերի ծաղկունքով հիւսուած պսակներով պարզեւտարել յաղթողին: Բազում օրեր խրախճացել, քրմապետը ազդարարել տօնի աւարտը: Նաւասարդ, Արմին-հայերը բազում պարեր տօնախմբել նրա յիշողութիւնը, մի անօրէն մարդու գաւաի, թագաւորի հետ ստիպել մարել այն, այրել ու փլել այն բոլորը, որ կարող էին յիշեցնել նրանց աստուածների իմաստութիւնը: Նրանց տօները վերիմաստաւորուել նոր հաւատքի ուսմունքին: Իզուր եղել վայրի ցեղերի յանդգնութիւնը՝ մարելու արարչական այս մարդկանց ցեղի ոգին, նրանց հին աստուածների յիշողութիւնը: «Վսեմը հիւսիսային ժողովուրդների» այդ ցեղի մարդկանց ոգու կրակը շարունակում է առկայծել:

2021 թուական, Նոր Տարի, Ամանոր: Նախօրեակի իրիկուն, հայոց փոքրացած երկրի շքեղ ոստանի գեղեցիկ հրապարակում հազար-հազար հայեր: Առանց լոյսի պնանքի, տօնածառն է կանգուն: Նրա չորս բոլորը մոմեր-մոմեր վառուում, որ լոյս գնար տիեզերական հեռուների ճամբաներից անցնող վերջին կուռում մարած քաջերի հոգիներին ցօղելու:

Գերմանների երկրին են վերագրում տօնածառի աւանդութեան սկզբնաւորումը: Քրիստոնեայ մարդիկ իրենց տներ բերած եղելի ծառեր զարդարել: Հայոց աշխարհից գերմանների երկիր հալածական եկած պաւլիկեանների ուսմունքին հետեւող՝ քրիստոնէական եկեղեցու բարեփոխիչ, Մարտին Լութերը, առաջին անգամն էր վարուած մոմեր կախել իրենց տան տօնածառին: Ձմեռային մի գիշեր, տուն վերադառնալու ատեն՝ հմայուել եղելու ծառերի կանաչ ոստերի արանքներից շողողացող աստղերի փայլատակումից: Այդ պատկերը իրենց տանը վերակենդանացնելու համար, մի փոքրիկ ծառ էր կանգնեցրել, նրա ճիւղերից կապել վառուող մոմեր: Որոշ երկրներ «Նոր Տարի» տօնախմբում տարբեր ամիսներին ու օրերին, արեւելքի մի շարք երկրներում էլ ծաղկած փոքրիկ ծառեր տուն բերում: Ծառ, հայեր պաշտամունք նուիրել նրան, Արուբանի դիցուհի՝ Հայթ (Հայ) աստուծոյ մայր, պատկերացուել ծառի դալար ճիւղերը ձեռքին, Մայր Անահիտ նաեւ ներկայցուել ծառի ճիւղերի հետ: Տօնածառ, սօսի ծառ, կենաց ծառ, պաշտամունք եղել ծառին, այն պտղաբերութեան խորհրդանիշ եղել, Մուսալեռցիների խրատրեյի շէնի հազար ու աւելի ամեակների կանգուն սօսի-«սուսա» ծառ, որի հովանու տակ տօնահանդէսներ կատարել, ծափ տուել նաեւ լազիսեաններ՝ Սարգիսի, Յարութիւնի, Արմենակի պարերին:

Հռովմի «Պօղոս-Յովհաննէս Երկրորդ» պապն է սկզբաւորել Վատիկանի հրապարակում տօնածառ կանգնեցնելու կարգը: Ըստ նրա՝ այն դարձել Քրիստոսի ծննդեան արարողութեան մի մասը, համարուել Քրիստոսի խորհրդանիշը, դարձել նաեւ մարդկային կեանքի ցնծացման արտայայտութիւն, նրա յարատեւ կանաչը անմեռ կեանքի նշան: Այն համարել՝ «Կեանքի ծառ», յիշեցրել Քրիստոսի պատկերը, փայլփող լոյսերով Քրիստոսի ծնունդը:

2021, Նոր Տարի, Ամանոր, նախօրեակ՝ Դեկտեմբեր 31, հազար-հազար Արմին-հայեր վառ մոմեր վեր պահած, եկել հրապարակ, լոյս տեղացել երկրի հողի ազատութեան կուռում գոհուած քաջ գինուորների հանգած սրտերին: Ոստանի հրապարակը լուռ էր, պայթած հրթիռների լոյսի շեղներ գնացել իրենց ընկած քաջերի հոգիներին ցեղին վիշտը հոսելու, ապիկար մարդիկ չէին կարողացել երկիրը կառավարել, ազգի կուռը ուղորդել: Ամանորի լուռ գանգեր, հրթիռների լուռ հրավառու-

թիւն, լոյսի փաթիլներից երկնակամարում առկայծող լոյս, որտեղից նախնիների ստուերներն էին անցնում: Արմին-հայեր, ցեղի լինելութեան լոյսի ջահերը վեր պահած նոր սերունդներին փոխանցել, այն հասել նաեւ մուսանների լեռների լանջերի շէներ: Այդ քաջ մարդկանց սրտերում հայրենեաց հողի սիրոյ կրակ էր, նախնիների կրակի պաշտամունք: Ամէն Նոր Տարիի նախօրեակին խարոյկ: Գիւղի մայր ճանապարհի շուկայի կեդրոնական հրապարակում վեր էր խոյացել վառելափայտի ու ցախի դէզը: Նոր Տարի, Նաւասարդի նախատանակի իրիկնադէմ, դաբնու ոստերը որպէս ջահեր վեր պարզած, Եօղունօլուգցիները գալիս խմբում խարոյկի բոլորտիքը: Դաբնու ոստեր, այն բերում էին լեռան լանջի «Օմարէն Գիտէյն», դաշտից, որտեղ թշնամու դէմ յաղթանակի թմբուկ զարկել: Շէների պարտէզներում դափնի ծառեր, տեսե՞լ էք դափնի անուշալէտ ծառեր, գարնանը սպիտակ ծաղկում, նման եկեղեցում սպիտակ շապիկ հագած երգեցիկ խմբի աղջիկների: Չուարթ բացականչութիւնների հոնդիւնի հետ, գիւղի աւազն էր վառել խարոյկը: Կարմիր բոցերն էին ժայթքել վերեւ, արեւ աստուած Միհրի դէմքն էր շառագունել, կարմիր ժպտում էր: Հազար-հազար տարիներ Արմին-Հայ արեւորդիների սրտերում չէր մարել իրենց լոյսի, արեւի, կրակի աստուածներ՝ Արայի, Միհրի բնութեան խորհուրդի կրակի ու լոյսի պաշտամունքը: Խելարում էր խարոյկը, պայթում էր խարոյկը, կրակի կարմիր բոցերը բարձրացել վերեւ, նրա լոյսը տանելու արեւորդիների հին աստուածների տաճարներ, աւետելու նրանց՝ իրենց հրաշափառ գոյատեւման առեղծուածը: Խարոյկի բոցերը շիկնել էին պարմանուհիների անուշ դէմքերը, պարմանների սրտերին քաջութեան սխրանքի հուր կաթել: Կրակի բոցերի խոյեանքով արբեցած, բարձր բացականչութիւններով դաբնու ոստերը զարկել խարոյկի բոցերին, կանաչն էր վառուում, պայթում էին սեւ սաթէ պտուղները, հազար-հազար կարմիր աստղիկներ դուրս թռնում խարոյկի բոցերից, պարմանները այն իրենց ափերի վրայ պահած՝ տարել որպէս սիրոյ ծաղիկ նուիրաբերելու պարմանուհիներին: Յնձութիւն էր հրապարակում, արեւորդիները ցատկում էին խարոյկի վրայից, նրա բոլորտիքը շուրջ պար բռնել, նախնիների կրակի փառաբանումն էր: Աշխարհի դաւաղիթ «Մեծեր», մարեցին Մուսա Լեռան շէների Նաւասարդեան խարոյկները, չէ, նման դափնու ոստերով, նման խարոյկ ուրիշ տեղ... չի՛ք:

Ամէն Նոր Տարուայ նախօրեակին, Արեգ ամսուայ Արեգ օրը՝ Մարտի 21-ին, տօնախմբել Ամանոր՝ Նոր Տարին անձնաւորող, «Նոր պտուղների ամենաբեր» եւ ուրախութեան աստուծոյ տօն: Հայ Արիական Միաբանութեան քրմական դասի 6 ներկայացուցիչներ երկու խմբի բաժանուած, ժամը վեցին ծես արել՝ Արեւմտեան Հայաստանի Վանայ ձովի ու Աստղակբերդի տարածքներում: Երկու խմբերը, հայոց Ռագմի ու Ջօրութեան Աստուած Վահագնից խնդրել՝ «ուժ ու կամք» իրենց հայահաւաքի նպատակը իրագործելու: Նոյն օրուայ նոյն ժամին, Հայ արիների ու հեթանոս ազգայնականների մի խումբ՝ Ամանոր-ի տօնախմբութիւնը նշել Նախիջևանի սահմանի տարածքում, մի խումբ էլ Ջաւախքում, 21 կրակ վառել, ազգի համար, Ամանոր աստուծոյ գօրութիւնը խնդրել: Փառաբանել էին հայոց աստուածները, Ամանոր օրուայ խորհուրդի ռագմի ու գօրութեան աստուած Վահագնը: Հայ արիները խորհրդանշանական պար բռնել, ի ցոյց Հայ աստուածների, որ հայի թուրը պատեանում չէ, այն ի գօրու է շարունակել իրենց կուռը:

2021 Նոր Տարի, Ամանոր, Երեւանի արիները ու հեթանոս ազգայնականները քրմապետ Արմէն Աւետիսեանի գաւաիները, առաւօտեան ծէգին եղել մայր ոստանի Վահագնի արձանի մօտ, երգել՝ «Վահագնի Ծնունդը»: Երեկոյան, Հայ արիների տներում Ամանորի խնձոյք եղել: Մարտ ամիս 21, գարուն, կեանքի ու բնութեան զարթօնքի ծաղկունք, Արմին-հայերի նախնիներ նշել Վահագն Աստուծոյ տօնը, ուժ ու գօրութիւն խմդրել: Հայոց աշխարհի փոքրիկ մի մասում մոռացել Վահագնին, իրենց նախնիներին, կուռ եղել, գէնք վայր դրել: Առաջին անգամ տօնածառ առանց լոյսի, հրապարակում կանգնած Արմին-հայերի լուռ ցաւ, աշխարհը ինչպէ՛ս կը լինի տասը-քսան տարիներ յետոյ ... : Արմին-հայեր, ձեր անչափ սիրուած խրմեան պապիկը յորդորել՝ տուն վերադարձին հագուստի փոխարէն գէնք նուէր բերել:

Ամանոր-Վանատուր «Նոր Տարի»-ն անձնաւորող աստուածներ էին, միասին տօնախմբել նրանց պաշտամունքը: Վանատուր աստուած, հիւրընկալութեան, պանդուխտներին, Արմինա երկրով անցնող օտար ճամբորդներին օթեւան պարգեւելու հովանաւոր, արժանացել համաժողովրդական սիրոյ: Արտաշէսեան թագաւորական տոհմից Տիգրան VI-ըրը իր եղբայր Մածան քրմապետի Բագաւանի գերեզմանի կողքին սրբավայր կառուցել, անցորդները կերակրել տեղում գոհաբերող կենդանիների ուտեստով, այնտեղ հիւրընկալուել, գիշերել:

Արմին-Հայը հազար-հազար տարիներ քայլում է իր արարման խորհուրդով, իր հոգում անթեղած Նահապետի ոգու հուրը, աւանդաբար իրեն հասած նախնիների յիշատակութեան արժանի բազում քաջ գործերի պատմները, նրանց տիեզերական իմաստութեան աստուածների հաւատքի ճշմարտութիւնը: Բարեպաշտ էին իրենց աստուածները՝ կրակ ու լոյս պարգեւել արմիններին, մայրանալու հրաշքի հէքիաթ պարգեւել իրենց դաշտերին, արտերին, այգիներին, երկնի կապոյտից ընկած Աստղիկ դիցուհու վարդաթերթիկների հազար գոյների գեղեցկութիւն հոսել հարսերի դէմքերին, թշնամու դէմ մղուած մարտերում յաղթանակի ոգի լցրել մարտիկների սրտերին, երկնից ջուր անձրեւել դաշտերին, հողը պաշտելու կրակ վառել իրենց տաճարներում, արքաների հանդէպ սիրոյ հրավառութեան շանթեր տեղացել: Իրենց հոգիների տաճարներում ցեղի արարման հրաշքի լոյսը առկայծելով դարձել յաւերժութիւն:

Նոր Տարի, գալը բարի, Արտաշէս արքայի ըղձանք, ծուխ բարձրանայ իւրաքանիւր հայու տնից, քանդուած ու օտարուած տներում նորէն Նաւասարդի հրավառութեան տօնախմբութիւն լինի՝

«Ո տայր ինձ գծուխն ծխանի եւ գառաւօտն Նաւասարդի, Չվագնէ եզանց եւ գվագնէն եղջերուաց, Մեք փող հարուած եւ թմբկի հարկանեաք, Որպէս օրէն թագաւորաց»:



# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



**Կը Խոնարհինք Արցախի Մեր Նահատակ  
Զինուորներու Յիշատակին Առջեւ**

**ՏՕԲԹ. ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ**  
**Central Diagnostic Imaging**